


ԱՂՕԹԻՔ


ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՌԱՆՋՆԱԿԱՆ

243 91

Ա-49-1








243.

Ա-49

Ա. Ղ. Օթ. Գ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ

MR. HOWARD SAFTLEY



معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۱۷ رجب ۳۰۸ و  
۱۴ شباط ۳۰۶ تاریخی و ۱۰۲۴ نومروی  
رخصتنامه سیله نشر اولئشدر

مصارف امریقان مسیونر شرکتی طرفندن تسویه  
اولئدرق طبع اولئشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՅՅԱՃԵԱՆ

1891

# Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Սերեյի Ընթերցող,

Այս գիրքը կարդալէդ ուռաջ շեղի խօսք մը ունիմ: Եթէ գուհն ոչ թէ լոկ անուհով այլ սրտով Քրիստոնէայ ես, ուրեմն աղօթք կ'ընես և աղօթք ընել կը սիրես, որովհետև աղօթք չընողը Քրիստոսի նման չկրնար ըլլալ: Քրիստոսի աղօթք ընելը շատ անգամ յիշուած է (Մարթ. ԻԶ. 36, Ղա-1. ԺԱ. 4, Յ-15. ԺԷ. , և ըն.): Անգամ մը ամբողջ գեշեր մը անցուց աղօթք ընելով (Ղա-1. Զ. 12). և մեզի պատուէր տուած է որ իւր օրինակին հետեւինք (Մարթ. Ե. 44, Զ. 6, Ղա-1. ԺԲ. 4, Ա. ԹԷ. Ե. 17): Եթէ մեկը Քրիստոսի հոգին չունի, անկա անորը չէ (Հա-1. Բ. 9):

Բայց աղօթք ընելն ի՞նչ է: Ոչ միայն բերնով քանի մը խօսք ըսել, հապա սրտով մեր խնդրուածքը Աստուծոյ յայտնել է (Փեղեղ. Գ. 6): Քրիստոս կ'ըսէ, «Աստ-

92-ԱԶ

~~Հ. Հ. Հ. անկ~~

Ա. Գ.



425-84



ԱՂՕԹՓ  
ՎԱՍՆ ԿԱՅՍԵՐ

Ո՛վ ամէնակալ Տէր, Դու որ երկրիս վրայ բոլոր Գեղ երկրպագուաց հաւասարապէս նոյն հայրախնամ գորովանօք կը նայիս եւ ամէնազօր ձեռամբ կը տնօրինես մարդկային ազգին գործերն, խնդրեմք ի Բէն զի այս Օսմանեան մեծազօր Կայսրութեան Վեհապետին՝ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ԶԱՄԻՏ ԽԱՆԻ երկնային օրհնութիւն, բարձրագոյն բարիք, երկար կեանք եւ յաջողութիւն շնորհելով հանդերձ պարգեւես այն հոգեւոր բարիքներն զորս Դու միայն կրնաս տալ: Որպէս զի մեր սիրեցեալ Վեհապետն ապրի յաւերժական երջանկութեամբ եւ կատարէ Քու սուրբ կամքդ որ է ապահովութիւն, անդորրութիւն եւ իմաստութիւն՝ խնդրեմք ի Բէն, շնորհէ նմա ընդ



միշտ աստուածային պարզեւներդ :  
 Օրհնէ իւր իղձերն ի մասին բարեօք  
 կարգադրելու գործերն իւր բոլոր  
 հպատակաց զորս յանձնած ես Նմա  
 իբր աւանդ, եւ իւր ջանքերն ի մա-  
 սին աղքատներն կերակրելու, եւ  
 արդարութիւն, դաստիարակութիւն  
 եւ վաճառականութիւն ծաւալելու  
 Իւր ընդարձակ պետութեան մէջ :  
 Կ'ազաչեմք զՔեզ, ո՛վ Տէր, օրհնէ  
 Նորա բոլոր նախարարներն եւ պաշ-  
 տօնակալներ որք Իւր հրամանաց  
 ներքեւ իշխանութիւն կը վարեն,  
 որպէս զի արդարութեամբ եւ հա-  
 ւատարմութեամբ կատարեն իւր-  
 եանց պարտականութիւններն առ Քեզ  
 եւ առ վեհապետն մեր : Եւ բոլոր  
 փառք եւ գովութիւն Քեզ, մեր  
 Աստուծոյն, կը վայելն յաւիտեանս  
 յաւիտենից : Ա.մէն :

ای جناب قادر مطلق ! بارکاه الوهیتکه  
 دست کشای تضرع و ابتهال اولان سکنة روی  
 زمین سیاناً مظهر نظر عاطفتک و بتون امور  
 و اداره نوع بشر پیوسته ید قدر تکدر .

سلطنت سنیة عثمانیه نك حکمدار جلیلی  
 ( عبد الحمید خان ثانی ) حضرتلرینه برکات  
 سماویه و نعم عالیہی و توافر عمر و اقبال و  
 تزايد شان و اجلال ایله برابر انجق سنک بخش  
 آیدہ بیلہ جکک بالجمله عطایای روحانیہی  
 احسان ایله .

بو سوکیلی پادشاهمزی سعادت ابدیهیه  
 مظهریتده دائم ایدوب امنیت و سلامت و  
 حکمتدن عبارت اولان ارادات مقدسه کی

اجرا و انفاذه خادم اولسى ايجون على الدوام  
 فيوضات الهيهكه ذات هايونلريني مظهر ايله  
 وكنديسنه وديعه الهيهك اولان بالجمله تبعه  
 ملوكانه لرينه توديع ايتديكك معظمت امورده  
 و ممالك و سيله هايونلرنده انعام فقرا و تعميم  
 عدل ايله نشر معرفت و تزويد تجارت امرنده  
 آمال شاهانه لريني دائما تأييدات سبحانيه كه  
 نائل ايله .

وقوه حكمرانيلرندن اقتباس انوار نفوذ  
 ايدن وكلا ووزراسنك دخى سكا وشوكتلو  
 پادشاهمزه قارشو صدق و خلوصله ايفاي  
 وظيفه موفق بالخير اولميرينه تسهيلات بخش  
 ايله . عز و مجد و حمد و ثنا الى الابد سكا  
 مخصوصدر آمين ثم آمين

էյ ձէնապ ը Գատիր ի մութլազ,  
 պարկեհան ը Ուլուհիյէթինաէ տէսթ  
 քիւշա ի թէզարբու՝ ու իպթիհալ օ-  
 լան սէքէնէ ի բու ի զէմին սիյանէն  
 մազհար ը նազար ը 'աթըֆէթին, ՚լէ  
 պիւթիւն ումուր ՚լէ իտարէ ի նէվ՝ ի  
 պէշէր փէյլէսթէ ի հէտ ի գուարէ-  
 թին տիր :

Սալթանաթ ը Սէնիյէ ի 'Օսմանի-  
 յէնին Հիւքմտար ը ճէլիլի 'ԱՊՏԻԻԼ  
 ՀԱՍԻՏ ԽԱՆ ՍԱՆԻ հազրէթլէրինէ  
 պէրէքեաթ ը սէմավիյէ ՚լէ նի'էմի  
 'ալիյէյի, ՚լէ թէվաֆուր ը 'էօմր ու  
 իպզալ ՚լէ թէզայիւտ ի շան ու էճլալ  
 իլէ պէրապէր անճազ Սէնին պախշ  
 էտէպիլէճէյին պիլ ճիւմլէ 'աթայա ի  
 բուհանիյէյի իհսան էյլէ :

Պու սէվիլիւլիւ Փատիշահնըմըզը  
 սա'ատէթ ի էպէտիյէյէ մազհարիյէթ-  
 տէ տա'իմ էտիպ, էմնիյէթ ՚լէ սէ-  
 լամէթ ՚լէ հիւքմէթտէն 'իպարէթ օլան  
 իրատաթ ը մուգատտէսէնի իճրա ՚լէ  
 ինֆաղա իսատիմ օլմասը իչիւն 'ալ

էտ տէվամ ֆիւլուղամ ը Իլահիյէնէ  
 Ձամ ը Հիւմայունլէրինի մագհար էյ-  
 լէ. վէ քէնտուսինէ վէտի'էի Իլահիյէն  
 օլան պիլ ճիւմէ թէպա'աի Միւլիւ-  
 քեանէլէրինէ թէվաի' էթաիլին մու-  
 'աղզամամ ը ումուրտա վէ մէմալիք ի  
 վէսիլէ ի Հիւմայունլէրինտէ ին'ամը  
 ֆուգարա վէ թա'միւմ ի 'ատլ իլէ  
 նէշր ի մա'րիֆէթ վէ թէղեհա ի թի-  
 ճարէթ էմրինտէ ամալը Շահանէ-  
 լէրինի տա'իմա թէ'յիտամ ը Սիւպ-  
 հանիյէնէ նա'իլ էյլէ :

Վէ դուվվէ ի հիւքմարանիլէրինտէն  
 իգթիպասը էնվարը նուֆուզ էտէն  
 վիւքէլա վէ վիւզէրասընըն տախի  
 Սանա վէ շէվքէթլու Փատիշահըմը-  
 զա գարչու սըտոգ ու խուլուսլէ իֆա-  
 վաղիֆէյէ մուվաֆֆազը պիլ խայր  
 օլմալարընա թէսհիլամ պախշ էյլէ :  
 'Իզզ ու մէճա վէ համա ու սէնա  
 իլ էլ էպէտ Սանա մախսուստըր : Ա-  
 մին, սիւմմէ ամին :

## Ա Ղ Օ Թ Ք

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ

Մաղբանք

- 1 Մեղաւորիս, Տէր, սորվեցուր  
 Բեզի աղօթք ընել .  
 Բու Սուրբ Հոգիդ ինձի խրկէ  
 Ձար սիրաբա նորոգել :
- 2 Ինկած էակ մը ծնունդէս  
 Բեզի դէմ մեղք ըրի .  
 Եւ թէ որ դուն ինձի չօգնես,  
 Հոգիս կը կորսուի :

Ալխարհիս ու Սատանայից դէմ աղօթք :

- 1 Տէր, դուն տուիր մեզի խրատ  
 Որ միշտ աղօթք ընենք .  
 Զի աղօթքով կ'ըլլանք ըզգաստ,  
 Անով մենք կը յաղթենք :

- 2 Արդ ընդունէ զայս մեր մաղթանք,  
Օգնէ քոյդ որդեգրաց .  
Քու փորձուիլդ տուր օրինակ՝  
Յաղթել ամէն չարեաց :
- 3 Դուն յանապատն Ս. Գրոց խօսքով  
Փորձիչը յաղթեցիր,  
Աշխարհս ու դեւը յաղթելով՝  
Աստուած միայն պաշտեցիր :
- 4 Նոյն պատասխան մեզ սորվեցուր,  
Որ աշխարհիս յաղթենք .  
Նոյն զօրութիւն եւ շնորհք մեզ  
տուր,  
Դիւին ալ դէմ զընենք :
- 5 Աշխարհս է մեզ պանդրխտութիւն  
Յաւոց ու փորձութեանց .  
Թէ որ յաղթենք հոս բանսարկուն,  
Դրախտ է մեզ պատրաստուած :
- Ժամանակ աղօթքի :
- 1 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,  
Որ աշխարհէս զիս կը զատէ,

- Որ Հօրըս աթոռին դիմեմ,  
Ու իմ կարօտութիւնս յայտնեմ .  
Երբ ցաւ ու վիշտ վրաս կը տիրէ,  
Հոգիս հանդիստ միշտ կը գտնէ,  
Փորձութենէ ալ կ'ազատի  
Քու հասնելովդ, ժամ աղօթքի :
- 2 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,  
Աղերսըս թեւերովդ տարուի  
Շնորհաց աթոռը նստողին,  
Զլլացողին ձայնն լսողին :  
Իրեն դիմել կը պատուիրէ,  
Շնորհք խնդրել կը հրաւիրէ,  
Հոգերս անոր ձգեմ պիտի,  
Քեզ սպասեմ, ժամ աղօթքի :
- 3 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,  
Մխիթարիչ ըլլաս ինձի,  
Մինչեւ փասդա լեռնէն նայիմ  
Տեսնեմ իմ տունըս երկնային :  
Տկար մարմինս պիտի ձգեմ,  
Տէրօջըս քովը պիտի ելլեմ,  
Ու երթալով երգեմ պիտի,  
" Ժամ աղօթքի, ժամ սիրելի " :

## Աղօթքին զօրութիւնը :

- 1 Աղօթքն է խօսք շատ զօրաւոր,  
 Խորին բաղձանք կտարած սրտի.  
 Ան է մեզի խիստ շահաւոր,  
 Զի Տէրն անով մեզ կ'ընդունի :
- 2 Մարգրիկ անով կեանք կը շնորհան,  
 Աղատութիւն մեղքի ու ժէն.  
 Եւ յաղթելով զըրանց մահուան՝  
 Ուրախութեամբ երկինք կ'ելլեն :
- 3 Անով երկիր, երկինք վերին  
 Մէկզմէկու կը միանան.  
 Զի Հայր Աստուած, Աստուած-  
 որդին  
 Անով կ'իջնան ի մէջ մարդկան :
- 4 Եւ Սուրբ Հոգին մեզ օգնելով,  
 Աղօթքներնիս Տէրն կը լսէ.  
 Յիսուս իր ուխտը յիշելով  
 Ամէն բան մեզ կը պարգեւէ :

5 Յիսուս, ինծի ականջդ դիր,  
 Ես սիրտս առ ի քեզի բոլոր.  
 Դուն որ անդուլ աղօթք ըրիր,  
 Աղօթք ընել ինձ սորվեցուր :

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

## Ա. Գրաբար :

Հայր մեր որ յերկինս, սուրբ եւ  
 զիցի անուն քո : Եկեացէ արքայու-  
 թիւն քո : Եղիցին կամք քո որպէս  
 յերկինս եւ յերկրի : Զհաց մեր հա-  
 նապազորդ տուր մեզ այսօր : Եւ  
 թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ  
 մեր թողումք մերոց պարտապանաց,  
 Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,  
 այլ փրկեա զմեզ ի նարէ : Ղի քո է  
 արքայութիւն եւ զօրութիւն եւ  
 փառք յաւիտեանս : Ամէն :

## Բ. Աւխարհաբար :

Ո՛վ Հայր մեր, որ երկինքն ես,

քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ, քու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս Վրայ: Մեր ամէն աւուր հացը՝ այսօր մեզի տուր. եւ մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն. ու՝ մեզ փորձութեան մի տանիր, հասցա չարէն մեզ ազատէ, ինչու որ քուկդ է թագաւորութիւնը եւ զօրութիւնը ու փառքը յաւիտեանս: Ամէն:

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈՔՔ:

- 1 Ո՛վ Եհովայ, Հայր երկնաւոր, թող քու անունըդ սուրբ ըլլայ. Դուն յաւիտեան ես թագաւոր, Քու թագաւորութիւնըդ գայ:
- 2 Քու անարատ կամքդ ալ բարի Ամէն մարդիկ թող կատարեն. ինչպէս որ ան կը կատարուի Երկնից մէջ սուրբ հրեշտակներէն:

- 3 Մեր հացը տուր մեզ, կաղաչենք, Շնորհէ մեզի դուն թողութիւն, Ո՛վ Հայր, ինչպէս որ կը ներենք Մենք ալ մեր պարտականներուն:
- 4 Մեզ մի տանիր ի փորձութիւն, Այլ ազատէ մեզ, Տէր, չարէն. Զի քուկդ է թագաւորութիւն, եւ զօրութիւն ու փառք: Ամէն:

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈՔՔ:

- 1 Ո՛վ Հայր մեր երկնաւոր, Անունըդ սուրբ ըլլայ. Դուն ես մեծ թագաւոր, Արքայութիւնըդ գայ:
- 2 Քու կամքըդ ալ բարի Մարդիկ թող կատարեն, ինչպէս կը կատարուի Երկնից հրեշտակներէն:
- 3 Չեռքէդ հաց կը խնդրենք. Շնորհէ մեզ թողութիւն:



425-84

И. М. А. МЯСНИКОВА  
УСЛУЖИТЕЛЬНИЦА

Ինչպէս որ կը ներենք  
Մեր պարտականերուն :

4 Մեզ մի տար փորձութիւն ,  
Այլ ազատէ չարէն .  
Քուկդ է արքայութիւնն  
Եւ ոյժն ու փառքն : Ամէն :

Գ. Տաճկերէն :

ای سمواته اولان پدرمز اسمک مقدس  
اولسون . ملکوتک کلسون . ارادتک سمواته  
اولدیفی کبی یر اوزرنده دخی اجرا اولنسون .  
یومی اتمکیزی بزه بوکون ویر و بزه صوچلو  
اولنره باغشلا دیغمز مثللو بزم صوچلرمزی  
باغشلا و بزی اغوايه کنورمه لکن بزی  
شرردن قورتار زیرا ملکوت و قدرت و عزت  
الی الابد سنکدر آمین

Գ. Հայերէն գրով Տաճկերէն :

Էյ սէմավաթտա օլան Փէտէրիմիդ,  
Իսմին մուգատտէս օլսուն : Մէլէքիւ-  
թիւն կէլնին : Դրատէթին սէմավաթ-  
տա օլտորը կիպի եէր իւզէրինտէ  
տախի իճրա օլունսուն : Եէվմի էք-  
մէյիմիդի պիզէ պու կիւն վէր . վէ  
պիզէ սուչու օլանլարա պաղըլլա-  
տըղըմըզ միսիլլիւ : պիզիմ սուչա-  
րըմըզը պաղըլլա . վէ պիզի իլվայա  
կէթիրմէ , լաքին պիզի շէրիրտէն  
դուրթար . զիրա մէլէքիւթ վէ դուտ-  
րէթ վէ իլզէթ իլ էլ էպէտ սէնին  
տիր : Ամին :

Ե. Արաբերէն :

ابانا الذى فى السموات ليتقدس اسمك ليات  
ملكوتك لتكن مشيئتكم كما فى السماء كذلك  
على الارض خبزنا كفافنا اعطنا اليوم واغفر

لنا ذنوبنا كما نغفر نحن ايضا للمذنبين الينا  
ولا تدخلنا في تجربة لكن نجنا من الشرير لان  
لك الملك والقوة و المجد الى الابد آمين

2. Հայերէն գրով Արաբերէն :

Էպէնէ էլլէզի ֆիւ սէմէվաթի, լի  
եէթէգատտէսի իսմիւքէ, լիեէթի  
մէլէքիւթուքէ, լի թէքիւն մէշի"է-  
թիւքէ քէմա ֆիւ սէմա"ի քէզայի-  
քէ 'ալէլ արաի . խուպզէնա քէֆա-  
ֆէնա ա'թինա էլեէվմէ . վաղֆիր լէ-  
նա զունուպէնա քէմա նազֆիրու  
նեանու ալտան լի միւզնիպիյնէ  
լիէյնա . վէլա թուախիւնա ֆի թէճ-  
րիպէթի . լէքին նէճիխնա մին էշէ-  
րիրի, լի էննէ լէք էլ միւլքէ վէլ  
գուվլէթէ վէլ մէճտէ իլ էլ էպէտի .  
Ա.մին :

Է. Անգղիերէն :

Our Father who art in heaven,  
hallowed be thy name. Thy king-  
dom come. Thy will be done in  
earth, as it is in heaven. Give  
us this day our daily bread. And  
forgive us our debts, as we for-  
give our debtors. And lead us  
not into temptation, but deliver  
us from evil. For thine is the  
kingdom, and the power, and  
the glory, for ever. Amen.

ԱՌԱԻՑՏԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

Ընտանեկան աղօթքի ատենը՝ տանը մեծը  
իւր բոլոր ընտանիքը մէկտեղ կանգելով,  
անոնց հետ Սուրբ Գիրքը կարդալու է :

Ո՛վ Տէր Աստուած իմ, առտուանց  
պիտի լսես իմ ձայնս, եւ իմ աղօթքս  
քեզի պիտի ներկայացունես : Դուն,



ո՛վ Տէր, դուն ես որ մեր բոլոր ընդունած օրհնութիւնները կու տաս : Քու ողորմութեամբդ է որ այս օրուան լոյսը կը տեսնենք : Շնորհակալ ենք որ անցած գիշերը մեզի հանգիստ քուն տուիր, եւ մեր քընացած ատենը, քանի որ հազարաւորներ մեռան, զմեզ մահէ եւ հիււանդութենէ եւ ամէն կերպ վտանգներէ ապահով պահեցիր, եւ այս պատեհութիւնը կը շնորհես որ մէկտեղ քու առջեւ երեւնալով եւ քու Սուրբ Գիրքդ կարդալով՝ մեր աղօթքը քեզի մատուցանենք : Ո՛վ Տէր, ինչպէս որ առաւօտեան լոյսը մեր վրայ ծագեցիր, կ'աղաչենք, քու երեսիդ լոյսն ալ պարզելէ մեզի, եւ այսօր քու Սուրբ Հոգւովդ քու ճամբաներուդ մէջ առաջնորդէ զմեզ : Քանի որ մեր ամէն աւուր մարմնաւոր հացը քու ձեռքէդ կ'առնենք՝ որ մեր մարմինները ապրին ու զօրանան, կը խնդրենք որ մեր յաւիտե-

նական կենաց հացն ալ շնորհես, որպէս զի մեր հոգիներն ալ քու շնորհքովդ ապրին ու զօրանան : Մեզի խմաստութիւն եւ շնորհք աւուր որ ամէնքս ամէն բանի մէջ քու կամքդ գիտանք ու կատարենք, որ ուրիշները մեր բարի օրինակը տեսնելով զքեզ փառաւորին :

Աշխարհային զբաղմունքով որչափ զբաղած ալ ըլլանք՝ թող մի տար որ Սատանային որոգայթներուն մէջ իյնալով քեզի դէմ մեզք գործենք, եւ այսպէս մեր եւ ուրիշներուն հոգիները կորսնցունենք : Կը խոստովանինք թէ մինչեւ հիմա մէկ օր մը աւանց մեզրի անցուցած չենք : Ամէն օր սրտով, խօսքով եւ գործքով քեզմէ հեռացած եւ ապստամբած ենք, եւ եթէ դուն մեզի հետ, ոչ թէ մինչեւ հիմա ըրածիդ պէս երկայնատութեամբ ու ողորմութեամբ, հապարդարութեամբ վարուած ըլլայիր, չատնց զմեզ կորսնցուցած էիր,

եւ այս առտու մեր բաժինը դժոխքին տանջանքներուն մէջ պիտի ըլլար: Տէր Աստուած, զմեզ մեղքէ ազատէ ու սրբէ, որ վերջապէս դժոխքէն ալ ազատինք:

Տղէտ ենք, մեղի իմաստութիւն չնորհէ. տկար ենք, զմեզ զօրացուր. մեղաւոր ենք, զմեզ սրբէ, որ ամէն մեղքէ զզուելով սուրբ ըլլանք, ինչպէս որ դուն, ս'վ Աստուած, սուրբ ես, եւ կը պահանջես որ մենք ալ սուրբ ըլլանք: Մանաւանդ կ'աղաչենք, մեղի, ծնողքներուս, իմաստութիւն եւ չնորհք տուր որ մեր զաւկրները քու վախճուիչ մեծցունենք, անոնց՝ ոչ միայն պէտք եղած խրատները տալով, հասպա ամէն բանի մէջ անոնց բարի օրինակ ցուցնելով, որ մեղի հետեւելով՝ քեզի ալ հնազանդած ըլլան: Մեր բոլոր սիրելի ազգականները քու մարմնաւոր եւ հոգեւոր օրհնութիւններովդ օրհնէ, անոնց ամէնն ալ քու ճշմար-

տութեանդ լոյսին մօտեցուր, որ զքեզ սիրեն եւ քու պատուիրանքներդ պահեն: Ամէն մարդոց վրայ քու Սուրբ Հոգիդ առատապէս թափէ, եւ աշխարհքը քու փառքովդ շուտով լեցուի՝ ինչպէս որ ջուրերը ծովը կը լեցունեն:

Այս բոլոր չնորհքները մեր սիրելի Փրկչին անունովը կը խնդրենք, որուն եւ քեզի եւ Սուրբ Հոգւոյդ մեր փրկութեանը պատիւը պիտի տանք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ի՜նչ անվախճան է, Տէր, քու սէրն, Ամէն գիշեր քենէ կու գան Նոր պարգեւներ, եւ առտուներն Ղոխկ կ'իջնին ցօղի նման:

Ամէն գիշեր մեզ կը պահես  
Չտեսնուած վրտանդներէ.  
Եւ առտուանց դուն կը խրկես  
Արեւդ որ մեզ արթնցունէ:

Քեզ անձերնիս կը նուիրենք,  
Գիշեր ցորեկ դուն մեր Տէրն ես.  
Անթիւ շնորհքներ քեզմէ կ'առնենք,  
Փառք յաւիտեանս սլախ տանք քեզ:

## ԱՌԱՒՕՏԵԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

Շնորհակալ ենք քեզմէ, ո՛վ բազմագութ եւ ողորմած Հայր մեր, որ դուն զմեզ այս գիշերուան բոլոր վրտանդներէն եւ նեղութիւններէն ապահով պահելով մեզի այս առաւօտեան լոյսն ալ տեսնել տուիր: Գիտենք որ շատեր երէկ իրիկուն մեզի պէս ողջ առողջ պառկեցան իրենց անկողինը, բայց այս առտուան լոյսը չաեսած՝ մեռան, եւ քու անեղ ատեանիդ առջեւը ներկայացան, ու իրենց յաւիտենական դատապարտութեան վճիռն ընդունեցին: Կան շատեր ալ որ իրիկունը ողջ առողջ էին, ու հիմա հիւանդանալով իրենց անկողիններէն չեն

կրնար ելլել: Շատեր իրենց սիրելի զաւկըներէն դատուեցան, եւ շատեր ալ իրենց ծնողքներէն: Օրհնեալ ըլլայ քու անունդ՝ որ մենք ամէնքս ալ քու ողորմութեամբդ ողջ մնալով, հիմա մեր բոլոր ընտանիքովը քու շնորհաց աթոռիդ ներկայացանք: Դուն եւ միայն դուն էիր՝ որ ապահով պահեցիր զմեզ: Կը խոստովանինք որ շատ անգամ ապերախտ գտնուած ենք քու մեզի ըրած բարերարութիւններդ չնկատելով: Ո՛վ սիրելի Հայր մեր, ներէ մեր մեղքերը, եւ սրբէ ու մաքրէ զմեզ: Օգնէ մեզի որ այս օրս քու կամքիդ համեմատ կեանք անցունենք. օգնէ մեզի որ մենք իրարու եւ մեր բոլոր ընկերներուն հետ սիրով վարուինք: Թող մենք բոլորս քու զաւակներդ ըլլանք, ու զքեզ մեզի բաժին ընտրենք: Մեզ այսօրուան բոլոր վորձութիւններէն պահէ, եւ առաջնորդէ մեզի մեր կենաց բոլոր օրե-

րուն մէջ: Մեր այսօրուան կարօտութիւնները քու կամքիդ համեմատ լեցուր, եւ մեզի այնպիսի սիրտ մը պարգեւէ՛ որ քու ձեռքէդ բոլոր եկածները սիրով ընդունինք: Մեր սիրելի Փրկչին անունովը կը խնդրենք: Ամէն:

ԿԻՐԱԿԻ ԱՌՏՈՒԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ  
ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Աստուած, շնորհակալ ենք որ այս քու սուրբ օրուանդ լոյսը մեզի տեսնել կու տաս, որ մեր բոլոր մարմնաւոր գործերը եւ խորհուրդները մէկդի ընելով եւ մոռնալով՝ կրնանք մեր հոգիներուն փրկութեանը վրայ խորհիլ, եւ քու Սուրբ Գիրքդ կարդալով եւ քեզի երկրպագութիւն ընելով՝ ամբողջ օր մը կըրնանք անցունել: Ո՛վ Տէր, ինչպէս որ այս օրս մեր Փրկիչը գերեզմանէն յարութիւն առաւ, մեզի շնորհք

տուր որ մենք ալ մեր բոլոր սրտով իրեն հաւատալով՝ մեղաց գերեզմանէն յարութիւն առնենք, եւ կենաց նորոգութեան մէջ քալենք: Կը խոստովանինք թէ շատ անգամ այս քու սուրբ օրդ պղծելով քու պատուէրդ զանց ըրած ենք, եւ դիտենք թէ այսօր ալ նոյն մեղքը պիտի գործենք, եթէ դուն մեր հետ չըլլաս եւ մեզի չօգնես: Տէր Աստուած, քու Սուրբ Հոգևովք մեր սիրտերը նորոգէ ու մաքրէ որ քու ճշմարտութիւնդ սիրենք, եւ աւելի հոգեւոր խորհուրդներով ուրախանանք՝ քան թէ որեւիցէ մարմնաւոր զուարճութիւններով, եւ մեզմէ ամէն մէկը կարող ըլլայ ըսելու, թէ "Ո՛րչափ քաղցր է քու խօսքդ իմ քմացս, մեղքէն աւելի անուշ է իմ բերնիս: Իմ սրտիս մէջը պահեցի քու խօսքերդ որ չմեղանչեմ քեզի դէմ": Այս օրս մեզի ամենուս քու շնորհքդ տուր՝ որ մարմնաւոր գործեր չընելէն եւ մարմնա-

ւոր խորհուրդներ չունենալէն ի գատ, մեր բոլոր ժամանակը քու վախովդ անցունենք, քու Սուրբ Դիրքդ կարգալով քեզի երկրպագութիւն ընելով եւ մեր եւ ուրիշներուն փրկութեանը համար աշխատելով: Երբ քու տունդ երթանք, մեզի եւ քու բոլոր ժողովուրդիդ քու սուրբ ներկայութիւնդ շնորհէ, որ անկեղծ սրտով երկրպագութիւն ընենք: Այսօր քու սուրբերուդ բոլոր ժողովներուն մէջ ներկայ դանուէ, անոնց ազօթքը ընդունէ, եւ իրենց յոյսը բոլորովին Բրիստոսի վրայ հաստատէ, որ անով ուրախանան, եւ անկէ շնորհք առնելով ուրիշներուն փրկութեանը համար աշխատին: Ո՛վ Տէր, կ'աղաչինք, շուտով բեր այն երջանիկ օրը, երբ բոլոր աղգերը եւ բոլոր մարդիկ քու տուած հանդստութեան օրդ սուրբ պիտի պահեն, եւ ամէնը Տէր Յիսուս Բրիստոսի հաւատալով բոլորովին քեզի պիտի

հնազանդին: Ասիկա կը խնդրենք քու սիրելի Որդւոյդ անունովը, որուն եւ քեզի եւ կենդանարար Սուրբ Հոգւոյդ փառք պիտի տանք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԱՌԱԻՕՏԵԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ իմ Աստուածս, խոնարհութեամբ քու աթոռիդ կը մօտենամ, որ քու անթիւ պարգևներուդ համար քեզի շնորհակալութիւն մատուցանեմ: Շնորհակալ եմ որ այս գիշեր զիս հանգիստ քնով զօրացուցիր, եւ նորէն քու արեւիդ լոյսը իմ վրաս կը ծագես: Ողորմէ ինձի մեղաւորիս, եւ իմ հոգւոյս վրայ քու երկնային լոյսդ ծագէ՝ որ այսօր քու ճամբաներուդ մէջ քալեմ եւ բոլոր սրտովս քեզի ճառայութիւն ընեմ: Ո՛վ Տէր, ս'ըջափ սքանչելի են ողորմութիւններդ ինձի. իմ պաշտպանս, իմ առաջնորդս եւ իմ Փրկիչս դուն:

միայն դուն ես. ամէն օր զքեզ պիտի փառաբանեմ եւ իմ ազաչանքս քեզի պիտի յայտնեմ: Կ'աղաչեմ, այսօր զիս հիւանդութենէ եւ ամէն վտանգներէ ապահով պահէ, եւ իմ բոլոր գործերուս յաջողութիւն տուր, եւ զիս քու ձեռքովդ բռնէ ու հաստատէ որ չիյնամ ու քեզմէ չմոլորիմ: Իմ հոգւոյս բոլոր թշնամիներէն զիս ազատէ, եւ ինծի սորվեցուր որ քու բոլոր պատուէրներդ պահեմ: Քանի որ իմ մարմնաւոր գործերուս կը հետեւիմ՝ չըլլայ որ զքեզ մոռնամ եւ քեզի դէմ մեղք գործեմ:

Տէր Աստուած, քու Սուրբ Հոգիդ ինծի շնորհէ, եւ իմ բոլոր ճամբաներուս մէջ այսօր ինծի առաջնորդէ, որ ամէն բանի մէջ ուրիշներուն բարի օրինակ ըլլալով զքեզ մարդոց մէջ փառաւորեմ: Մանաւանդ կ'աղաչեմ, իմ բոլոր մարմնաւոր գործերուս եւ առուտուրներուս եւ ուրիշներու հետ իմ ունեցած բոլոր

առնչութիւններուս մէջ ստուծենէ՝ խաբեբայութենէ եւ ամէն կերպ անիրաւութենէ զիս եւ պահէ, որ ամէն մարդոց հետ բոլորովին արգարութեամբ վարուիմ, ուրիշներուն այնպէս ընելով՝ ինչպէս որ կ'ուզեմ որ իրենք ինծի ընեն: Այս բոլոր բաները Տէր Յիսուս Քրիստոսի անուանովը կը խնդրեմ: Ամէն:

Հոգիս, արթընցիր, արեւը դուն տես, ճամբուդ մէջ մտիւր, վաղէ անոր պէս: Ամէն ծուլութիւնդ քեզմէ թօթափէ, եւ անհոգութիւնդ մէկդի արձակէ:

Դուն ալ ասպարէզ ունիս վազելու, Աստուած է որ քեզ իրեն կանչելու Իր ձայնն կ'արձակէ, կը քաջալերէ, եւ ինքն ալ կու գայ մօտ որ քեզ փնտռէ:

Քու առաւօտեան աղօթքդ մատուր, եւ զո՛հ օրհնութեան անկեղծ մօտեցուր, Քանզի կանչուած ես փրկիչ Յիսուսին, Արեւի Հրաւիրուած շնորհաց աթոռին:

Ուխտերըս կ'ուզեմ՝ ո՛վ Տէր, նորոգել,  
Սրտանց կ'որոշեմ՝ քեզի ծառայել.  
Դուն ալ իմ մեղքերս ցօղի պէս ցրուէ,  
Գիտես յանցանքներս, ինձ առաջնորդէ:

Արդ Հօրն եւ Որդւոյն եւ Սուրբ Հոգիին,  
Միայն Աստուծոյն, որմէ կը բղխին  
Բոլոր բարիքներն, թող փառք մատուցուի,  
Եւ օրհնութիւններ՝ յերկնի եւ յերկրի:

### ԱՌԱԻՕՏԵԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՂՕԹՔ

Կը դռնանամ քեզմէ, ո՛վ իմ Աստուածս, որ զիս այս գիշերուան բոլոր նեղութիւններէն պահելով՝ այս առտուան լոյսը ինձի տեսնել տուիր:

Գիտեմ թէ այս գիշեր շատեր շատ նեղութիւններու, վտանգներու եւ վիշտերու պատահեցան: Շատեր զանազան հիւանդութիւններ ունեցան, շատեր մեռան եւ իրենց յաւիտենական բաժինն ընդունեցին, շատեր իրենց բոլոր ակնկալութիւններէն զրկուելով՝ մեռան ու յաւիտենական

դատապարտութեան մատնուեցան. բայց ես քու առատ ողորմութեամբդ այդ բոլոր վտանգներէն ապահով ըլլալով՝ հիմա Տէր Յիսուսի արժանաւորութեանը ապաւինած քու շնորհաց աթոռիդ մօտեցայ: Գիտեմ որ ես այն պատժուողներէն աղէկ ու բարի չէի՝ որ վտանգներէ ազատելով օրհնութիւն կը վայելեմ. եթէ զիս ալ պատժէիր՝ դուն արդար էիր ու արդար պիտի մնայիր, եւ զիս չպատժելդ՝ միայն քու ողորմած եւ բարերար ըլլալուդ համար է:

Դուն, ո՛վ իմ Աստուածս, որ բոլոր սիրտերը կը քննես ու բոլոր գաղտնիքները գիտես, ինձի, խեղճ մեղաւորիս, յայտնէ իմ վիճակս. եթէ ես ալ այս գիշեր մեռած ըլլայի, եթէ այս առտուան արեւը իմ գերեզմանիս վրայ ծագէր, ես հիմա արդեօք ո՞ւր պիտի ըլլայի:

Ո՛վ Տէր, ինչպէս որ այս առտուան լոյսը պարգեւեցիր ինձի, նոյնպէս ալ

քու երկնային լուսովդ լուսաւորէ  
 զիս, որ իմաստութիւն ստանալով  
 իմ հոգեւոր գործերս զգուշութեամբ  
 եւ ջերմեռանդութեամբ տեսնեմ, ու  
 մահուան պատրաստ գտնուիմ: Հի-  
 մա որ ես իմ մարմնաւոր գործիս  
 պիտի երթամ, եւ իմ ընկեր արա-  
 րածներուս հետ զանազան գործեր  
 պիտի ունենամ, օգնէ ինձի որ ամե-  
 նուն հետ սիրով վարուիմ: Օրհնէ  
 զիս որ չըլլայ թէ անոնցմէ մէկը իմ  
 վարմունքէս գայթակղելով կորսու-  
 եան մատնուի: Օգնէ ինձի որ բարի  
 գործեր գործեմ այսօր, այնպէս որ  
 շատեր իմ բարի գործերս տեսնելով  
 քու սուրբ անունդ փառաւորեն: Ուր  
 որ ըլլամ եւ ինչ վիճակի մէջ որ  
 գտնուիմ, դուն իմ քովս ներկայ  
 գտնուելով իմ խորհուրդս քու վրադ  
 եւ իմ մահուան ժամուս եւ դատաս-  
 տանին օրուան վրայ դարձուր, թող  
 այսօր շատ խորհիմ իմ եւ ուրիշնե-  
 րուն հոգիներուն փրկութեանը վրայ:

Քու ամենակարող բազուկիդ հովա-  
 նաւորութեանը տակն առ զիս, որ  
 ինձի չարիք մը կամ վտանգ մը չը-  
 պատահի:

Քու Սուրբ Հոգիդ շնորհէ ինձի,  
 որ այն զիս ամէն մեղքէ, անօրէ-  
 նութենէ եւ անհոգութենէ ազատ  
 պահելով, զիս նեղ ճամբուն մէջ ա-  
 ուջնորդէ: Դուն իմ վերջին օրս  
 զիտես. եթէ ողորմութեան անշար-  
 հիս մէջն անցունելիք վերջին օրս է  
 այս, օրհնէ զիս որ պատրաստ դըտ-  
 նուիմ մեռնելու եւ ուրախութեամբ  
 քու առջեւդ ելլելու, ու սուրբերուն  
 եւ սուրբ հրեշտակներուն հետ քու  
 ամենասուրբ Երրորդութեան անու-  
 նըդ փառաւորելու յաւիտեանս յա-  
 ւիտենից: Ամէն:

Փառք քեզ, Աստուած, Տէր բարերար,  
 Որ պահեցիր զիս այս զիշեր  
 Ամէն տեսակ վտանգներէն,  
 Որք շատերուն պատահեր են:



Անկողնոյս մէջ անկար, անտես  
Ինկեր էի մեռածի պէս,  
Ինձ, տրկարիս, դուն հոգ տարիր,  
Եւ նոր լոյս ալ տեսնել տուիր:

Տէր, այս լոյսին հետ երեսիդ  
Լոյսն ալ շնորհէ քու ծառայիդ.  
Անով հողւոյս մութն ալ մէկզի  
Առ, որ ըլլամ լուսոյ որդի:

Այսօր ալ ինձ առաջնորդէ,  
Ազատ պահէ չարիքներէ.  
Օգնէ ինձ որ բարիք գործեմ,  
Քեզ եւ մարդիկ սրտանց սիրեմ:

ԱՌԱԻՕՏԵԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, դթութեան եւ ողորմու-  
թեան Աստուած, կը գոհանամ քեզ-  
մէ որ, թէեւ դուն անտեսանելի եւ  
ինքզինքդ ծածկող Աստուած ես,  
բայց քու շնորհքներովդ եւ ողոր-  
մութիւններովդ խոնարհ սրտերուն

եւ կոտրած հոգիներուն կը յայտ-  
նուիս: Ես, մեղաւոր ու չարագործ  
ծառայ, կու գամ քեզի այս առանձ-  
նութեանս մէջ այս վստահութիւնով  
որ դուն ծածուկը տեսնող Աստուած  
ես, եւ առանձնութեան մէջ քեզի  
մատուցուած բոլոր պաղատանքները  
կը լսես: Օգնէ ինձի որ ոչ թէ ձայնս  
հապա սիրտս քեզի բարձրացունեմ  
քու հաճութեանդ համեմատ:

Ո՛վ Տէր, ես ողորմելի ու տա-  
ռապեալ մարդ մըն եմ, եւ ընաւ ար-  
ժանի չեմ քուկդ ըսուելու, ինչու  
որ իմ բնական փափաքներս ու հա-  
ճութիւններս բոլորովին քու կամացդ  
հակառակ են: Ի՞նչպէս կրնամ զքեզ  
իմ հայրս կոչել՝ քանի որ որդիական  
պարտաւորութիւններս չեմ կատա-  
րած:

Ո՛րչափ մեծ են քու ողորմութիւն-  
ներդ զոր ինձի պէս մէկուն ցուցը-  
նելու կը հաճիս: Կը գոհանամ քեզմէ  
որ այս գիշեր քու բարկութիւնովդ

իմ վերջս չբերիր: Ո՛րչափ զիւրին էր քեզի ինծի պէս չնչին էակ մը կորսնցունել. բայց դուն, ո՛վ Տէր, մեղաւորին մահը չես ուզեր, եւ անոր համար պահեցիր զիս՝ որ ես այսօր իմ թշուառ վիճակիս վրայ խորհելու նոր պատեհութիւն մըն ալ ունենամ: Օգնէ ինծի որ իմ վրայովս ուղիղ տեսութիւն մը ընելու կարող ըլլամ: Ո՛վ Տէր, ճանչցուր ինծի խաբեբայ սիրտս ինչպէս որ է: Ծնորհէ որ այս օրս ալ ուրիշ օրերու պէս իմ վրայէս պարապ տեղը չանցնի, այլ իմ փրկութեանս ու դարձի գալուստ ուրախալի օրն ըլլայ: Ես զիտեմ որ դուն միայն կարող ես զիս այն երջանիկ ու խաղաղ վիճակին հասցունելու. դուն՝ որ քու մէկ հաւաիկ Որդիդ ինծմէ չխնայեցիր, հօպա զանիկա իմ փրկութեանս համար դառն ու անարգ մահուան մատնեցիր: Ծնորհէ ինծի քու Սուրբ Հոգիդ ալ՝ որ անոր սրբարար շնորհք-

ներովը մաքրուելով, Փրկչիս տուածնեբուզ մէկն ալ ես ըլլամ: Առաջնորդէ ինծի այսօր իմ բոլոր պարտաւորութեանս մէջ: Ծնորհէ որ երբ իմ ամէն օրուան գործերովս զբաղած ըլլամ՝ կարող չըլլայ աշխարհ իմ սրտիս ու Փրկչիս մէջտեղը մըտնելու, հապա երկրիս վրայ երկնային քաղաքացիի մը պէս ապրելով՝ քու անձառելի շնորհքովդ օրէ օր յաւիտենականութեան համար պատրաստուիմ: Օրհնէ իմիններս եւ անոնք քուկդ ըրէ: Օրհնէ իմ կրօնակիցներս եւ իմ հետս հոգեւորապէս առնչութիւն ունեցողները: Ընդարձակէ քու եկեղեցիդ շնորհքով ու թուով, Բոլոր աշխարհ քու զիտութիւնովդ թող լեցուի, ինչպէս որ ծովը ջուրերով լեցուած է: Ընդունէ աղաչանքներս, ներէ յանցանքներս սիրելի Փրկչիս անունովը, որուն եւ քեզի ու Սուրբ Հոգւոյդ կը վայելէ փառք ու պատիւ յաւիտեանս: Ամէն:

Ո՛վ Տէր զթած, որ կը լսես  
 Աղօթքը խեղճերուն .  
 Ամէն արցունք ալ կը սրբես  
 Աչքէն տրտմածներուն :

Տես աթոռիդ առջին ինկած  
 Ծառադ, խեղճ մեղաւոր .  
 Քեզ փնտրուել չե՞ս հրամայած,  
 Ինձի չըսի՞ր, "Եկուր" :

Միթէ մեղքիս վախըն կրնա՞յ  
 Ձիս քու քովէդ վարել .  
 Ինձի միայն յոյս կը մնայ  
 Շընորհք առջիդ գտնել :

Թող քու անհուն ողորմութիւն  
 Իմ յոյսս հաստատէ .

Թող բըժշկող ձայնդ ցընձութիւն  
 Սրտիս մէջ տարածէ :

ԱՌԱԻՕՏԵԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենակարող Աստուած, իմ

երկնաւոր Հայրս, շնորհակալ եմ  
 քեզմէ որ այս գիշերս ալ զիս ամէն  
 վտանգներէ ազատ պահելով՝ այս նոր  
 օրուան լոյսը ինձի տեսնել տուիր :  
 Կ'աղաչեմ, արդարութեան արեղակին  
 լոյսը իմ վրաս ծագէ ու իմ բոլոր  
 հոգեւոր խաւարս փարատէ : Կը գո-  
 հանամ քեզմէ որ իմ ամէն մարմնա-  
 ւոր կարօտութիւններս կը լեցունես :

Տուր որ անօթի ու ծարաւ ըլլամ  
 արդարութեան, վասն զի դուն կա-  
 րող ու պատրաստ ես իմ հոգեւոր  
 կարօտութիւններս լեցունելու : Մա-  
 նաւանդ կը գոհանամ քեզմէ, ո՛վ բա-  
 րի զթած ու ողորմած Հայր իմ, քու  
 չպատմուելու պարգեւիդ, քու միա-  
 ծին ու սիրելի Որդւոյդ, Տէր Յիսուս  
 Քրիստոսի համար, որ մարդոց մի-  
 միայն Փրկիչն է : Անոր անհուն ար-  
 ժանաւորութեանը համար իմ բոլոր  
 մեղքերս ներէ, եւ քու Սուրբ Հո-  
 գիդ շնորհէ՛ իմ մէջս նոր սիրտ ըս-  
 տեղծելու ու զիս սրբութեան եւ

Ճշմարտութեան մէջ առաջնորդելու :  
 Ինձի իմաստութիւն եւ շնորհք  
 տուր որ քու վախովդ ու սիրովդ  
 իմ այս օրուան բոլոր պարտաւորու-  
 թիւններս ճանչնամ ու կատարեմ :  
 Օգնէ ինձի որ ապրիմ՝ ոչ թէ իմ  
 անձիս համար, հոպա քու փառքիդ  
 եւ իմ ընկեր արարածներուս օգտին  
 համար : Օրհնէ իմ ազգականներս ու  
 բարեկամներս եւ ամէնք քուկդ ըրէ :  
 Օրհնէ բոլոր ազգերը, եւ ամէնք Տէր  
 Յիսուս Բրիտանոսի հնազանդեցուր,  
 որուն եւ քեզի եւ Սուրբ Հոգւոյդ  
 միայն կը վայելէ փառք ու պատիւ,  
 հիմա ու յաւիտեանս : Ամէն :

Քու շնորհքդ, Տէր, թող ինձ ներէ .  
 Ո՞վ իր մեղքերն կը հասկընայ,  
 կամ իր յանցանքը միտք կ'առնէ .  
 Ո՞վ քու առջիդ կ'արդարանայ :

Քու շնորհքդ, Տէր, թող զիս «բէ» .  
 Քու բընութիւնդ ինձի ալ տուր .

Ճշմարտութեամբդ զիս մաքրէ,  
 Ինչպէս որ է Փրկիչս մաքուր :

Քու շնորհքդ, Տէր, թող ինձ օգնէ,  
 Քանզի ես ինքս եմ խիստ տկար .  
 Թշնամիէն միշտ պաշտպանէ,  
 Երբէք ինձմէ մի՛ հեռանար :

Քու շնորհքդ, Տէր, թող զիս պահէ .  
 Ինձ պատուիրեր ես որ հակեմ .  
 Դուն ալ քու բազուկովդ բռնէ,  
 Որ փորձութեան մէջ չմըտնեմ :

Քու շնորհքդ զիս սընուսանէ .  
 Զիս կերակրէ երկնից հացով .  
 «Քու խորհրդովդ առաջնորդէ,  
 Ու վերջն ալ ընդունէ փառքով :»

ԿԻՐԱԿԻ ԱՌՏՈՒԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՂՕԹՔ

Օրհնեալ ըլլայ քու ամենաբարի  
 անունդ, ո՞վ իմ Աստուածս, որ քու  
 առատ ողորմութեամբդ այս սուրբ

օրը սահմաներ ես, որ իմ մարմնա-  
ւոր դործերէս եւ խորհուրդներէս  
դադարելով՝ քու սուրբ խօսքդ կար-  
դամ, անոր քարոզութիւնը լսեմ, եւ  
իմ բոլոր եղբայրներուս հետ քու  
շնորհաց աթոռիդ մօտենամ: Դուն  
իմ տկարութիւնս ու մեղք սիրելի  
գիտես: Օրհնէ ինձի, զօրացուր զիս  
եւ քու Սուրբ Հոգիդ պարգեւէ ինձի  
որ այս սուրբ օրը սրբութեամբ ան-  
ցունեմ: Հիմա որ հոգեւոր խորհրդ-  
դածութեան պիտի պարապիմ, դուն,  
ո՛վ Տէր, բոլոր աշխարհային խոր-  
հուրդները ինձմէ հեռացուր, եւ մի  
թողուր որ Սատանան իմ սրբազան  
խորհուրդներուս հետ պիղծ խոր-  
հուրդներ խառնէ: Օրհնէ զիս որ  
քու Սուրբ Գիրքդ ոչ թէ բան սոր-  
վելու կամ միճաբանութիւն ընելու  
մտքով, հապա միայն իմ պարտա-  
ւորութիւնս եւ քու սէրդ գիտնալու  
եւ զգալու համար կարդամ: Օրհնէ  
զիս որ սիրով եւ ակնածութեամբ

մտիկ ընեմ քու սուրբ խօսքիդ քա-  
րոզութիւնը: Օրհնէ զիս որ սուրբ  
խօսքդ լսած ատենս՝ միշտ իմ սրտէս  
հարցնեմ, թէ Տէր, ի՞նչ կ'ուզես որ  
ընեմ:

Աղէկ գիտեմ որ առանց քու Սուրբ  
Հոգւոյդ օգնութեանը պիտի չկրնամ  
քեզի ընդունելի կերպով աղօթել:  
Անոր համար երեսանկեալ կը խնդրեմ  
քեզմէ որ քու ամենասուրբ Հոգիդ  
շնորհես ինձի՝ որ ինքը սորվեցունէ  
ինձի հոգւով ու ճշմարտութեամբ  
քեզի երկրպագութիւն ընել: Դուն,  
որ սիրոյ աղբիւրն ես, ինձի սէր  
պարգեւէ, որով զքեզ սիրեմ իմ բո-  
լոր սրտովս, եւ իմ ընկերներս ալ,  
որոնց հետ այսօր ի միասին իբրեւ  
հարազատ եղբայր քու շնորհաց ա-  
թոռիդ բոլորաթիւք պիտի պատեմ:  
Օգնէ ինձի որ իմ հոգատարութեանս  
յանձնուածներուն, եւ որոնց որ կըր-  
նամ, քու սուրբ խօսքերէդ քու սէրդ  
եւ քաղցրութիւնդ սորվեցունեմ:

Ո՛վ իմ Աստուածս, օրհնէ զիս որ այս օրս այնպէս անցունեմ որ յաւիտենականութեան մէջ այս օրուան բոլոր ըրածներս ուրախութեամբ յիշեմ:

Թող քու զօրութիւնդ այսօր իմ տկարութեանս մէջ գործէ: Գուցէ այս վերջին սուրբ օրն է զոր պիտի վայելեմ այս ողորմութեան աշխարհիս մէջ. օգնէ ինձի որ այնպէս անցունեմ այս օրս՝ որ եթէ կենացս վերջը դայ, ասիկա յաւիտենական կիրակիին սկիզբն ըլլայ, որուն մէջ քու սուրբերուդ եւ քու սուրբ հրեշտակներուդ հետ օրհնեմ, գովեմ եւ փառաւորեմ քու ամենասուրբ Երրորդութեան անունդ, յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ո՛վ Սուրբ Հոգի, լոյս երկնային, իմին հոգիս լուսաւորէ.  
Տրուէ խաւարն զիշերային,  
Վրաս ցորեկուան լոյսն ալ ծագէ:

Ո՛վ Սուրբ Հոգի, հզօր Աստուած,  
Քու զօրութեամբդ իմ սիրտս մաքրէ.  
Ձի ներսիդիս ժողով մեղաց  
Իշխանութեամբ միշտ կը տիրէ:

Ո՛վ Սուրբ Հոգի Մխիթարիչ,  
Տրտում հոգիս մխիթարէ.  
Մրախ բոլոր վիշտ խոցոտիչ  
Ուրախութեամբ շուտ փարատէ:

Ո՛վ Սուրբ Հոգի ամենազօր,  
Իմ սիրտս մտիր եւ բընակէ.  
Վերցուր անկէ կուռքերս բոլոր,  
Եւ յաւիտեան հոն դուն իշխէ:

Ո՛վ Տէր, դուն մեծ ու ահաւոր Աստուած ես, քու վեհափառութիւնդ բոլոր տիեզերքը լեցուցած է: Դուն ինչ որ կ'ուզես՝ կ'ընես, ու բնաւ մէկը չկրնար քեզի դէմ կենալ ու յաջողութիւն գտնել: Դուն ամենի-

մաստ Աստուած ես, ամէն բան զիտես եւ քու ուզածիդ պէս կը կարգադրես: Դուն յաւիտեանական Աստուած ես. ի յաւիտենից մինչեւ յաւիտեանս ճշմարիտ եւ անփոփոխ Աստուածը դուն ես:

Մենք տկար ու անպիտան եւ տրգէտ ենք. մեր օրերը շուտով կ'անցնին: Օրհնէ զմեզ որ սրտի իմաստութիւն ունենալով մեր վախճանին վրայ խորհինք: Շնորհակալ ենք քեզմէ որ դուն քու վեհափառութենէդ կը զիջանիս մեզի նման մեղաւորները հոգալու:

Շնորհակալ ենք քեզմէ որ այս օրս ալ զմեզ հոգացիր եւ մեր բոլոր պիտոյքը մեզի պարգեւեցիր: Շնորհակալ ենք քեզմէ որ քու սուրբ Աւետարանդ մեզի պարգեւած ես: Օրհնէ զմեզ որ անոր յարգը ճանչնանք. օգնէ մեզի որ անոր ցուցուցած նեղ ճամբան մտնենք ու քալենք: Օգնէ մեզի որ մեր բոլոր սրտովը հաւա-

տանք եւ մեր կենաց բոլոր օրերուն մէջ անոր հնազանդինք:

Ո՛վ Տէր, դուն որ այսօր ալ մեզի բարիք ու մարդասիրութիւն ըրիր, մեզի քու Սուրբ Հոգիդ ալ պարգեւէ որ մենք քու ուզածիդ պէս քեզի ծառայութիւն ընենք, ու մեր ընտանիքէն բնաւ մէկը չկորսուի, հապա ամէնքս ալ քու միածին Որդւոյդ արժանաւորութեամբը սուրբերուն կարգը դասուինք:

Այս զիշերուան բոլոր վտանգներէն ու փորձութիւններէն պահէ զմեզ: Օրհնէ մեր բոլոր սիրելիները եւ բարեկամները, եւ ամենուն վրայ քու Սուրբ Հոգիդ առատապէս թափէ, որ ամէնն ալ քեզի հնազանդ ու սիրելի զաւակներ ըլլան: Այս շնորհքները մեր ամենասիրելի Փրկչին անունովը եւ արժանաւորութեամբը կը խնդրենք: Ամէն:

Այսօր ալ անցաւ, իրիկուն եղաւ,  
 Այս կարճ կեանքերնիս քիչ մ' ալ  
 կարճըցաւ,  
 Ալ ետ չդառնար, անցաւ զրնաց ան,  
 Մահ ու դատաստան քիչ մ' ալ մտեցան:

Փառք քեզ որ այսօր ալ շատ բարեքներ  
 Մեզի վայելել տուիր դուն, ով Տէր .  
 Քեզմով էր որ մենք ցաւ, վիշտ չունեցանք,  
 Հանգիստ ապահով այս ժամըս հասանք:

Ո՛հ, ս'րչափ մեղքեր գործեցինք այսօր  
 Ու արժանացանք պատժոյ ահաւոր .  
 Արդ հաւտալով որ ողորմած Տէր ես,  
 Կը խնդրենք որ մեր մեղքերը քաւես:

Քեզի յանձնելով մեզ և մերայինք,  
 Քեզ ապաւինած ահա կը պառկինք .  
 Պահէ, պաշտպանէ մեզ փորձանքներէ,  
 Ու թէ որ կամքդ է՝ մեզ օր մ' ալ շնորհէ:

ԻՐԻԿՈՒԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենաբարձրեալ, անփոփոխ  
 եւ յաւիտենական Աստուած, որ բո-  
 լոր գոյացութեանց Ստեղծողն ու  
 Նախախնամողն ես, մենք անարժան

ծառաներդ կու գանք քեզի այս ի-  
 րիկուն, եւ կը գոհանանք քեզմէ որ  
 կրնանք զքեզ մեր Հայրն ու Աս-  
 տուածը անուանել: Կը գոհանանք  
 քեզմէ որ այսօր զմեզ պահեցիր, ու  
 մեր կենաց բոլոր պիտոյքը հողացիր,  
 մեզի հաց եւ հանդերձ ու չափաւոր  
 առողջութիւն պարգեւելով. առանց  
 քու նախախնամութեանդ ու բա-  
 րեհնորհ հաճութեանդ մենք չէինք  
 կրնար այս բաներէն մէկը ձեռք  
 ձգել:

Կ'ուրախանանք այն բոլոր սիրելի  
 զգացումներուն համար զոր քու շը-  
 նորհօքդ զէպ ի քեզ ունինք, եւ  
 շնորհակալ ենք քեզմէ այս խաղաղ  
 ու սրբազան ժամուն համար, որ մեր  
 օրական զբաղմունքէն դադարելով,  
 մեր սիրելի Փրկչին միջոցովը կըր-  
 նանք քու հետդ առնչութիւն ունե-  
 նալ:

Բայց, ո՛վ Տէր, սրբութեան Աստ-  
 ուած, երբ քու առջիդ կըներկա-



յանանք, կը յիշենք մեր ամօթալի ու գարշելի յանցանքները զոր քեզի դէմ անդադար գործեր ենք: Մեղաւոր ու չար եւ դատապարտուելու արժան մարդիկ ենք: Ո՛վ Տէր, եթէ մեր խիղճերը կը յանդիմանեն զմեզ, դուն՝ որ մեր սիրտերէն մեծ ես, որչափ աւելի յանդիմանելու իրաւունք ունիս: Կ'աղաչենք, դարձիք մեզի քու ողորմութեանդ ու զթուլթեանդ համեմատ, ու ներէ մեր անթիւ մեղքերը, մաքրէ մեր սրտերը ամէն անօրէնութենէ, եւ չնորհէ որ մենք բոլորովին քու կը ըլլանք: Թող մեր կենաց բոլոր օրերուն մէջ քեզմով առաջնորդուինք, եւ մեր հաճութիւնն ու երջանկութիւնը քու կամացդ մէջ փնտռենք: Ողորմէ բոլոր աշխարհին, ու քու Աւետարանիդ լոյսը բոլոր մարդոց վրայ ծագէ:

Ողորմէ բոլոր աղքատներուն, հիւանդներուն ու վշտացեալներուն:

օրհնէ եւ մխիթարէ զանոնք, եւ անոնց բոլոր կարօտութիւնները քու ողորմութեամբդ լեցուր:

Օրհնէ, կ'աղաչենք, մեր բարեկամներն ու սիրելիները, եւ անոնց բարիք ու ողորմութիւն ըլլէ: Օրհնէ մեր թշնամիներն ալ, եթէ կան երբէք: դարձուր անոնց բոլոր խորհուրդները քու կամքիդ համեմատ: դուն մեզի սորվեցուր որ ներենք մեզի հակառակողներուն կամ հակառակել խորհողներուն: Տուր որ սըրտանց ներելու կարող ըլլանք, որ քեզի, մեր երկնաւոր Հօրը, նմանող ըլլանք:

Լսէ հիմա մեր աղաչանաց ձայնը, ու պահէ զմեզ այս գիշերուան բոլոր վտանգներէն ու հիւանդութիւններէն: Գիշերուան բոլոր պահերուն մէջ քու անքուն աչքերովդ հոկէ մեր վրայ, եւ, եթէ քու կամքդ է, քու թեւերուդ հովանաւորութեանը տակ հանգիստ ու քաղցր քունով մը

վաղուան պարտաւորութեանց համար զմեզ զօրացուր ու կարողացուր: Այս բոլոր շնորհքները եւ օրհնութիւնները մեր ամենասիրելի ու միակ Փրկչին արժանաւորութեամբը կը խնդրենք: Ամէն:

ԻՐԻԿՈՒԱՆ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, շնորհակալ ենք քեզմէ որ այս օր զմեզ ամէնքս ամէն վրտանգներէ ապահով պահելով կրկին արժանացուցիր քու առջեւ երեւնալու, որ մեր իրիկուան փառաբանութիւնը քեզի մատուցանենք: Այս օրուան մեր բոլոր գործած մեղքերը որ շատ են, Քրիստոսի անուանը համար մեզի ներէ, եւ մեզի շնորհք տուր որ մեր քեզմէ ընդունած պարգեւները զիտնանք: Քանի որ ուրիշ հաղարաւորներ հիւանդութիւնով ու ցաւով պառկած են, դուն զմեզ առողջ եւ հանդիստ կը պահես:

Քանի որ շատեր աղքատութեան, անօթութեան եւ նեղութեան մէջ են, մեր բոլոր կարօտութիւնները քու առատ ձեռքէդ լեցուած են. եւ մանաւանդ քանի որ միլիոնաւորներ հոգեւոր տգիտութեան, կուսպատութեան եւ կորստեան մէջ են, մենք զքեզ՝ մի միայն ու կենդանի Աստուածդ՝ կը ճանչնանք, եւ Յիսուս Քրիստոսը՝ զոր դուն մեզի Փրկիչ ըլլալու տուած ես: Ո՛վ Տէր, որովհետեւ որուն որ շատ կը յանձնես, անկէ շատ պիտի պահանջես, զիտենք թէ մեզմէ խիստ շատ պիտի պահանջես, եւ թէ շատ դժուար պիտի ըլլայ մեր հաշիւը տալ: Ո՛վ Տէր Աստուած, եթէ մեզի չողորմիս՝ կորսուած ենք, որովհետեւ մեր անթիւ մեղքերը զմեզ անմիջապէս դժոխք իջեցունելու բաւական են: Բայց օրհնեալ ըլլայ քու անունդ՝ որ թէեւ քու տուած պարգեւներդ այնչափ չարաչար գործածած ենք, դուն տա-

կաւին զմեզ չես կորսնցուներ, հապա երկայնամիտ կ'ըլլաս, չուզելով որ մեզմէ մէկը կորսուի, հապա որ ամէնքս դարձի գանք ու փրկուինք: Մեր այսօրուան վայելած մարմնաւոր եւ հոգեւոր օրհնութիւնները՝ քու մեր հետն այսպէս երկայնամիտ ու ողորմած ըլլալդ կը վկայեն: Կաղաչենք, մեզի այնպիսի հոգի մը տուր, որ այս օրհնութիւններուն համար քեզի սրտանց շնորհակալութիւն տանք, եւ այս գիշերուանս համար ինքզինքնիս եւ մեր բոլոր սիրելիները հաստատ հաւատքով քեզի յանձնենք, եւ խաղաղութեամբ պառկինք ու քնանանք, զիտնալով թէ դուն, ո՛վ Տէր, զմեզ ապահովութեամբ պիտի բնակեցունես: Կը խնդրենք որ այս գիշեր զմեզ ամէնքս հանգիստ քունով զօրացունես, եւ ժամանակին, վաղուան լոյսը մեր վրայ ծագես, եւ մեզի կրկին քու պարգեւներդ վայելել տաս: Բայց,

ո՛վ Տէր, եթէ քու կամքդ այսպէս չըլլայ, եւ եթէ այս գիշեր զմեզ կանչելու ըլլաս, կը խնդրենք որ քու շնորհքովդ զմեզ մահուան համար պատրաստես, որ գիշերուան ո՛ր պահուն մէջ որ դուն գայու ըլլաս, մենք արթուն ըլլանք՝ մեր լապտերներն արդէն վառած եւ զքեզ զիմաւորելու պատրաստ: Քանի որ մեր կեանքը կը շարունակուի, օր ըստ օրէ շնորհաց մէջ յառաջ տար զմեզ, ու վերջապէս ընդունէ զմեզ քու երկնային թագաւորութեանդ մէջ՝ ուր յաւիտեանս ալ գիշեր պիտի չըլլայ, հապա ամէնը քու լուսովդ պիտի քալեն: Խոնարհութեամբ կը խնդրենք որ Քրիստոսի անուանը համար այս մեր աղօթքին պատասխանը տաս: Ամէն:

Ո՛վ Տէր Յիսուս, անսուտ բերնով Դուն խօսք տուիր մեզի,  
 «Թէ ես կ'երթամ իմ Հօրնս քով՝  
 Տեղ պատրաստել ձեզի»:

Ու ես ուր որ պիտի երթամ,  
Դուք ալ հոն գաք պիտի՝  
Ո՛վ Տէր Յիսուս, երբ գայ նոյն ժամ,  
Դուն հոն տեղ տուր ինձի։

Սրբոց հետ հոն ուրախանամ  
Անճառ ուրախութեամբ.  
Հոն քու առջիդ հանգըստանամ  
Անհուն խաղաղութեամբ։

Այն տեղ բընաւ մեղք չի մտնար՝  
Մեղի վիշտեր տալու.  
Ողբ չի լսուիր, սուգ չ'երեւար՝  
Հոգին վրդովելու։

Հոն արգարները կը փայլին՝  
Գլուխնին թագ լուսեղէն.  
Անխախտ սիրով հոն կը գմայլին,  
Եւ Տէրը միշտ կ'օրհնեն։

ԿԻՐԱԿԻ ԻՐԻԿՈՒԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ  
ԱՂՕԹՔ

Շնորհակալ ենք, ո՛վ Տէր, որ մե-

զի հանգստութեան օր մըն ալ վայելել տուիր, եւ կարողացանք առանց արգելքի եւ առանց վախի քու սուրբ խօսքերդ կարդալ եւ անոնց քարոզութիւնը լսել։ Կ'աղաչենք, չըլլայ որ մենք քու ճշմարտութիւնդ լսողներ ու չկատարողներ գտնուինք։ Քու Սուրբ Հոգիդ մեզի շնորհէ որ այս օրուան մեր բոլոր կարգացածներն ու լսածները քու վախովդ ի գործ դնենք, եւ քեզի հնազանդ ծառաներ ըլլանք։ Ո՛վ Տէր, կը խոստովանինք որ այսօր շատ բաներու մէջ մեր վրայ պակասութիւններ ու յանցանքներ գտնուեցան, այնպէս որ եթէ դուն մեր ըրած երկրպագութիւնը բողբոլի մերժես, եւ զմեզ քու շնորհաց աթոռէդ վճռտես, ու մեր հոգիները անմիջապէս դժոխքը ձգես, մենք բնաւ բան մը չենք կրնար ըսել։

Բայց օրհնեալ ըլլայ քու սուրբ անունդ որ զմեզ չես վճռտես ու

կորսնցուններ, հապա քու սիրելի Որդւոյդ անուանը համար զմեզ կը կանչես, որ քեզի մօտենանք եւ աղօթքով մեր խնդրուածքը քեզի յայտնենք: Անոր սիրելի անունովը քեզի կու գանք, եւ կը խնդրենք որ մեր բոլոր մեղքերը ներես եւ անոր սուրբ արիւնովը մեր սրտերը մաքրես որ անոր նման ըլլանք: Կը խնդրենք որ մեր այսօրուան կարգացած ու լսած հոգեւոր խորհուրդները մեր սրտերուն վրայ տպաւորես քու Սուրբ Հոգևովդ, որ շարթուան մէջ զանոնք չմոռնանք, հապա քու օգնութեամբդ ամէնը ի գործ դնելով՝ ամէն մարդոց բարի օրինակ ըլլանք, եւ քու անունդ փառաւորենք:

Ո՛վ Տէր, ո՛րչափ շատ են քու ողորմութիւններդ մեզի, եւ ո՛րչափ շատ է մեր ապերախտութիւնը որ այս շնորհքները վայելելէն ետքը զանոնք մոռնալով քեզի դէմ մեղք կը գործենք, եւ մանաւանդ քու սուրբ

օրդ աշխարհային խորհուրդներով եւ մարմնաւոր խօսքերով ու գործերով պղծած ենք: Մեզի շնորհք տուր որ ասկէ ետքը միշտ այս օրս քու պատուէրիդ համեմատ սուրբ պահելով պատրաստ գտնուինք այն երկնային հանգստեան, որ քու ժողովուրդիդ կը մնայ: Այս շնորհքները Յիսուսի ամենասիրելի անունովը կը խնդրենք: Ամէն:

Իջիր յերկնից, ով Աղաւնի,  
Թեւերդ ըրէ մեզ հովանի.

Կեզ բարձրացուր վըրադ, ո՛վ Տէր,  
Երկրիս սահմաններէն առ վեր:

Աս աշխարհէս անդին մեզ տար,  
Ուր ոչ տարի կայ ոչ ալ դար.  
Զուարճութիւնք հոն են անհուն,  
Անմահ փառք կայ փրկեալ հոգւոյն:

Արդեօք անձամբ պիտի տեսնամ,  
Հօրն աթոռին ալ մօտիկնամ,

Ուր կը նստի փառաց թագով  
Աստուածորդին մարդու մարմնով:

Անթիւ սուրբեր չորս դին կ'առնեն,  
Սուրբ հրեշտակներ զայն կը պատուեն:  
Աստուածութեան փառքն աւելի  
Իր մարդկութեամբ կը փայլի:

Զարմանալի ցնծում ունին  
Որք երկնաւոր բլուր կը նստին,  
Երբոր ոսկի քնարով կ'երգեն,  
Իրենց Փրկիչը կը գովեն:

Թող գայ այն օր, Տէր սիրելի,  
Հոգիս ալ վեր ելլէ բնակի:  
Անոնց հետ ես կայնիմ, պատուեմ:  
Տեսնեմ երեսդ, երգեմ, սիրեմ:

ԿԻՐԱԿԻ ԻՐԻԿՈՒԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ  
ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Աստուած մեր, կը գոհա-  
նանք քեզմէ որ մեզի արտօնութիւն

կու տաս քու աթոռիդ առջեւը դալու  
մեր ամբողջ ընտանիքովը, եւ քեզի  
մեր կարօտութիւնները եւ շնորհա-  
կալութիւնները յայանելու: Փառք  
քեզ որ սուրբ օր մըն ալ անցուցինք,  
որուն մէջ ամէն օրերէն աւելի մի-  
ջոցներ ունինք շնորհքներ ընդունե-  
լու: Կը գոհանանք քեզմէ որ այսօր  
քու սուրբ խօսքիդ քարոզութիւնը  
լսեցինք: Ո՛վ Հայր մեր, տուր որ այս  
օրուան լսածնիս մեր հոգիներուն օգ-  
տակար ըլլայ, եւ մենք այն երկրին  
նամանք՝ որ մէկ սերմին տեղը հար-  
իւր պտուղ կու տայ: Կը խոստովա-  
նինք որ այս օրը քու կամքիդ համե-  
մատ չանցուցինք, հապա թէ՛ խոր-  
հուրդով եւ թէ՛ գործքով պղծեցինք  
այն օրը զոր սրբած էիր: Ներէ մեր  
այս օրուան գործած բոլոր մեղքերը  
եւ զանցառութիւնները եւ տուր որ  
ասկէ ետքը զգոյշ ըլլանք եւ սրբած  
օրդ պատուենք, սիրենք եւ քու  
կամքիդ համեմատ անցունենք:

Թող այս աշխարհիս կիրակիները քու երկնային յաւիտեանական կիրակիիդ օրինակն ըլլան մեզի, եւ մենք չձանձրանանք քու օրդ սուրբ պահելէն : Այս իրիկուն, ո՛վ Տէր, քու աթոռիդ առջեւը ինկած կը խնդրենք որ քու զթութեանդ բազուկը երկնցունես մեր վրայ եւ զմեզ օրհնես : Այս մեր ընտանեաց բոլոր անդամները քու շնորհքովդ լեցուր : Չըլլայ որ մեզմէ մէկը քեզմէ հեռու մնայ, այլ թող ամէնքս քու բակիդ մէջ ընդունուինք եւ քու սուրբերուդ կարգը դասուինք : Օրհնէ մեր զաւակները եւ զանոնք պզտիկուց քուկդ ըրէ : Մի թողուր որ իրենց ոտքերը արդարութեան ճամբէն շեղին, այլ թող մեծնան եւ բարի ու հաւատարիմ մշակներ ըլլան քու այգիիդ մէջ :

Օրհնէ այն ամէն տեղերը ուր այս օր քու խօսքդ քարոզուեցաւ . թող այսօր շատ մեղաւորներ դարձի դան

եւ քու Որդւոյդ Յիսուս Գրիստոսի հաւատան : Թող շուտով դայ այն ժամանակը երբ կիրակիները աշխարհային զբաղմունքով եւ զուարճութիւններով պիտի չպղծուին, այլ բոլոր մարդիկ մէկ միտքով ու մէկ հոգւով զքեզ պիտի պաշտեն ու քու սուրբ օրդ պիտի պատուեն, եւ զանիկա պահել իրենց զուարճութիւն պիտի համարին : Այս գիշեր մեր հետը եղիր . զմեզ ամէն փորձանքներէ եւ սատանայական նենգութիւններէ պահէ : Մեր գործած բոլոր մեղքերը ներէ եւ քու Սուրբ Հոգւովդ առաջնորդէ մեզի մեր կենաց բոլոր օրերուն մէջ, մեր սիրելի Փրկչին Յիսուս Գրիստոսի անունովը եւ արժանաւորութեամբը կը խնդրենք : Ամէն :

Այս օրն անցաւ զընաց,  
Խաւարը կ'երեւնայ .  
Տուր որ յիշենք մահուան գիշերն,  
Որ շուտ կը մօտենայ :

Յողնած, քունով թմրած,  
Մեր աչքը կը դոցենք.  
Գերեզմանին մէջ, շատ չանցած,  
Ամէնքս պիտի ննջենք:

Գիշերս մեզ, Տէր, պահէ  
Բոլոր վտանգներէն.  
Հրեշտակդ խրկէ որ մեզ հակէ,  
Մինչ գայ առտու նորէն:

Եւ երբ առտուն կանուխ  
Անխոնջ արեւն տեսնենք,  
Տուր որ անոր նրման անդուլ  
Մեր ասպարէզն վազենք:

Երբ մեր վախճանը գայ,  
Եւ այս կեանքէս դատուինք,  
Ծնորհէ, Փրկչին սիրոյն համար,  
Որ մենք քու գիրկդ հանգչինք:

ԻՐԻԿՈՒԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՂՕԹՔ

Ծնորհակալ եմ, ո՛վ Տէր, որ իմ  
առաւօտեան աղօթքս լսեցիր, եւ

այսօր զիս մահէ, հիւանդութենէ եւ  
ամէն վտանգներէ պահեցիր, եւ իմ  
բոլոր ջանքերուս յաջողութիւն  
տուիր: Եւ հիմա որ իրիկուան ա-  
ղօթքս կ'ընեմ, կ'աղաչեմ, ինձի այն-  
պիսի սիրտ մը տուր որ անկեղծու-  
թեամբ քեզի մօտենամ եւ հոգւով  
ու ճշմարտութեամբ քեզի երկրպա-  
ղութիւն ընեմ: Իմ բոլոր մեղքերս  
ներէ, եւ Քրիստոսի՝ խաչափայտին  
վրայ թափած արիւնովը իմ սիրտս  
մաքրէ որ սուրբ ըլլամ, գիտնալով  
թէ առանց սրբութեան մէկը չկրնար  
զքեզ խաղաղութեամբ տեսնել: Ո՛վ  
Տէր, դուն միայն կրնաս այս գիշեր-  
ուան վտանգներէն զիս ապահով պա-  
հել եւ վաղուան լոյսը ինձի տեսնել  
տալ: Ինքզինքս քու ձեռքդ կը յանձ-  
նեմ, ու կը խնդրեմ որ քու ամենա-  
զօր բազուկովդ զիս պահպանես, իմ  
օրերս երկընցունես եւ զանոնք ինձի  
քու վախովդ անցունել տաս:

Բայց, ո՛վ Տէր, գիտեմ թէ չա-



տեր այս գիշեր պիտի մեռնին եւ  
քու աջեւզ կայնին իրենց հաշիւը  
տալու եւ իրենց ըրածներուն փո-  
խարէնը առնելու: Եթէ դուն զիս  
կանչելու ըլլաս, կը խնդրեմ որ պատ-  
րաստ գտնուիմ իմ յոյսս Քրիստոսի  
վրայ հաստատուած ըլլալով, որ ա-  
ռանց վախի գերեզմանը պառկիմ  
արգարութեան յարութիւնը վայելե-  
լու յուսով: Այս բոլոր շնորհքները  
Քրիստոսի անունովը կը խնդրեմ, որ  
ինքն է մեր յարութիւնը ու կեանքը:  
Ամէն:

Ես կը սիրեմ առանձնանալ  
Հոգերըս ձըգելով,  
Որ իրիկուան ժամերս անցնեմ  
Յնձմամբ աղօթելով:

Ես կը սիրեմ ալ առանձին  
Զղջման արցունք թափել.  
Իր խոստմունքներն յիշել, երբ Տէրն  
Միայն կրնայ լսել:

Ես կը սիրեմ իմ միտքս բերել  
Զայն որ իս կը հոգայ,  
Հոգերս, վիշտերս բոլորն ձգել  
Գլխած Տէրոջըս վրայ:

Ես կը սիրեմ երկինք նայիլ  
Քաջ հաւատոյ աչքով.  
Նեղուած հոգիս կը զօրանայ  
Այն ցնձալի տեսքով:

Եւ վշտալից կեանքիս վերջին  
Օրն, երբ իմ վրաս հասնի,  
Նրման ըլլայ այս մեղմ ժամուն,  
Ու զիս երկինք տանի:

Շնորհակալ եմ քեզմէ, ո՛վ իմ  
բարերար ու մարդասէր Աստուածս,  
որ մէկ օր մըն ալ անցուցի այս ու-  
զորմութեան աշխարհիս վրայ:

Շնորհակալ եմ քեզմէ որ այսօր  
ալ իմ օրական հացս եւ զանազան

մարմնաւոր եւ հոգեւոր օրհնութիւններ վայելել տուիր ինծի: Կը խոստովանիմ որ իմ արժան չեղած բարիքներս վայելեցի: Կը խոստովանիմ որ օրս ըստ օրինի չանցուցի: Վայ ինծի, որ շատ պակասութիւններ ունեցայ: Վայ ինծի, որ քեզի պէս բարերար Հայր մը ունենայով, ըստ արժանւոյն քեզի ծառայութիւն չեմ ըներ:

Կը խոստովանիմ որ իմ հաւատքս թերի, իմ սէրս քիչ, եւ իմ յոյսս անհաստատ է:

Ո՛վ Հայր, որ բոլոր շնորհաց աղբիւրն ես, երեսանկեալ կը խնդրեմ քեզմէ որ իմ հաւատքս շատցունես, իմ սէրս աւելցունես ու իմ յոյսս հաստատես քու վրադ, որպէս զի չտեսնուած բաներուն վրայ տեսածի պէս նայիմ, ու երկնային ուրախութեամբ լեցուիմ եւ ունենամ այն խաղաղութիւնը, զոր աշխարհս իրեններուն չկրնար տալ, այնպէս որ զքեզ իմ

բոլոր սրտովս եւ զօրութեամբս սիրեմ ու քեզի հնազանդիմ, եւ կարող ըլլամ քու ծառայիդ, Դաւթի, պէս ըսելու, Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ սպըրտիմ, չարէն պիտի չվախնամ. վասն զի դուն իմ հետս ես, քու ցուպդ ու գաւազանդ՝ անոնք իս պիտի մխիթարեն:

Իմ օրերս արադութեամբ կ'անցնին եւ մահը կը մօտենայ: Այսօր ալ անցաւ ու յաւիտենականութեան խառնուեցաւ: Օր մըն ալ դերեզմանին մօտեցայ: Կը խնդրեմ քեզմէ որ զիս քու երկնային օրհնուածութիւններովդ օրհնես, որ քանի որ դերեզմանին կը մօտենամ՝ քեզի ալ մօտենամ, եւ օրէ օր երկնային վիճակը ունենայու փափաքս շատնայ:

Եւ հիմա որ զիշերտ ան հանդիստս կ'երթամ, դուն քու ամենակարող բազուկդ հովանի ըրէ իմ վրաս, որ չարիք մը ու վտանգ մը ինծի չհանդիպի: Ինծի մարմնաւոր քուն եւ

հոգեւոր արթնութիւն պարգեւէ :

Օրհնէ զիս որ հիմա պառկած ա-  
տենս իմ խորհուրդներս քեզմէ չհե-  
ռանան, եւ անկողինիս մէջ պառ-  
կելս թող յիշեցունէ ինձի գերեզմա-  
նին մէջ պառկելս ալ, որ հաստատ  
որոշումներ ունենամ իմ բոլոր հո-  
գեւոր պարտաւորութիւններս շուտ  
կատարելու :

Լսէ իմ անարժան աղօթքիս ձայնը  
ու պատասխանէ ինձի իմ սիրելի  
Փրկչիս արժանաւորութեամբը, Ո-  
րուն, Քեզի եւ Սուրբ Հոգւոյն կը  
վայելէ փառք եւ պատիւ հիմա ու  
յաւիտեանս յաւիտենից : Ամէն :

Ո՛ւր կայ հանդատութիւն  
Յոգնած, տրտմած հոգւոյն .  
Ունայն է ծովը զայն փնտռել,  
Կամ մինչ բեւեռն քալել :

Աշխարհըս չկրնար  
Երջանկութիւն մեզ տալ .

Ո՛չ կեանքս բոլոր ապրիլն է ան,  
Ո՛չ ալ մեռնիլ՝ աս մահն :

Այս արտասուաց ձորէն  
Անդին կեանք կայ նորէն .  
Այն չի չափուիր տարիներով,  
Լեցուն է սուրբ սիրով :

Մէկ մահ մըն ալ կ'ըլլայ  
Որուն վախճան չը կայ .  
Ո՛հ, ի՛նչ ցաւք յաւիտենական  
Երկրորդ մահուան մէջ կան :

Աստուած, Տէր գթութեան,  
Շնորհքդ թափէ մեր վրան,  
Որ մենք վախչինք այն մահուանէ,  
Ու չզատուինք քեզմէ :

ԻՐԻԿՈՒԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենակալ ու ողորմած Աս-  
տուած, իմ երկնաւոր Հայրս, շնոր-  
հակալ եմ քեզմէ որ զիս այսօր ալ  
պահեցիր ու պաշտպանեցիր :

Գուն ամենազէտ ու ամենատես

Աստուած ես. դուն իմ գործերս, խօսքերս ու խորհուրդներս նաեւ բոլոր ճամբաներս գիտես:

Ինչպէս որ ամէն ատեն՝ նոյնպէս ալ այսօր քեզի դէմ մեղք գործած եմ: Իմ բնութիւնս չար է, ու երբ կ'ուզեմ բարին ընել, չարը իմ քովս է: Քու սուրբ երեսիդ առջեւը իմ բոլոր գործերս անմաքուր են. իմ պարտաւորութիւններէս ոմանց մէջ շատ պակաս եմ, եւ ոմանց մէջ զանցառութիւն ըրած եմ. անօրէնութեամբ ու չարութեամբ լեցուն եմ. իմ մէջս բարի բան մը չկայ. յանցաւոր ու դատապարտուած եմ: Ո՛վ սուրբ Հայր, դուն արդար պիտի ըլլայիր, եթէ զիս քու երեսէդ յաշիտեանս վճռտէիր. բայց կը գոհանամ քեզմէ որ քու անհուն իմաստութեամբդ ու ողորմութեամբդ ճամբայ գտար, որով կրնաս արդար ըլլալ եւ ինծի պէս մեղաւորը արդարացունել: Քու սիրելի ու միածին Որդիդ աչ-

խարհ եկաւ եւ մեզաց համար իր արիւննովը կատարեալ քաւութիւն ըրաւ: Ո՛վ արդար եւ ողորմած Հայր, Տէր Յիսուս Քրիստոսի կը դիմեմ, ինչու որ անկէ ի զատ ուրիշ անուն մը չկայ երկնից տակը տրուած, որով կրնամ փրկուիլ, եւ ինքը կարող է ապրեցունելու ամէն անոնք որ իրմով քեզի կու գան: Կը խնդրեմ, ո՛վ Հայր, որ Անոր արժանաւորութեանը համար իմբոլոր մեղքերուս ու յանցանքներուս թողութիւն շնորհես, եւ քու Սուրբ Հոգիդ ինծի տաս իմ մէջս նոր սիրտ մը ստեղծելու:

Օգնէ ինծի որ օրէ օր Քրիստոսի շնորհքովը ու գիտութիւնովը աճիմ, քու խօսքդ կարդալով: Զիս պահէ այս գիշեր, եւ զիս պատրաստէ մահուան գիշերուան համար, ու վերջապէս զիս երկինքը ընդունէ Քրիստոսի արիւննովը սրբուած եւ արդարացած, Որուն փառք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ո՛վ Տէր Յիսուս, դուն խոստացար  
Որ Սուրբ Հոգիդ խրկես .  
Ճշմարտութեան լոյսն փրկարար  
Մեզի միշտ հաղորդես :

Արդ կ'ազաչեմ բոլոր սրտով,  
Ինձ Սուրբ Հոգիդ խրկէ .  
Ամէն բան թող ուզիդ կերպով  
Ինձի սորվեցունէ :

Ինչպէս որ դուն ի վերնատան  
Առաքելոց տուիր  
Քու Սուրբ Հոգիդ, լոյս դերբնական,  
Քեզմէ պարզեւ ընտիր .

Ինձի ալ տուր որ զիս սրբէ,  
Որ քու օրէնքդ սիրեմ .  
Իմ միտքս բանայ, սրտիս ազդէ,  
Որ միշտ քեզ ծառայեմ :

Ո՛վ Սուրբ Հոգի, չեմ արժանի  
Տաճար քեզ ըլլալու .  
Եկ, զիս ըրէ գործիք քեզի,  
Քու լոյսդ տարածելու :

## ԻՐԻԿՈՒԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ յաւիտեանական, անփոփոխ եւ  
սուրբ Աստուած, որ նոյն ես երէկ,  
այս օր եւ յաւիտեանս, քու սրբա-  
ղան ներկայութենէդ երկնից բոլոր  
հրեշտակները կը դողան : Ո՛րչափ  
մեծ ու անճառելի չնորհք է ասիկա,  
որ ինձի պէս անարգ ու պիղծ մե-  
ղաւորի մը չնորհած ես քեզի մօ-  
տենալ : Երբ կը նայիմ իմ սրտիս  
վատթարութեանը եւ ասպականու-  
թեանը, կը զարմանամ որ կը համ-  
բերես ինձի ու զիս քու առջեւէդ  
չես մերժեր, մանաւանդ որ շատոնց-  
ուրնէ իմ բաժինս կեղծաւորներուն  
ու անհաւատներուն հետ չես դրած :  
Ահա իմ վրայէս մէկ օր մըն ալ ան-  
ցաւ, բայց, ո՛հ, որչափ կ'ամօնում  
յիշելու անոր ամէն մէկ բոպէնները,  
որ պակասութիւններով ու յանցանք-  
ներով անցուցի :

Իմ սիրտս սրչափ խաբեբայ ու սրչափ կեղծաւոր է, քանի քանի անգամ կարծեցի ու վստահացայ ալ թէ քեզի տուած եմ զայն. բայց, ո՛հ, բոլորը կեղծիք ու սուտ բաներ են եղեր: Ո՛վ Տէր, քեզի կու դամ ու քեզի կը ձգեմ ինքզինքս: Կը հաւատամ որ դուն միայն կարող ես զիս քեզի դարձունելու: Կ'աղաչեմ, ո՛վ մարգասէր Տէր, խրկէ քու առտտ շնորհքներդ ինձի, ու լուսաւորէ այս իմ խաւար սիրտս որ ես իմ անարժանութիւնս ու քու փաւքդ տեսնելու կարող ըլլամ: Այս անտրդ բաներէն դարձուր իմ խորհուրդներս, որ քու փառաւոր բաներուդ վրայ խորհիլ սկսիմ: Ո՛վ Տէր, երբ իմ վրայովս կը խորհիմ, չարութենէ եւ մեղքէ ի դատ ուրիշ բան չեմ տեսներ: Ահա անօրէնութեամբ ծնայ ու մեղքով յղացաւ զիս մայրս: Ո՛վ Տէր, մշտիկով մաքրէ զիս որ մաքուր ըլլամ, ու քու ողորմութեանդ համե-

մատ ողորմէ ինձի: Կը դոհանամ քեզմէ որ Փրկիչ մը պատրաստեցիր ինձի. ո՛հ, իմ մեղքերովս սրչափ ցաւցուցի ու վշտացուցի զինքը: Զիս քու ողորմութեան կապերովդ քաջէ այն խաչեալ Գառնուկին, այն կենաց Աղբիւրին որ ինձի պէս մեղաւորներուն բացուեցաւ:

Թող իմ հոգւոյս ծարաւն անցնի, թող այն տեղը զանեմ կեանք եւ անմահութիւն: Ողորմէ բոլոր աշխարհին, եւ ազատէ զանոնք Սատանային զերութենէն. ողորմէ իմ բոլոր սիրելեացս ու բարեկամացս. օրհնէ քու եկեղեցիդ. ինքզինքդ յայտնէ սնոր. թող քու եկեղեցիդ խաղաղ ու հանդարտ օրեր վայելէ: Ո՛վ Տէր, ինքզինքս քու պաշտպանութեանդ կը յանձնեմ այս զիչեր: Պահէ զիս ամէն տեսակ մեղքերէ ու պատահարներէ. թէ որ այս զիչեր իմ վերջին զիչերս ըլլայ, ընդունէ իմ հոգիս, ու հրեշտակաց եւ սուր-

բերուն դասակից ըրէ, եւ եթէ քու  
կամքդ է, չնորհէ որ վազուան ա-  
րեւն իմ վրաս ծագի այն երկնային  
Երուսաղէմին մէջ ուր որ իրիկուն  
եւ խաւար չկրնար ըլլալ, որ հոն  
բոլոր փրկուած հողիներուն հետ ան-  
դադար երգերով օրհնեմ եւ դովա-  
բանեմ զքեզ, սիրելի Հայրդ, ու ինծի  
համար մեռած ու կենդանացած Որ-  
դիդ, եւ սրբացուցիչ Սուրբ Հոգիդ  
յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ո՛վ Սուրբ Հայր, ինձ ցուցուցեր ես,  
Յոյսըս է միայն քեզմէ:

Օրէ օր զիս անցուցեր ես  
Բազմաթիւ վրասնգններէ:  
Դուն, Տէր, մոլորած ատենըս  
Առաջնորդեցիր ինծի:

Միշտ եզիր, Տէր, ապաւէնըս,  
Թող տպրիմ միայն քեզի:

Խորամանկ թըչնամիներըս  
Միշտ կը յարձակին վրաս:

Ես գիտեմ բոլոր օրերըս  
Կօիւ պիտի չըլլայ պակաս:  
Երկնաւոր չնորհաց աթոռը,  
Հոն միայն պիտի զիմեմ,  
Որ իմ նեղութեանըս օրը  
Զօրութիւն քեզմէ դանեմ:

Հայրըս, քու պաշտպանութեանըդ  
Տուր որ միշտ ապաւինիմ,  
Եւ քու առաջնորդութեանըդ  
Զաւկիդ պէս թող հետեւիմ:  
Բու աչքովըդ, Տէր, ուղղէ զիս,  
Փորձիչէն քեզի դառնամ:  
Թեւերուդ տակ, Տէր, պահէ զիս,  
Միշտ քու քովըդ թող կենամ:

ԿԻՐԱԿԻ ԻՐԻԿՈՒՄՆ ԱՌԱՆՁԻՆ  
ԱՂՕԹՔ

Շնորհակալ եմ քեզմէ, ո՛վ իմ բա-  
րերար Հայրս, որ սուրբ օր մըն ալ  
վայելեցի:

Շնորհակալ եմ որ այսօր քու սուրբ  
խօսքդ կարգացի եւ անոր քարոզու-

թիւնը լսեցի: Շնորհակալ եմ որ այսօր իմ եղբայրներուս հետ ի միասին քու առջեւ երեւնալու փառաւոր արածնութիւնը վայելեցի: Դուն, ո՛վ Տէր, որ այս օրհնութիւններն ինձի վայելել տուիր որոնցմէ իմ ընկեր արարածներէս շատեր զրկուած են, շնորհէ որ անոնք բոլորն իմ հոգւոյս փրկութեանը եւ շնորհաց մէջ յառաջ երթալուս համար ըլլան: Գիտեմ որ քու Սուրբ Աւետարանդ ոմանց մահուան հոտ է դէպ ի մահ, եւ ոմանց կենաց հոտ է դէպ ի կեանք:

Օրհնէ զիս որ չըլլայ թէ քու Աւետարանիդ քարոզութիւնները, զոր կը լսեմ, իմ դատապարտութիւնս աւելցունեն, հապա թող իմ հաւատքս ու սէրս աւելցունեն: Թող անոնք իմ սրտիս վրայ տպաւորուին քու շնորհքովդ: Օրհնէ զիս որ զանոնք ոչ միայն լսող, այլ եւ կատարող ալ ըլլամ: Կը խոստովանիմ որ այսօր շատ պակասութիւններ ունե-

ցայ եւ մեղք գործեցի:

Կը խնդրեմ քեզմէ որ իմ մեղքերս ներես, եւ քու Սուրբ Հոգւովդ զիս սրբես ու մաքրես:

Օրհնէ քու քարոզիչ ծառայ, որ այսօր քու սուրբ խօսքերդ ինձի քարոզեց: Օրհնէ այն ամէնը որ իմ հետս ի միասին քու խօսքերդ լսեցին ու քեզի աղօթք եւ փառաբանութիւն մատուցին: Եւ հիմա որ քու սուրբ ներկայութեանդ եկած եմ, օգնէ ինձի որ առանց նոր օրհնութիւն մը ընդունելու քու շնորհաց աթոռէդ չհեռանամ: Ո՛վ Տէր, գուն եղիր իմ յաւիտենական բաժինս: Թող իմ բոլոր ուրախութիւններս ու երջանկութիւններս քեզմէ քաղեմ: Թող այս սուտ եւ անցաւոր աշխարհիս բաներուն մէջ չվիտռեմ իմ երջանկութիւնս: Դուն քու երեսիդ լոյսովը զիս ուրախացուր, եւ քեզի ըրած ծառայութիւններս, որ, ո՛հ, ո՛րչափ պակասութիւններով ու մեղքերով



լեցուն են, ինծի բեռ մը չերեւնան,  
հապա խիստ սիրելի եւ բերկրալի:  
Թող իմ ամենէն ուրախալի ժամս  
այն ժամս ըլլայ, երբ քեզի ու քու  
եկեղեցւոյդ յարմար ծառայութիւն  
կ'ընեմ: Զիս այս զիչերուան բոլոր  
վաճակներէն ու փորձութիւններէն  
ազատ պահէ. իմ ամենասուրբ եւ  
սիրելի Փրկչիս անունովը եւ արժա-  
նաւորութեամբը. Որուն, Քեզի եւ  
Սուրբ Հոգւոյդ կը վայելէ փառք,  
պատիւ եւ զօրութիւն, այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սուրբ օրն իր վախճանին  
Հիմա ալ մօտեցաւ.  
Իմ վրաս այս Կիրակին  
Ի՞նչպէս հաչիւ տուաւ:  
Արգեօք ինձ փոխ տրուած  
ժամերը յարգեցի՞,  
Թէ օրըդ, ո՞վ Աստուած,  
Պարապ տեղ վառնեցի:

Դատապարտեալ հոգին  
Ի՞նչ մեծ ցաւով կ'ողբայ  
Վատնած այն Կիրակին,  
Որ պիտի չգառնայ.  
Ի՞նչ յուսահատութիւն,  
Երբ ինքն իրեն ըսէ,  
Պատրաստ կար փրկութիւն,  
Բայց մերժեցի ինձմէ:

Կիրակին ժամերն  
Զը յանդգնինք պղծել.  
Կամ աղօթքի օրերն  
Ունայն կերպով վառնել.  
Սուրբ օրը թող ըլլայ  
Մեզի երկնից նըման.  
Կանխիկ ճաշակ ըլլայ  
Վերին սուրբ հանգստեան:

ՊԶՏԻԿ ՏՂՈՒ ՄԸ ԻՐԻԿՈՒԱՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Յիսուս, դուն որ պզտիկ  
տղաքը սիրեցիր եւ օրհնեցիր երբ  
այս աշխարհիս վրայ էիր, կ'աղաչեմ,

զիս ալ օրհնէ, եւ զիս քու սիրելի տղադ ըրէ: Կը խոստովանիմ թէ այսօր ես շատ անգամ քու պատուիրանքդ կ'ոտրած եմ: Կը խնդրեմ որ իմ բոլոր մեղքերս ներես, եւ այս գիշեր զիս եւ իմ բոլոր սիրելի ընկերներս եւ ազգակիսններս ապահով պահես, եւ մեզի հանդիստ քուն տաս: Ո՛վ Տէր, շնորհակալ եմ որ քու սուրբ Աւետարանդ ինձի պարգևած ես, եւ կը խնդրեմ որ զանկա ամէն տղայոց ալ տաս, եւ մանաւանդ անոնց որ կ'ոտրապաշտութեան մէջ են, որ իրենց կուռքերը ձգեն ու քեզի հաւատան ու փրկուին:

Ո՛վ Տէր, եթէ քու շնորհքովդ վաղուտն լոյսը տեսնեմ, կը խնդրեմ որ ինձի օգնես քու Սուրբ Հոգւովդ որ իմ բոլոր ընկերներուս բարի օրինակ ըլլամ, որ ոչ կ'ուրիմ եւ ոչ ալ ուրիշ գէշութիւն ընեմ, հապա այնպէս քալեմ, ինչպէս որ Քրիստոսը սիրող տղու մը կը վայելէ: Ամէն:

ՊԶՏԻԿ ՏՂՈՒ ՄԸ ԻՐԻԿՈՒԱՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, դուն իմ Երկնաւոր Հայրս ես, ինձի ազօթք ընել սորվեցուր: Շնորհակալ եմ քեզմէ իմ առողջութեանս, իմ կերակուրիս եւ հանդերձներուս համար: Շնորհակալ եմ տան եւ բարեկամներու համար, եւ այս օրուան բոլոր բարիքներուն համար: Շնորհակալ եմ քեզմէ Քրիստոսի, քու Որդւոյդ, համար: Ո՛վ Տէր, իմ բոլոր մեղքերս ներէ. ողորմէ ինձի Քրիստոսի համար: Օրհնէ բոլոր իմ բարեկամներս եւ ազգականներս, եւ զանոնք քու կը ըրէ: Օրհնէ բոլոր աշխարհ քու շնորհքովդ որ ամէն մարդիկ շուտով Քրիստոսի հաւատան: Զիս այս գիշեր ամէն վրտանդէ ու մեղքէ պահէ, եւ բարի տղայ մը ըրէ, որ Քրիստոսի նման ըլլամ: Այս բոլոր բաները Անոր սիրելի անունովդ կը խնդրեմ: Ամէն:

Հիմա ես որ պառկիմ պիտի,  
Յիսուս, աղօթք կ'ընեմ քեզի.  
Բոլոր մեղքերըս, Տէր, ներէ,  
Եւ այս գիշերըս զիս պահէ:  
Թէ որ նորէն ես չարթըննամ,  
Շնորհէ, ո՛վ Տէր, որ քօլըդ դամ:  
Ամէն.

ՊԶՏԻԿ ՏՂՈՒ ՄԸ ԱՌԱՒՈՏԵԱՆ  
ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, շնորհակալ եմ քեզմէ որ  
զիս ապահով պահեցիր անցած գի-  
շերս, եւ նորէն քու արեւիդ լոյսը  
իմ վրաս կը ծագես: Կ'աղաչեմ,  
այսօր քու Սուրբ Հոգիդ ինձի տուր  
որ իմ հօրս ու մօրս ու վարժապե-  
տիս հնազանդ ըլլամ: Ինձի օգնէ որ  
միշտ յիշեմ թէ Աստուած զիս կը  
տեսնէ, եւ թէ դատաստանին օրը  
իմ բոլոր ըրածներուս հաշիւը ինձմէ  
պիտի պահանջէ: Ո՛վ Տէր, կ'աղա-  
չեմ, իմ սիրելի հայրս ու մայրս եւ

իմ բոլոր ազգականներս եւ իմ ըն-  
կերներս օրհնէ, եւ զանոնք ամէնն  
ալ քու Սուրբ Հոգևովդ լեցուր, որ  
վերջապէս զմեզ ամէնքս քու երկ-  
նային փառացդ մէջ ընդունիս: Ամէն:

Քեզմէ շնորհակալ եմ, Տէր:  
Որ իմ աղօթքըս ես լսեր.  
Գիշերը զիս պաշտպանեցիր,  
Եւ քուն անուշ վայելել տուիր:  
Ո՛վ Հայր իմ, այսօր ալ պահէ  
Ամէն տեսակ չարութիւնէ.  
Տկար աղօթքըս ընդունէ,  
Եւ զիս քուկին զաւակդ ըրէ:  
Ամէն:

ՊԶՏԻԿ ՏՂԱՅՈՑ ԱՌԱՒՈՏԵԱՆ  
ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած, դուն ես իմ Աս-  
տուածս, զքեզ կանուխ պիտի փընտ-  
ռեմ: Դուն շատ մեծ ես, եւ պզտիկ  
աղայ եմ միայն. դուն սուրբ ես,  
բայց ես մեղաւոր եմ. ամէն օր եւ

ամէն ժամ քեզի դէմ մեղք կը գործեմ: Աստուած, ողորմէ ինծի մեղաւորիս, եւ Քրիստոսի անուան համար իմ բոլոր մեղքերս ներէ: Ո՛վ Տէր, ինծի նոր սիրտ մը տուր. ինծմէ վերցուր իմ մեղքս, եւ զիս սուրբ ըրէ, որ դուն ինծի հայր ըլլաս ու ես քեզի հնազանդ զաւակ մը: Ինծի պէտք եղած բաները սորվեցուր, եւ զիս օրհնէ քու շնորհքովդ: Զիս ամէն վտանգներէ այսօր պահէ, մահաւանդ ամէն մեղքէ: Օրհնէ իմ հայրս ու մայրս, եղբայրներս ու քոյրերս եւ իմ բոլոր ազգականներս ու բարեկամներս: Քեզմէ շնորհակալ եմ իմ վայելած ամէն բարիքներուս համար: Ծնորհակալ եմ որ այս դիչեր զիս ապահով պահեցիր: Ո՛վ Հայր իմ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ, քու թագաւորութիւնդ դայ, քու կամքդ ըլլայ ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ. իմ ամէն աւուր հացս այսօր ինծի

տուր, եւ ինծի ներէ իմ պարտքերս, ինչպէս որ ես ալ կը ներեմ իմ պարտականներուս: Զիս փորձութեան մի տանիր, հապա չարէն զիս ազատէ, ինչու որ քուկդ է թագաւորութիւնը եւ զօրութիւնը ու փառքը յաւիտեանս: Ամէն:

ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆԸ ԳԱՅՈՂԻ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, իմ Աստուածս, շնորհակալ եմ որ ինծի ոչ միայն դքեզ ճանչնալ տուած ես, հապա նաեւ վայելել Սուրբ Գիրքդ, Սուրբ Կիրակի օրդ եւ Սուրբ Տունդ: Եւ հիմա որ քու շնորհքովդ քու տունդ երթալու վրայ եմ, կը խնդրեմ որ ինծի, քու ծառայիդ, ըսել տաս, թէ Ի՞նչպէս սիրելի են քու բնակարաններդ, ով զօրաց Տէրը: Իմ անձս կը փափաքի ու կը մարի Տէրոջը սրահներուն համար: Երանի անոնց որ քու տանդ մէջ կը բնակին, ինչու որ քու սը-

րահներուդ մէջ մէկ օրը հազարէն աղէկ է: Աւելի ընտրեցի իմ Աստուծոյս տանը սեմին վրայ կենալ, քան թէ ամբարշտաց վրաններուն մէջ բնակիլ: Ինծի Սուրբ Հոգւոյդ ներկայութիւնը պարգեւէ, որ պատրաստ ըլլամ քու ժողովորդիդ հետ քու առջեւդ երեւնալու եւ անկեղծ սրբտով քեզի երկրպագութիւն ընելու: Ինծի իմ ոտքիս զգուշութիւն ընել տուր, որ չըլլայ թէ անսխաներու զո՞ մատուցանեմ, հապա որ իմ ընծաս քեզի ընդունելի ըլլայ, եւ անկէ եղած ատենս կարող ըլլամ ըսելու թէ Աղէկ է ինծի որ Տէրոջը տունը մտայ: Ո՛վ Տէր, քու բոլոր ժողովուրդիդ այսօր քու ներկայութիւնդ շնորհէ, եւ անոնց ամենուն այնպիսի հոգի մը տուր որ ընդունելի կերպով քու առջեւդ երեւնան եւ քու օրհնութիւնդ վայելեն: Մանաւանդ կ'աղաչեմ, քու քարոզիչ ծառայիդ իմաստութիւն եւ շնորհք տուր, որ մեզի

պէտք եղած ճշմարտութիւնները պարզապէս քարոզէ, եւ իւր խօսքովը շատերը Բրիսաոսի բերէ: Աստուք կը խնդրեմ քու սիրելի Որդւոյդ անունովը, որուն փառք հիմա ու յաւիտեանս: Ամէն:

Տէր, առտուանց չուշանալով  
Երեսդ կը փնտրեմ.  
Սիրտս կը մարի մեծ ծարաւով,  
Մինչև շնորհքդ առնեմ:

Անապատին մէջ այսպէս է  
Ճախորդն որ կը մարի.  
Կր փափաքի զեա մը զբանէ,  
Խըմէ ու չմննի:

Փառքով՝ տեսեր եմ ես, ո՛վ Տէր,  
Բու սուրբ տաճարդ լեցոսած.  
Շնորհէ տեսնեմ կրկին ես, Տէր,  
Փառքիդ տեսիլքն օրհնած:

ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆԸ ՆՍՏՈՂԻ ԾԱԾՈՒԿ  
ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Յիսուս, որ ըսած ես թէ  
Աստուած հոգի է եւ իրեն երկրպա-  
գողներուն ալ պէտք է որ հոգւով  
ու ճշմարտութեամբ երկրպագու-  
թիւն ընեն, կ'աղաչեմ, ինձի եւ այս  
քու բոլոր ժողովուրդիդ քու այն  
խոստմունքդ հիմա կատարէ թէ՛ Ուր  
որ երկու կամ երեք հոգի ժողովուած  
ըլլան իմ անունովս՝ հոն եմ ես ա-  
նոնց մէջը: Մեր աղօթքները ընդու-  
նէ, եւ մեզի օգնէ որ հոգւով ու  
ճշմարտութեամբ քեզի երկրպագու-  
թիւն ընենք:

Քու շնորհքդ տուր այս մեր քա-  
րողչին, որ առանց վախի եւ օգտա-  
կար կերպով քու ճշմարտութիւնդ  
քարոզէ, եւ մեզի ալ տուր որ իւր  
տուած խրատները խոնարհութեամբ  
ընդունինք եւ քու վախովդ ի գործ  
դնենք: Ամէն:

ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆԸ ԱՂՕԹՔԻ  
ԿԱՅՆՈՂԻ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Աստուած, քեզմէ շնոր-  
հակալ եմ որ ինձի նման մեղաւոր-  
ները քու սուրբ Աթոռիդ առջեւը  
կը կանչես, որ քեզի երկրպագու-  
թիւն ընենք: Բայց, ո՛վ Տէր, դի-  
տեմ թէ ոչ իմ անպիտան անունովս,  
եւ ոչ ալ որ եւ իցէ ուրիշ արարածի  
անունովը, հապա միայն քու սիրելի  
ու միածին Որդւոյդ արժանաւորու-  
թեամբը կրնամ քեզի մօտենալ, ու  
բովհետեւ Աստուծոյ եւ մարդոց մէջ  
տեղը մի միայն միջնորդ եւ բարեխօս  
ինքն է, եւ ինքը կատարեալ մարդ եւ  
կատարեալ Աստուած ըլլալով, կարող  
է ապրեցունել ամէն անձնք որ իր-  
մով քեզի կու դան: Ինքը մեր մեղ-  
քերուն քաւութիւն է, եւ ոչ միայն  
մերիններուն, հապա բոլոր աշխար-  
հին ալ, իւր արիւնը բաւական է զմեզ

ամէն մեղքէ սրբելու : Ո՛վ Տէր, կը խոստովանիմ թէ շատ անգամ ուրիշ բարեխօսներ բռնած, եւ ուրիշ փրկիչներ փնտռած եմ : Բայց ասկէ ետքը Քրիստոսի անունը, միայն ա՜նորը պիտի յիշեմ : Ո՛վ Տէր, կը խոստովանիմ թէ շատ անգամ այն երկրպագութիւնը, որ մի միայն քեզի կը վայելէ, ես ուրիշներու ըրած եմ, եւ շատ անգամ ալ չրթունքովս զքեզ պաշտած եմ, քանի որ իմ սիրտս քեզմէ դատուած ու հեռացած էր : Ծատ անգամ այս սուրբ տեղս եկած եմ ու միայն քանի մը բառ ըսած ու քանի մը արտաքին արարողութիւններ կատարած եմ, քանի որ իմ սրբտիս մէջ Քրիստոսի սէրը չկար, եւ ասկէ զատուելէս ետքը նորէն աշխարհային ցանկութիւններուս ետեւէն վազեցի : Ո՛վ Տէր, դուն որ ամէն գործք ամէն ծածուկ բաներու հետ, թէ բարին եւ թէ չարը, դատաստանի պիտի բերես, եւ բոլոր

անգարձ մեղաւորները յաւիտենական դժոխքի պիտի դատապարտես, քու սիրելի Որդւոյդ անունովը երեսանկեալ կ'ազաչեմ, իմ բոլոր մեղքերս ներէ, եւ իմ սիրտս դարձուր ու նորոգէ որ հիմա եւ ասկէ ետքը քեզի հնազանդիմ եւ հողուով ու ճըմարտութեամբ քեզի երկրպագութիւն ընեմ :

Միշտ ինծի յիշել տուր Քրիստոսի այն խօսքը թէ՛ «Թէ որ մէկ մարդ մը ջուրէն եւ Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել» : Եւ ինչպէս որ արդէն ջուրէն մկրտուած եմ, այնպէս ալ զիս քու Սուրբ Հոգւովդ մկրտէ, եւ զիս քու երկնային թագաւորութեանդ յարմարցուր : Ո՛վ Տէր, դուն որ սրտագէտ Աստուած ես, եւ միայն սրտով երկրպագութիւն ընողները կ'ընդունիս, եւ կեղծաւորին կը բարկանաս մինչեւ անգամ աղօթք ըրած ատենը, թող չըլլայ որ հոս դալովս ես քու

բարկութեանդ տակ իյնամ եւ իմ դատապարտութիւնս աւելցունեմ: Իմ սրտիս գէշ վիճակը, իմ ապականեալ բնութիւնս ինծի զիտցուր, եւ ինծի ճշմարիտ ապաշխարութեան հոգի մը տուր, որ մեղքերուս համար զղջալով եւ անոնցմէ ետ կենալով, ոչ թէ լոկ անունով, հապա սրտով ալ Քրիստոնեայ ըլլամ, որ ուրիշները իմ Քրիստոնէական վարմունքս տեսնելով զքեզ փառաւորեն: Ո՛վ Տէր, կը խոստովանիմ թէ շատ անգամ մարդոցմէ ամչնալով ու վախնալով, եւ անոնց երեսպաշտութիւն ընելով՝ կեղծաւորութիւն ըրած եմ, եւ քու Սուրբ Գիրքէդ հասկցած ճշմարտութիւններս խօսած չեմ, հապա սրտիս մէջ պահած եմ: Ինծի շնորհք տուր որ ասկէ ետքը ոչ թէ մարդոց խօսքովը, հապա իմ խղճմտանքովս եւ քու սուրբ Աւետարանովդ քալեմ, Քրիստոսի ըսածը յիշելով թէ՛ "Ո՛վ որ մարդոց առջեւը զիս կ'ուրանայ, ես

ալ անիկա պիտի ուրանամ իմ Հօրս առջեւը որ երկինքն է:" Եւ, ո՛վ Տէր, ոչ միայն իմ անձիս համար, հապա իմ հետս ազօթքի բոլոր կայնողներուն համար ալ կը խնդրեմ, որ զմեզ ամէնքս քու երկնային լուսովդ լուսաւորես: Քու սուրբ Աւետարանդ մեր հասկցած լեզուովը մեզի եւ մեր բոլոր ազգին թող կարգացուի ու պարզապէս քարոզուի, քանզի զիտենք թէ քու Սուրբ Գիրքդ մեր մի միայն կանոնը ըլլալու է: Այս քու տուած կանոնդ ամէն մարդու թող շուտով յայտնուի. եւ ամէն մարդու վրայ քու Սուրբ Հոգիդ առատապէս թափէ, որ ամէնքը սրտով Քրիստոսի հաւատան, եւ անոր ըրած քաւութեամբը արդարանան ու փրկուին: Մեզի եւ բոլոր մարդոց շուտով այնպիսի քարոզիչներ հանէ, որոնք իրենց ժողովուրդներուն լուսաւորութեանը համար աշխատին եւ զանոնք Քրիստոսի առաջնորդեն: Այս բոլոր



Հնորհքները անոր ամենասուրբ անունովը եւ արժանաւորութեամբը կը խնդրեմ, եւ Անոր ու Քեզի եւ Սուրբ Հոգւոյն, մի Աստուածու թեանդ, փառք ու պատիւ պիտի տամ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԳՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆԸ  
ԳԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, Հնորհակալ ենք որ մեր սիրելի ազգին քու սուրբ Աւետարանդ տուած ես մեր հասկցած լեզուովը: Կը խնդրենք որ մեր երէցներուն, վարդապետներուն, եպիսկոպոսներուն եւ իշխաններուն այնպիսի հոգի մը տաս որ ամէնքը Աւետարանին տարածմանը եւ ազգին լուսաւորութեանը համար աշխատին, այնպէս որ շուտով քու Հնորհքովդ բոլոր Հայոց ազգը ոչ միայն անունով, հապա սրտով ու գործքով ալ Քրիստոնեայ ըլլայ: Մեր բոլոր յոյ-

սերը դուրսի արարողութիւններէն կտրէ, եւ մեզի ամենուս հասկցուր թէ մեր մարմնաւոր գործերը բնաւ չեն կրնար զմեզ փրկել, եւ թէ՛ եթէ մեր սիրտերը չփոխուին, եւ քու Սուրբ Հոգւովդ նորէն չծնանինք, չենք կրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: Տէր Աստուած, զիտենք թէ առանց քու Սուրբ Հոգւոյդ ներկայութեանը քու քարոզիչներդ պարապ տեղը կը քարոզեն, եւ քու խօսքերդ պարապ տեղը կը կարգացուին, եւ թէ Աւետարանին քարոզութեամբը մարդոց դատապարտութիւնը կ'աւելնայ: Կ'աղաչենք, քու բոլոր քարոզիչներուդ եւ քու ճշմարտութիւնդ բոլոր լսողներուն վրայ քու Սուրբ Հոգիդ առատապէս թափէ, որ ոչ միայն լսող հապա կատարող ալ դանուին: Կ'աղաչենք, մեզի ամենուս այնպիսի փափաք մը տուր որ մեր ամեն օրուան աղօթքը եւ աշխատանքը քու թագաւորու-

Թեանդ զալստեանը համար ըլլայ։  
Մեզի շնորհք տուր որ մեր խօսքերովը, մեր ստակովը, մեր ազօթքներովը եւ մեր բարի օրինակովը ուրիշները Քրիստոսի բերենք, եւ զքեզ մարդոց մէջ փառաւորենք։ Եւ, ո՛վ Տէր, ոչ միայն մեզի եւ մեր ազգին համար քու շնորհքդ կը խնդրենք, հապա կը խնդրենք նաեւ որ քու ողորմութեամբդ բոլոր ազգերը յիշես եւ լուսաւորես։

Ո՛վ Տէր Աստուած, դուն որ երկիրը եւ անոր մէջի մարդիկը ստեղծեցիր, կ'ազաչենք, անոր խեղճութեանը նայէ ու ողորմէ, ինչու որ աշխարհիս մէջ բիւրաւոր մարդիկ կան որ զքեզ չեն ճանչնար եւ քեզի ըստ արժանւոյն ծառայութիւն չեն ըներ։

Օրհնեալ ըլլայ քու անունդ որ Քրիստոս յայտնուեցաւ Սատանային գործերը քակելու եւ անոր թագաւորութիւնը կորսնցունելու։ Կը

խնդրենք որ այն երջանիկ օրը շուտով բերես, երբ բոլոր ազգերն զՔրիստոս պիտի ճանչնան եւ անոր հաւատան։

Յաջողութիւն տուր այն բոլոր ընկերութիւններուն որ կը ջանան Սուրբ Գիրքը մարդոց տալ անոնց հասկցած լեզուովը. անոնց ստակը աւելցուր որ գիրքեր տպեն, եւ բոլոր մարդոց այնպիսի փափաք մը տուր որ ուրախութեամբ քու խօսքերդ ընդունին ու կարգան։ Կը խնդրենք որ ազգաց թագաւորներուն ու մեծամեծներուն եւ մանաւանդ մեր Վեհափառ թագաւորին ու իւր բոլոր Եպարքոսներուն, Գատաւորներուն եւ Կուսակալներուն իմաստութիւն եւ շնորհք տաս, որ քու խօսքդ ընդունին եւ անոր համեմատ կառավարեն։ Կը խնդրենք որ բոլոր ազգաց մէջ քարոզիչներ խրկես ու շատցունես, եւ անոնց քու Սուրբ Հոգիդ պարգեւես, որ

առանց վախի քու Սուրբ Գիրքիդ  
ճշմարտութիւնները պարզապէս քա-  
րողեն. Սուրբ Հոգւոյն ներկայու-  
թեամբը ու ներգործութեամբը բո-  
լոր աշխարհ քու լուսովդ ու փառ-  
քովդ լեցուի, եւ այն օրը շուտով  
գայ, երբ Քրիստոսի թագաւորու-  
թիւնը բոլոր մարդոց սրտերուն մէջ  
պիտի հաստատուի: Այս բոլոր շը-  
նորհքները մեր մի միայն Միջնորդին  
եւ Փրկչին անունովը կը խնդրենք,  
Որուն եւ Քեզի եւ Սուրբ Հոգւոյն  
փառք ու պատիւ պիտի տանք յա-  
ւիտեանս: Ամէն:

Երկրիս ամէն ծայրերը  
Մեզի կ'աղաղակեն.  
Մութի մէջ նստողները  
Դառն արցունքով կ'ըսեն,  
Տուէք մեզի այն լոյսը,  
Ահա կը կորսուինք.  
Ճանհանք մեր մեծ Փրկիչը,  
Որ յաւիտեան ապրինք:

Դուք որ լուսաւորուած էք  
Հուսով մը երկինքէն,  
Ճշմարտութիւն ստոված էք  
Մեր մարդասէր Փրկչէն,  
Կրնա՞ք կենաց ճըրապը  
Եղբայրներնէդ պահել.  
Կրնա՞ք մարդոց որդիքը  
Անյոյս կորուստ խրկել:

Ո՛չ, այլ ձեր ունեցածը  
Կարօաներուն տուէք.  
Եւ ձեր ձըրի առածը  
Ձըրի հաղորդեցէք.  
Մեծ փրկութեանը լուրը  
Փութով թող քարոզուի.  
Մեծ փրկութեանը ջուրը  
Ծարւողներուն տրուի:

Ո՛վ դուք, երկնից հովերը,  
Աւետարան տարէք.  
Եւ Դուք ծովուց ջուրերը,  
Անոր ճամբայ ըրէք.  
Շուտով երկրիս ծայրերը

Թող բարձրաձայն ցնծան .  
Կոտորեն բոլոր ազգերը  
Մոլորութեան շղթան :

ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՔ  
ԳԱՂՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

Ո՛վ Ատտուած , կը գոհանանք քեզ-  
մէ որ մեզի սորվեցուցեր ես քու  
Թագաւորութեանդ համար աղօթք  
ընել : Հիմա քու առջեւդ կու գանք  
եւ քեզմէ կը խնդրենք որ քու պատ-  
ուական խօսքերդ տարածուին մինչեւ  
երկրիս ծայրերը , որ ամէն մարդ  
դքեզ ճանչնայ եւ քեզի հնազանդի :

Քու քարոզուած ճշմարտութեանդ  
հետ քու Սուրբ Հոգիդ պարզեւէ ,  
որ մարդիկ լսելով՝ շուտով ընդունին  
եւ Քրիստոսի հաւատան :

Քու խօսքդ քեզի պարապ թող  
չդառնայ , հասպա քու կամքդ կատա-  
րէ , ու յաջողութեամբ ի գործ դնէ  
այն բանը որուն համար զանիկա

խրկեցիր : Ամէն արգելք վերցուր որ  
Տէրովը խօսքը յառաջանայ ու վա-  
ռաւոր ըլլայ :

Օգնէ քու քարոզիչներուդ որ խաչ-  
եալ Քրիստոսը այնպէս քարոզեն որ  
մեղաւորներն իրենց մեղքերէն զըղ-  
ջան եւ Անոր ապաւինին : Ո՛վ Տէր ,  
կը խնդրենք երէցներուն համար , որ  
քու սուրբ խօսքերդ քննելով լու-  
սաւորուին , եւ քու Սուրբ Հոգւովդ  
նորոգուին , որ պատրաստ ըլլան ժո-  
ղովուրդը արգարութեան ճամբանե-  
րուն մէջ առաջնորդելու :

Ո՛վ Հայր մեր , կ'ազաչենք , քու  
չնորհքդ տուր բոլոր Քրիստոնեանե-  
րուն որ ոչ միայն անունով Քրիս-  
տոսը դաւանին , հասպա ճշմարտապէս  
զանի սիրեն եւ անոր ետեւէն եր-  
թան , որ ամէն մէկը Յիսուսի հոգին  
ունենալով մարդոց վրայ շատ ազ-  
դեցութիւն ունենայ :

Ո՛վ Քրիստոս , քու եկեղեցիդ յիշէ .  
Թող ամէն շնորհքներով առատանայ ,

եւ օրէ օր փրկուածները աւելնան անոր վրայ: Անոր բոլոր անդամները գործունեայ ու բարեպաշտ թող ըլլան, որ Աստուծոյ թագաւորութեանը մէջ մտնողները չարգիլեն, հապա որ ամէն մէկը իւր բոլոր անձը Աստուծոյ նուիրելով՝ անոր թագաւորութեան գալստեանը համար գործէ:

Կը խոստովանինք որ մենք, քու ծառաներդ, շատ անգամ մեզք գործելով՝ մարդիկ կը դայթակղեցունենք, բայց կը խնդրենք որ քու շնորհքդ տաս բոլոր հաւատացեալներուն, որ իրենց բարի գործքերով եւ օրինակով զքեզ փառաւորեն: Ո՛վ Աստուած, դուն ըսեր ես թէ Հեթանոսները Քրիստոսի ժառանգութիւն պիտի տաս, եւ երկրին ծայրերը անոր ստացուածք: Ե՛րբ պիտի կատարես այս խոստմունքդ, ո՛վ Տէր, տակաւին շատ ազգեր զքեզ չեն ճանչնար, հապա իրենց ձեռքովը

չինուած աստուածներու երկրպագութիւն կ'ընեն: Քու լոյսդ ծագեցուր անոնց վրայ որ խաւարի մէջ կը նստին:

Շուտով թող դայ այն օրը երբ երկիրը գիտութեամբ պիտի լեցուի, եւ ամէն մարդ պզտիկ թէ մեծ զքեզ պիտի ճանչնայ: Մեր հաւատքը աւելցուր, եւ միշտ քու Սուրբ Հոգիդ շնորհէ մեզի որ մեր բոլոր ունեցած միջոցները ի գործ դնենք Քրիստոսի թագաւորութիւնը յառաջ տանելու համար: Ո՛վ Տէր, քեզի կը սպասենք, մի ուշանար, եկուր. թող քու գորութիւնդ յայանուի բոլոր ազգերուն մէջ:

Քու փրկութիւնդ ճանչցուր անոնց. եւ թող աշխարհին թագաւորութիւնը մեր Տէրոջը եւ իւր Օծեալինը ըլլայ, եւ ինքը թագաւորէ յաւիտեանս յաւիտենից. մեր սիրելի Փրկչին անունովը կը խնդրենք: Ամէն:

Պատուէր տուաւ Փրկիչն մարդկան  
Բոլոր իրեն աշակերտաց,  
Որ քարոզեն Աւետարան  
Ամէն երկիր, ամէն ազգաց:

Չայս պատուիրան դուն միշտ յիշէ,  
Ո՛վ Գրիստոսի Եկեղեցի.  
Խաչեալ Փրկիչն միշտ քարոզէ  
Անհաւատի, հեթանոսի:

Բոլոր աշխարհք Փրկչին հաւտան,  
Անով գտնեն յոյս, փրկութիւն.  
Եւ հասկընան թէ նա միայն  
է կեանք, ճամբայ, ճշմարտութիւն:

Տէ՛ր, քու խօսքովդ լուսաւորէ  
Ամէն մարդիկ բոլոր երկրի.  
Բոլոր աշխարհք քեզ ճանաչէ  
Իրրեւ մէկ հօտ միոյ Հովուի:

Քու սուրբ խոստմունքդ յաւերժական  
Մեղաւորներն դարձի բերեն,  
Որ բերկրանօք քեզ յաւիտեան  
Երկինքի մէջ փառաւորեն:

## ԿՈՅՐԻ ԱՂՕԹԻ

Ո՛վ Տէր, ինչպէս անքննելի են  
քու դատաստաններդ ու անզննելի  
են քու ճամբաներդ:

Բայց թէեւ քու դատաստաններդ  
մեզի անքննելի են, գիտենք թէ ար-  
դար ես քու բոլոր ճամբաներուդ մէջ,  
ու ողորմած քու բոլոր դորձերուդ  
մէջ: Քու խորին նախախնամու-  
թեամբդ զիս կոյր ըրած ես, այնպէս  
որ մթութեան մէջ կը քալեմ, եւ իմ  
սիրելիներուս երեսները չեմ կրնար  
տեսնել, եւ քու Սուրբ Գիրքդ չեմ  
կրնար կարդալ: Բայց քանի որ զիս  
այսպէս մեծ ցաւերու տէր ըրած ես,  
կ'աղաչեմ, ինձի համբերութեան եւ  
խոնարհութեան հոգի մը տուր որ կա-  
րող ըլլամ ըսելու, թէ Տէրը տուաւ  
ու Տէրը առաւ, օրհնեալ ըլլայ Տէ-  
րոջը անունը. եւ, Այո, ո՛վ Հայր,  
ինչու որ քու առջիդ ասանկ հաճելի  
եղաւ: Ինձի այս ցաւին հետ շատ

Հնորհքներ ալ տուած ես, զոր ուրիշներուն տուած չես: Ո՛րչափ շատ մարդիկ կան որ փրկութեան աւետիսը առած չեն, քանի որ ամէն օր քու Սուրբ Գիրքդ ինծի կը կարդացուի որ քու Հնորհքովդ իմ բնական հոգեւոր կուրութիւնս անցնի, ու վերջապէս այն օրհնեալ աշխարհն հասնիմ, ուր իմ մարմնաւոր աչքերս ալ պիտի բացուին, եւ ես իմ Տէրս ու Փրկիչս իւր փառքովը պիտի տեսնեմ: Ո՛վ Տէր, կ'աղաչեմ, թող չըլլայ որ հոգեւորապէս կոյր ըլլամ: Իմ մեղքերս ինծի տեսնել տուր, եւ Սուրբ Հոգևովդ ինծի օգնէ որ Գրիստոսի արիւնտովը թողութիւն փնտռեմ ու գտնեմ:

Ո՛վ Տէր Յիսուս, դուն որ աշխարհս կեցած ատենդ կոյրերուն ոգորմեցար, քու փրկարար զօրութիւնդ անոնց յայտնելով, ինծի ալ յայտնէ որ ես ալ քու փառքդ տեսնեմ, եւ ասկէ ետքը քեզի հետեւիմ

եւ միայն զքեզ սիրեմ: Կ'աղաչեմ, այս նոյն Հնորհքները բոլոր մարդոց ալ պարգեւէ որ շուտով իրենց հոգեւոր կուրութիւնն անցնի, եւ բոլոր աշխարհ քեզմով լուսաւորուի ու փրկուի: Զայս կը խնդրեմ քու սիրելի Որդւոյդ անունովը: Ամէն:

ՍՈՒՐԲ ԳԻՐԳԸ ԿԱՐԴԱԼ ԶԳԻՏՅՈՂԻ  
ԱՂՕԹՎ

Ո՛վ իմ Աստուածս, Հնորհակալ եմ քեզմէ որ թէեւ քու սքանչելի նախախնամութեամբդ չեմ կրնար քու Սուրբ Գիրքդ կարդալ սորվիլ, բայց անոր փրկարար ճշմարտութիւնները ինծի ուրիշներէն լսել կու տաս, քանի որ միլիոնաւորներ խորունկ մթութեան մէջ մնացած են, եւ ոչ զքեզ մի միայն Աստուածդ, եւ ոչ զԳրիստոս, իրենց Փրկիչը, կը ճանչնան: Ո՛վ Տէր Աստուած, թող մի տար որ ես քու կամբդ զիտնալով՝ զանիկա

չկատարող գտնուիմ, եւ հետեւապէս հեթանոսներէն ալ աւելի մեծ դատապարտութեան տակ խնամ: Ինծի շնորհք տուր որ Սուրբ Գիրքդ լսած ատենս անոր ճշմարտութիւնները ու պատուէրները սիրեմ ու միտքս պահեմ, եւ քու Սուրբ Հոգւոյդ օգնութեամբը զանոնք ի դործ դնեմ:

Կը խոստովանիմ թէ մինչեւ հիմա այսպէս ըրած չեմ, հապա շատ անգամ քու սուրբ խօսքերդ անհողութեամբ լսած ու շուտ մը մոռցած ըլլալով՝ անկէ բնաւ օգուտ քաղած չեմ: Այս իմ մեղքերս ինծի ներէ, եւ քու Սուրբ Հոգւովդ իմ խղճմբտանքս արթնցուր որ ասկէ ետքը ամէն կերպ մեղքէ զգուիմ ու ետ կենամ, եւ բոլոր սրտովս քեզի հնազանդիմ: Իմ սիրելի Փրկչիս անուսովը կը խնդրեմ: Ամէն:

## ԿԱՐԴԱԼ ՍՈՐՎՈՂԻ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, շնորհակալ եմ որ դեռ իմ ժամանակս չանցած ինծի պատեհութիւն կու տաս որ կարդալ սորվիմ, եւ քու Սուրբ Գիրքիդ պատուական ճշմարտութիւնները իմ հասկըցած լեզուովս կարդամ:

Գիտեմ որ եթէ ինծի չօգնես, իմ բոլոր ջանքերս զուր պիտի ըլլան, ու թէեւ յաջողիմ եւ սուրբ Աւետարանը կարդալու կարողանամ, այն ալ բոլորովին անօգուտ բան մը պիտի ըլլայ, թէ որ քու Սուրբ Հոգիդ ինծի չպարգեւես: Թող մի տար որ Սատանային փորձութեամբը կամ ուրիշներուն համոզումովը վրաս պաղտութիւն մը գայ, եւ այն պատճառաւ իմ կարդալս ձգեմ եւ ուխտազանց գտնուիմ: հապա ալ աւելի զիս արթնցուր որ ուրիշները համոզեմ, եւ անոնց ալ քու սուրբ խօսքերդ կարդալ տամ:



Քու օգնութիւնդ ինձի շնորհէ որ  
ամէն արդելքի դէմ դնեմ, եւ շու-  
տով կարգալ սորվիմ, եւ մանաւանդ  
շնորհք տուր որ Սուրբ Գիրքը կար-  
դացած ատենս խոնարհութեամբ  
քու խօսքերդ ընդունիմ, եւ իմ սըր-  
տիս մէջ պահեմ որ քեզի դէմ չմե-  
ղանչեմ:

Կ'աղաչեմ, հիմա իմ սրտիս մէջ  
այնպիսի սէր մը դիր որ նոր մարդ մը  
ըլլամ, ինքզինքս բոլորովին Քրիս-  
տոսի յանձնեմ, եւ այսուհետեւ այն-  
պէս վարուիմ որ ուրիշներուն բարի  
օրինակ ըլլամ: Չայս կը խնդրեմ  
Քրիստոսի անունովը, որ ըսեր է,  
Իմ անունովս ինչ որ խնդրէք Հօր-  
մէն՝ պիտի տայ ձեզի: Ամէն:

Յիսուս, օգնէ ինձի,  
Խիստ շատ տկար եմ ես.  
Հիմա կու դամ քեզի,  
Քանզի "Եկուր," կ'ըսես:

Յիսուս, օգնէ ինձի,  
Զի շատ տղէտ եմ ես.  
Աղօթք կ'ընեմ քեզի  
Որ ինձ սորվեցընես:

Յիսուս, օգնէ ինձի,  
Մեծ մեղաւոր եմ ես.  
Չար սիրտս կու տամ քեզի,  
Որ հիմա դուն սրբես:

Յիսուս, օգնէ ինձի,  
Ինչ պէտք է դուն գիտես.  
Այնպէս նայիմ քեզի,  
Որ միշտ դուն ինձ օգնես:

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԿԱՐԴԱԼՈՒ ԱՏԵՆ  
ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Աստուած, դուն որ քու  
Սուրբ Հոգովդ լեցուած մարդոց  
ձեռքովը այս Գիրքը գրել տուիր,  
որ մենք անով քու կամքդ սորվինք,  
կ'աղաչեմ, այն նոյն Հոգին հիմա

ինծի պարզեւէ որ խոնարհ եւ հնազանդ սրտով քու խօսքերդ կարգամ, Շնորհակալ եմ որ ինծի այսպիսի պատուական դանձ մը տուած ես : Կ'աղաչեմ, ինծի շնորհք տուր որ զանիկա իմ մեծ գանձս ընեմ, եւ բոլոր սրտովս ըսեմ, "Բու պատուիրանքներդ ոսկիէն՝ ու ազնիւ ոսկիէն աւելի սիրեցի . ս'ըչափ կը սիրեմ քու օրէնքդ . ան է ամէն օր իմ մտածութիւնս : " Ո՛վ Տէր, սրբէ զիս քու ճշմարտութեամբդ, քու խօսքդ ճշմարտութիւն է : Տէր Աստուած, քու ճշմարտութեամբդ լուսաւորէ բոլոր մարդիկ, քու կամքդ յայտնէ անոնց, Սուրբ Հոգւոյդ ազդեցութիւնները թափէ անոնց վրայ որպէս զի անոնց սիրտերը սրբուին, եւ անոնք կարող ըլլան զքեզ սիրել եւ քեզի հնազանդիլ, եւ յարմարցուին երկնային հանգստեան որ պատրաստուած է բոլոր ծառաներուդ համար : Զայս կը խնդրեմ մեր սիրելի Փրկչին անու-

նովը, որ ինքն է մեր մի միայն Միջնորդը ու Բարեխօսը : Ամէն :

### ՏԱՐԻՔԸ ԱՌԱՄ ՄԱՐԴՈՒ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Աստուած իմ, որ մանկութենէս ի վեր ամէն օր զիս զանազան վտանգներէ ազատելով եւ ամէն օր քու աստուածային ողորմութիւնդ ինծի ցուցնելով՝ մինչեւ այս իմ ծերութեանս ատենը զիս պահած ես, կը խնդրեմ որ հիմա այն ողորմութիւնդ ինծմէ չկտրես, հապա իմ աղօթքս լսես եւ ինծի պատասխան շնորհես : Կը խոստովանիմ թէ իմ մանկութենէս մինչեւ այս օրս ես ամէն օր ու ամէն ժամ մեղք գործած եմ, այնպէս որ եթէ մեղքերուս հաղարէն մէկին համար հաշիւ ուղելու ըլլայիր, բաժինս Սատանային եւ անոր հրեշտակներուն հետ դժոխքը պիտի ըլլար :

Բայց օրհնեալ ըլլայ քու սուրբ

անունդ որ Մէկը կայ որ խաչախայտին վրայ մեր մեղքերուն համար պատարագ ըրաւ, որ ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ: Քանի որ երիտասարդութեան զուարճութեանս ժամանակը շատոնցունէ անցած եւ մարմինս տկարացած է, ինծի շնորհք տուր որ քու ճշմարտութեամբ զուարճանամ եւ Քրիստոսով հոգեւորապէս զօրանամ:

Գիտնալով թէ իմ մեռնելու ժամանակս մօտ է, կը խնդրեմ որ զիս քու գալստեանդ համար պատրաստես, ու վերջապէս իմ հոգիս քու երկնային թագաւորութեանդ մէջ ընդունիս: Քրիստոսի անունովը կը խնդրեմ: Ամէն:

ՀԻՒԱՆԴԻ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, օրհնեալ ըլլայ քու անունդ որ ինծի նման անպիտան մե-

ղաւորաց աղօթքը կը լսես, եւ որ ոչ թէ մեր խօսքին կը նայիս, հապա մեր սրտին: Ասոր համար այս տրեկարութեանս անկողինին մէջ պառկած ըլլալով, Քրիստոսի անունովը աղօթքս քեզի կը ներկայացունեմ, ու կը խնդրեմ որ ոչ թէ իմ տկար խօսքերուս՝ հապա իմ կարօտութեանս համեմատ ինծի պատասխանես:

Իմ հետս եղիր, եւ իմ հիւանդութեանս մէջ ինծի քու մխիթարութիւնդ շնորհէ, եւ եթէ կամացդ համաձայն է, կը խնդրեմ որ ինծի ոյժ տաս եւ նորէն զիս ոտք հանես, որ մարմնաւոր եւ հոգեւոր զործերս կատարեմ: Բայց մանաւանդ կ'աղաչեմ, ինծի իմ բոլոր սրտովս ըսել տուր թէ Քու կամքդ, ո՛վ Աստուած, եւ ոչ թէ իմս՝ ըլլայ: Եթէ քու կամքդ ըլլայ որ այս հիւանդութեամբ մեռնիմ, կը խնդրեմ որ զիս մեռնելու պատրաստ ընես, եւ իմ

հոգիս Սատանային ձեռքէն ազատե-  
լով, զիս քու քովդ ընդունիս, որ  
հոն յաւիտեանս քեզի փառք տամ:  
Այս Հնորհքները Քրիստոսի անունու-  
վը կը խնդրեմ: Ամէն:

Հարկ է մեռնիլ, պիտի մեռնիմ,  
Դեռ չը մեռած, ով Աստուած իմ,  
Խնդիրքս քեզի մատուցանեմ,  
Դուն ալ լսէ, Տէր, կը խնդրեմ:

Ինձի հաւատք, յոյս և սուրբ սէր  
Դուն պարգեւէ, կ'աղաչեմ, Տէր,  
Որ ուզածիդ պէս միշտ փարուիմ,  
Հանդարտ ու սուրբ մահուամբ մեռնիմ:

Մահուան ժամն ևս իմ քով կեցիր,  
Հըզոր բազուկդ գլխուս տակ դիր:  
Վէրջին ցաւերս թեթեւցուր,  
Հանգիստ խաղաղ մահ մ'ի՛նձի տուր:

Հաւատքս, ո'վ Տէր, միշտ կենդանի  
Պահէ մինչև որ շունչս հատնի:  
Եւ իմ հոգիս այն անկող դայ  
Ուր հաւատքի ալ պէտք չըկայ:

## ՎՇՏԱՑԵԱԼԻ ԱՂՕԹՔ

Ո'վ Տէր, լսէ իմ աղօթքս, եւ իմ  
աղաղակս թող քեզի հասնի: Քու  
երեսդ մի ծածկեր ինձմէ իմ նեղու-  
թեանս օրը: Խոնարհեցուր ինձի քու  
ականջդ եւ ինձի պատասխան տուր,  
քանի որ քեզի կ'աղաչեմ: Նեղու-  
թեանս օրը քեզի կ'աղաչեմ, ինչու  
որ ինձի պիտի պատասխանես: Իմ  
բոլոր նեղութիւններուս մէջ դուն,  
ո'վ Տէր, իմ ապաւէնս ու զօրու-  
թիւնս ես: Անոր համար պիտի չլախ-  
նամ, թէ եւ երկիրը փոխուի ու  
լեռները ծովուն մէջտեղը ձգուին:

Ո'վ Տէր, զիտեմ որ իմ բոլոր վիշ-  
տերս եւ նեղութիւններս քու ձեռ-  
քէդ կու դան. եւ օրհնեալ ըլլայ քու  
սուրբ անունդ որ կրնամ զիտնալ թէ  
բոլորը իմ օգտիս համար կը խրկես,  
որ ես խրատուիմ եւ բոլոր սրտովս  
քեզի դառնամ:

Ո'վ Տէր, քու ողորմութեամբդ ու

երկայնատու թեամդ է որ զիս բոլորովին չես կորսնցուներ: Կ'աղաչեմ, քու Սուրբ Հոգւովդ զիս մխիթարէ, եւ քու ճամբաներուդ մէջ ինձի առաջնորդէ, ինձի իմաստութիւն սորվեցունելով՝ որ այս վիշտերուս մէջ քու խօսքդ պահեմ, ու վերջապէս կարող ըլլամ ըսելու, թէ Աղէկ եղաւ ինձի որ վշտացայ, որպէս զի քու կանոններդ սորվիմ: Օրհնեալ ըլլայ քու անունդ որ քու սուրբ խօսքէդ զիտեմ թէ Ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց՝ որ Աստուած կը սիրեն:

Ո՛վ Տէր, եթէ ճշմարտապէս զքեզ կը սիրեմ, ինչպէս որ կը յուսամ, կը խնդրեմ որ իմ մէջս քու սէրդ աւելցունես, որ բոլոր սրտովս քեզի փակչիմ, եւ հնազանդ զաւակի պէս քու կամքդ սորվիմ ու կատարեմ: Ո՛վ Տէր իմ, եթէ քու կամքդ այնպէս կրնայ ըլլալ, երեսանկեալ կը խնդրեմ որ շուտ մը զիս այս նեղու-

թեմէս ազատես, եւ շնորհես որ կրկին քու երեսիդ լուսովը քալեմ: Բայց, ո՛վ Աստուած, եթէ այնպէս չկրնար ըլլալ, կը խնդրեմ որ ինձի շնորհք տաս որ կարող ըլլամ ըսելու, թէ Անիկա Տէրն է, իր աչքերուն հաճոյ երեւցածը թող ընէ: Մանաւանդ կը խնդրեմ, որ այս վայրկենական թեթեւ նեղութեամբս սորվիմ թէ իմ հանգիստս հոս չէ ու հոս չկրնար ըլլալ. եւ քու շնորհքովդ այն երկնային հանգստեան համար պատրաստուիմ որ քու ժողովուրդիդ համար կը մնայ, ուր ոչ սուգ եւ ոչ աղաղակ եւ ոչ ցաւ պիտի ըլլայ, հապաղուն ամէն աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբես եւ քու զաւակներդ յաւիտեանս քու քովդ պիտի ուրախացունես: Կը խնդրեմ Քրիստոսի անունովը, Որուն եւ Քեզի եւ Սուրբ Հոգւոյն կը վայելէ փառք ու պատիւ հիմա ու յաւիտեանս: Ամէն:

Քաղցրութեամբ առաջնորդէ մեզ,  
 Մինչ ելլենք ցաւոց ձորէն .  
 Թող շընորհքդ զօրացունէ մեզ,  
 Խափանէ ալ վախն ամէն .  
 Զօրացուր մեզ  
 Քու անհուն շնորհքովդ, Տէր :

Թէպէտեւ ցաւ ու դառըն վիշտ  
 Մեզ ամէն կողմէն պատէ,  
 Բայց Յիսուս մեզ կը փրկէ միշտ,  
 Մեզքն, դժոխքը կը յաղթէ .  
 Խօսքն հաստատ է,  
 Տէրն պիտի դայն կատարէ :

Երանի՛ թէ պաշտէի ես  
 Քեզ, Փրկիչ իմ բարերար .  
 Ըլլամ երկնային զօրաց պէս,  
 Որ դովենք եզ անդադար .  
 Երջանիկ են,  
 Երբ պիտի ես հոն հասնիմ :

ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄԱՆԱԿ  
 ԱՂՕԹՔ

Կ'ուրախանամ, ո՛վ Աստուած, որ

դուն արեղերքին Ամենակալ կառա-  
 վարիչն ես եւ ինչ որ կ'ուզես՝ կրնաս  
 ընել : Կ'ուրախանամ որ ես քու ձեռ-  
 քըդ եմ, ինչու որ դուն բարի ես  
 եւ ամէն բան քու իմաստութեամբդ  
 ու բարերարութեամբդ կ'ընես . ու  
 երբ մարդ կը խրատես ու կը արամե-  
 ցունես, քու սիրովդ կ'ընես : Ո՛վ  
 Տէր, այս ժամանակիս դուն շատ  
 մօտեցեր ես ինձի, եւ իմ սիրելի  
 բարեկամս առեր ես, եւ իմ սիրտս  
 արտմոթեամբ լեցուած է :

Ես չեմ կրնար քեզի դէմ տրանջել,  
 քանզի իրաւունք ունիս այնպէս ը-  
 նելու : Դուն տուիր, դուն ապիր,  
 օրհնեալ ըլլայ անունդ, ո՛վ Տէր :  
 Բայց կը խնդրեմ որ քու Սուրբ Հոգ-  
 ւովդ զիս մխիթարես, եւ, թէեւ այս  
 խրատը հիմա ուրախարար չթուիր՝  
 հապա արտմական, բայց ետքը ար-  
 դարութեան խաղաղարար պտուղը  
 թող հատուցանէ :

Ո՛վ Յիսուս, դուն քանի որ աչ-

խարհիս վրայ էիր, լացողներուն հետ լացիր եւ հիմա Աստուծոյ աջ կողմը բարձրանալով ամէն սգաւորներուն հետ համակրութիւն կրնաս ունենալ. մի թողուր զիս, հապա քու թեւերուդ հովանաւորութեանը տակը պահէ: Չըլլայ որ քեզմէ հեռանամ. չըլլայ որ քու յանդիմանութիւնդ աւնարգեմ: Քու Սուրբ Հոգիդ տուր որ այս վայրկենական թեթեւ նեղութիւնս խիստ շատ գերազանց փառքի յաւիտենական առաւելութիւն գործէ ինծի: Այս խրատով թող սորվիմ թէ ինչպէս անցաւոր եմ, եւ թէ մարդուն օրերը խոտի պէս են. ինչպէս դաշտի ծաղիկը՝ անանկ կը ծաղկի, եւ անոր պէս կ'անցնի ու կ'ոչնչանայ: Օգնէ ինծի որ չերեւցած բաներուն նայիմ որ յաւիտենական են: Կարողացուր զիս, ո՛վ Տէր, քանի որ այս արտասուեաց ձորէն կ'անցնիմ, որ նայիմ այն երկրին, ուր մահ պիտի չըլլայ, ոչ սուգ, ոչ

աղաղակ, ոչ ցաւ, հաղա յաւիտենական կեանք: Գոհութիւն կը մատուցանեմ, ո՛վ Աստուած, քու սքանչելի սիրոյդ համար որ այսպիսի յոյս կու տաս անպիտան մեղաւորիս: Օգնէ ինծի որ զքեզ սիրեմ բոլոր սըրտովս. եւ եթէ քու կամքդ ըլլայ որ նեղութիւն կամ վիշտ կամ տառապանք քաշեմ, շնորհք տուր որ քեզի հնազանդիմ, զիտնալով որ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ Աստուած կը սիրեն. եւ թէ այս ժամանակի չարչարանքնիս բան մը չեն զալու փառքին քով, որ Քրիստոսի սիրածներուն պիտի յայանուի:

Այս իմ աղօթքիս ձայնը լսէ, ո՛վ Հայր իմ, եւ զիս պատրաստէ քու երկնաւոր թագաւորութեանդ, որ երբ զիս կանչելու ըլլաս, թէեւ առակնկալ ժամու մը մէջ ըլլայ այդ, ես պատրաստ գտնուիմ Քրիստոսով քու փառքիդ մէջ մտնելու: Ոչ միայն ինծի համար կ'աղաչեմ, հապա իմ

բոլոր բարեկամներուս, ու մանա-  
 ւանդ անոնց մամար որոնց յոյսը  
 Քրիստոսի վրայ հաստատուած չէ,  
 որ անոնք իրենց մեղքերը ձգելով  
 եւ Յիսուսի հաւատալով՝ պատրաստ  
 ըլլան մեռնելու եւ արդարութեան  
 պսակը առնելու զոր Քրիստոս իր  
 բոլոր սիրածներուն պիտի տայ: Իմ  
 Փրկչիս անունովը կ'աղաչեմ: Ա.մէն:

Քանի մը տարիէն

Մէկ օր մը պիտի գայ,  
 Երբ մահն ու գերեզմանն ալ  
 Պիտի հասնին մեր վրայ:  
 Ա.յն մեծ օրուան համար,  
 Ո՛վ Տէր, զիս պատրաստէ,  
 Քու արիւնովըդ զիս լուս,  
 Ու մեղքերէս մաքրէ:

Դեռ քիչ մը ջանք ալ կայ,  
 Ալ քիչ մը աշխատանք.  
 Քանի մը օր ալ վշտալից,  
 Եւ ալ պիտի չլանք:

Ա.յն քաղցր օրուան համար  
 Ո՛վ Տէր, զիս պատրաստէ,  
 Քու արիւնովըդ զիս լուս,  
 Ու մեղքերէս մաքրէ:

Քանի մը սուրբ օրեր  
 Մենք հոս պիտի վայլենք,  
 Եւ յաւիտենական հանգիստ  
 Շուտով պիտի տեսնենք:  
 Ա.յն սուրբ օրուան համար,  
 Ո՛վ Տէր, զիս պատրաստէ,  
 Քու արիւնովըդ զիս լուս,  
 Ու մեղքերէս մաքրէ:

Նա որ սիրով մեռաւ  
 Որ մեզ մահէն փրկէ,  
 Շուտով կրկին պիտի դառնայ  
 Որ մեզ իր քովն առնէ:  
 Ա.յն մեծ օրուան համար,  
 Ո՛վ Տէր, զիս պատրաստէ,  
 Քու արիւնովըդ զիս լուս,  
 Ու մեղքերէս մաքրէ:



ՀԱԼԱԾԱՆՔԻ ՀԱՄԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Յիսուս, քեզմէ շնորհակալ եմ այն մխիթարական խօսքիդ համար թէ՛ Երանի է ձեզի երբոր կը նախատեն ձեզ ու կը հալածեն ինձի համար. եւ հիմա որ քու խօսքերդ կարդալուս եւ քու ճշմարտութեանդ մտիկ ընելուս համար մարդիկ ինձի թշնամի եղան եւ զիս կը բամբասեն ու կը հալածեն, կը խնդրեմ որ ինձի սիրոյ եւ համբերութեան հոգի մը տաս որ ես քեզի նման ըլլամ, որ կը նախատուէիր ու փոխարէնը չէիր նախատեր. կը չարչարուէիր ու սպառնալիք չէիր ըներ, հապա մինչեւ անգամ դքեզ խաչը հանողներուն համար աղօթք ըրիր ըսելով, Հայր, թողութիւն տուր անոնց ինչու որ չեն զիտեր ինչ կ'ընեն:

Քու շնորհքդ ինձի տուր որ ես ալ ներողամիտ ըլլամ, եւ իմ թշնամի-

ներուս համար աղօթք ընեմ եւ անոնց հոգիներուն փրկութեանը համար աշխատիմ:

Թող ըլլայ որ անոնք իմ համբերութիւնս ու սէրս տեսնելով իրենց թշնամութիւնը ձգեն եւ քու ճշմարտութիւնդ ընդունին: Մանաւանդ կ'աղաչեմ, թող չըլլայ որ իբրեւ չարագործ մը չարչարուիմ, հապա իբրեւ քրիստոնեայ մը: Կ'աղաչեմ, այս շնորհքը պարգեւէ բոլոր անոնց ալ որոնք քու անուանդ համար հալածուած են:

Թող չըլլայ որ մէկը հալածանքի եւ նեղութեան պատճառաւ քեզմէ զատուի եւ մարդոց խօսքին հնազանդի: Ո՛վ Տէր, աւելի աղէկ է քու ժողովուրդիդ հետ չարչարուիլ քան թէ մեղաց ժամանակաւոր զուարճութիւնը վայելել: Աւելի մեծ հարըստութիւն կը սեպեմ Քրիստոսի նախատինքը քան թէ աշխարհին բոլոր գանձերը: Ինձի քու Սուրբ Հո-

զիդ չնորհէ որ մինչեւ վերջը այս  
մտքով մնամ, եւ այսպէս այս ան-  
ցաւոր աշխարհէս զատուած ատենս  
այն յաւիտենական փառաց զանձերը  
վայելեմ որ զքեզ սիրողներուն հա-  
մար երկինքը պատրաստուած են :  
Տէր Յիսուս Քրիստոսի անունովը  
կը խնդրեմ : Ամէն :

Յիսուս, աշխարհքը եմ ձրգած,  
Ու խաչս առի որ առ քեզ գամ.  
Մերկ եւ աղքատ ու անարգուած,  
Հերիք է ինձ որ քեզ ճանչնամ :

Այս աշխարհիս սուտ բարիքներ,  
Որոնց վըրայ կը յուսայի,  
Ինձի եզան պարապ բաներ,  
Ու քեզ միայն ես իմս ըրի :

Թող այս աշխարհ զիս անարդէ,  
Նոյնպէս ալ մեր Տէրոջն ըրաւ .  
Մարդոց դատումն իս կը մերժէ,  
Բայց դուն զիս մի մերժեր ըրաւ :

Բարեկամներս թող զիս ձգեն,  
Բայց, Տէր, դուն ես հաւատարիմ.  
Երբոր իմ յոյսս քու վրադ զընեմ,  
Շատ ցնծումով ես կը լցուիմ :

Թող մարդոցմէն միշտ տանջուիմ,  
Բայց իմ հոգիս քեզ կը յանձնեմ.  
Քանի որ հոս կը փորձուիմ,  
Փրկչիս սէրն ես կը վայելեմ :

Կարող չէ վիշտ ինձ վընասել,  
Երբոր Քրիստոս իմ հետքս է .  
Յաւ, նեղութիւն, տանջանք քաշել,  
Ինձ բերկրութիւն, ցնծում ալ է :

Ո՛վ իմ հոգիս, ուրախ եղիր,  
Առջեւդ փառք կայ անդադար .  
Վսեմ կոչումըդ լաւ ճանչցիր,  
Մարմնոյ վիշտէն ալ մի վախնար :

ՃԱՄԲՈՐԴԻ ՄԸ ԱՄԷՆ ՕՐՈՒԱՆ  
ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենուրեք, ամենատես ու

սուրբ Աստուած, շնորհակալ եմ քեզմէ որ այս զիշեր զիս ամէն բռնութենէ ու վտանգներէ ապահով պահեցիր :

Այսօր իմ հետս եղիր, զիս մանուանէ եւ ճամբուս ամէն վտանգներէն ազատէ : Մանաւանդ զիս պահէ որ մեղք չգործեմ այսօր : Օգնէ ինձի որ իմ սիրտս ու շրթանցս դուրս պահեմ ամէն զգուշութեամբ : Ինձի համբերութիւն ու շնորհք տուր : Օգնէ ինձի որ զքեզ ու քու սուրբ պատուէրներդ չմոռնամ : Ինձի առաջնորդէ եւ օգնէ որ այս ճամբորդութեանս մէջ քու սուրբ օրդ չպղծեմ, հապա բոլորովին սուրբ պահեմ զայն : Զօրացուր զիս որ ուր որ ըլլամ, Քրիստոսի Աւետարանը ամօթ չսեպեմ, հապա իմ Տէրս դաւանիմ ամէն մարդու առջեւ : Օրհնէ իմ բարեկամներս ու ազգականներս : Օրհնէ այս տեղի մարդիկը եւ իմ ուղեկիցներս : Տուր որ ամէնքը քեզմէ

վախնան ու Տէր Յիսուս Քրիստոսի հաւատան որ փրկուին : Ինձի ներէ իմ մեղքերս, եւ քու Սուրբ Հոգիդ ինձի շնորհէ եւ զիս միշտ պահէ քու վախիդ ու սիրոյդ մէջ : Տէր Յիսուս Քրիստոսի անուանը համար կ'աղաչեմ, Որուն եւ Քեզի եւ Սուրբ Հոգւոյն փառք ու պատիւ պիտի տամ յաւիտեանս յաւիտեանից : Ամէն :

Եհովայ առաջնորդէ զիս,  
 Զի պանդուխտ եմ ու կարօտ.  
 Շատ տկար եմ, զօրացուր զիս  
 Ամենակարող ձեռքովդ .  
 Դուն, երկնի հաց,  
 Կերակրէ զիս որ ապրիմ :

Բաց, ո՛վ Տէր, մաքրող աղբիւրը,  
 Այն ջուրով բրձչկուիմ .  
 Թող ամպին, կրակին սիւնովը  
 Մինչ վախճան առաջնորդուիմ .  
 Դուն, Փրկիչ մեծ,  
 Ինձ եղիր ոյժ եւ վահան :

Երբոր Յորդանան համիմ ես,  
Յուրա մահուան երկիւղն վերցուր.  
Դուն որ մահը մեռցուցեր ես,  
Զիս երկիւնքը, Տէր, հասցուր.  
Փառք, պատիւ քեզ  
Միշտ պիտի մատուցանեմ:

## ԿԵՐԱԿՈՒՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Շնորհակալ ենք քեզմէ, ով Հայր,  
որ մեզի պէտք եղած բարիքները  
քեզմէ չխնդրած՝ մեզի կը պարգեւես:  
Օրհնէ այս սեղանը հիմա որ քու ու  
ղորմութեամբդ պատրաստեցիր:

Շնորհէ որ ասկէ առած սնունդնիս  
քու փառքիդ համար դործածենք:  
Քրիստոսի անունովը կը խնդրենք:  
Ամէն:

## ԿԵՐԱԿՈՒՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ ողորմած եւ բարեգութ Աս-  
տուած, որ քու ձեռքերդ բանալով

բոլոր արարածներդ քու բարիքնե-  
րովդ կը լեցունես, հիմա օրհնէ մեր  
սեղանը:

Շնորհէ որ գոնութեամբ ընդու-  
նինք բոլոր պարգեւներդ: Բոլոր աղ-  
քատները յիշէ եւ զանոնք ալ քու  
ողորմութեամբդ լեցուր. մեր Փրկչին  
անունովը կը խնդրենք: Ամէն:

## ԿԵՐԱԿՈՒՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Տէր, քանի որ մեր ամէն ա-  
ւուր հացը եւ մեր բոլոր մարմնա-  
ւոր բարիքները քու ողորմած ձեռ-  
քէդ կու գան, կը խնդրենք որ քու  
Սուրբ Հոգիդ ալ մեզի պարգեւես,  
որ մեր վայելած այս բարիքներուն հա-  
մար քեզի սրտիւ շնորհակալութիւն  
տանք, եւ մեր բարի վարմունքովը  
զքեզ փառաւորենք: Յիշէ բոլոր կա-  
րօտեալները եւ զանոնք օրհնէ. եւ  
մասնաւանդ զանոնք որ քու սուրբ  
Խօսքիդ կարօտութիւն կը քաշեն:

Այս մեզի պատրաստած սեղանդ օրհնէ, եւ անով զմեզ զօրացուր, եւ մեզի շնորհք տուր որ ասկէ մեր բուրոր առած զօրութեամբը քեզի ծառայութիւն ընենք, եւ քանի որ այս մարմնաւոր հացը կը վայելենք, այն երկինքէն իջած հացէն ալ ուտենք, որմէ եթէ մէկը ուտէ, յաւիտեանս պիտի չանօթենայ: Ամէն:

ԵՐԱԽԱՆ ՄԿԻՏԵԼՈՒ ՏԱՐԱԾ ԱՏԵՆԸ  
ԾՆՈՂԱՅ ԱՂՕԹԻՐ

Ո՛վ Տէր Աստուած, բարութեանց եւ պարգեւներու Աստուածը, շնորհակալ ենք քեզմէ որ այս սիրելի զաւակը մեզի շնորհած ես: Անիկա քուկդ էր եւ դուն մեզի տուիր, ինչու որ ամէն բարի տուրք եւ ամէն կատարեալ պարգեւ վերէն քեզմէ, լուսոյ Հօրմէզ, կ'իջնէ. եւ կը գոհանանք քեզմէ որ զմեզ քու շնորհքովդ կարողացուցեր ես կրկին զանիկա

քեզի նուիրելու: Կ'օրհնենք զքեզ այս բոլոր հոգեւոր պարգեւներուն համար ալ զոր մենք կը վայելենք:

Դուն, ո՛վ Տէր, ոչ միայն զմեզ, հապա մեր զաւակներն ալ Յիսուս Քրիստոսով հաստատած նոր ուխտիդ ժառանգորդ ընելու հաճած ես:

Հիմա երբ այս մեր սիրելի զաւակը քու առջեւ պիտի հանենք ու քու փառաւոր ներկայութեանդ մէջ հանդիսաւոր կերպով քեզի պիտի նուիրենք, շնորհէ որ զայս սովորական բաներու պէս թեթեւութեամբ չընենք: Տուր որ ծանր խորհրգածութեամբ ու ջերմեռանդ զգացումներով ընենք զայն: Եւ կը խնդրենք քեզմէ որ դուն երկինքէն հաճիս այս մեր զաւակը քու որդեգրութեանդ ընդունելու:

Ո՛վ Տէր, այս ընծան որչափ որ քու առջիդ ջնչին ընծայ մըն է, սակայն մեր ամենասիրելին է. ինչ որ ունինք, այն է որ քեզի կու տանք:

Ո՛վ Տէր, մենք զանիկա ջուրով կը լուանանք եւ այնպէս քու տեսանելի եկեղեցւոյդ մէջ կ'ընդունուի. բայց դուն զանիկա քու Սուրբ Հոգւովդ լուանալով անտեսանելի եկեղեցւոյդ մէջ ընդունէ. քանզի ջուրը միայն մարմինին ազար մէկդի կ'ընէ. բայց, ո՛վ Տէր, դուն քու Հոգւովդ անոր սրտին ապականութիւնը մաքրէ որ անիկա քու ողորմութիւնովդ ու շնորհքովդ սուրբ ու անարատ ըլլայ:

Քու ողորմութեամբդ պահէ զանիկա, եւ եթէ հաճիս, ո՛վ Հայր, անոր կեանքը կարեւոր սեպելով պաշտպանէ հիւանդութիւններէ ու նեղութիւններէ, որ քու վախովդ ու շնորհքովդ մեծնալով մեր անոր համար ընելու ուխտը իւր դաւանութեամբը եւ հաւատքովը հաստատէ: Կնքէ զանիկա քու սուրբ Երրորդութեանդ անուանովը:

Կը խնդրենք որ քու ծառաներուդ

ալ կարողութիւն, խմաստութիւն ու շնորհք պարգեւես, որ մենք ալ մեր ըրած խոստմանը համեմատ այս նուիրուելու զաւակին հոգ տանինք՝ աչարջութեամբ անոր վրայ զիչեր ու ցորեկ հսկելով, զանիկա քու ճամբուդ մէջ կրթելով, ու անոր համար աղօթելով որ վերջապէս երբ այս կեանքը վերջանայ, թէ՛ քու ծառաներդ եւ թէ՛ մեր զաւակը ուրախութեամբ քու աթոռիդ առջեւը կայնինք քու սուրբ Երրորդութիւնդ օրհնելու: Յիսուս Քրիստոսի անուանովը կը խնդրենք: Ամէն:

Տէր բաղմագութ ու ողորմած, Հիմա սիրոյդ բաղուկներով Քեզ նուիրուած այս երախան Առ, նորոգէ ձերի շնորհքով:

Մեր նախահօրը արմատէն Ամէնքըս ալ մեզքով ծընանք. Օտարացանք մեր Աստուծմէն, Ու բարկութեան օրդիք եղանք:

Բայց դուն սիրով ու զըթուծեամբ  
Մեղապարտից ողորմեցար .  
Կատարեցիր անզին արեամբ  
Քու ուխտըդ , Տէ՛ր , զոր խոստացար :

Մեծ խոստումներ դուն ես տուեր  
Բարեկամիդ Աբրահամին .  
« Բոլոր ազգեր ու լեզուներ  
Քու սերունդովդ օրհնուին : »

Ի դորձ զըրիր քու խօսքըդ , Տէ՛ր ,  
Ի դորձ զըրիր անհուն սիրով .  
Մեզի հասան այս խոստումներ ,  
Ու մեր որդւոցը , Յիսուսով :

Ուստի այս երախան բերինք ,  
Հօտիդ մէջ , ո՛վ Տէր , ընդունէ .  
Մենք լոկ ջըրով մկըրտեցինք ,  
Դուն քու Հոգւովդ մկըրտէ :

Յուցուր անոր ուղիդ ճամբան .  
Նոր սիրտ անոր մէջ ըստեղծէ .  
Թող կանչուի որդի խոստման ,  
Դուն միշտ անոր առաջնորդէ :

ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԵՏ ՄԻԱՅՈՂԻ ԱՂՕԹԻ

Օրհնեալ ըլլայ քու սուրբ անունդ ,  
ո՛վ Տէր , որ այս պատուական ար-  
տօնութիւնը կու տաս որ ես քու  
տեսանելի եկեղեցւոյդ հետ միանամ .  
Չըլլայ որ անխորհրդաբար այս սուրբ  
ընկերութեան մէջ մտնելով քեզի դէմ  
մեղք գործեմ :

Եւ հիմա որ մարդոց եւ հրեշտա-  
կաց առջեւը եկեղեցւոյն անեղ ուխ-  
տը վրաս պիտի առնեմ , շնորհք  
սուր ինձի որ ուխտազանց չգըտ-  
նուիմ , հապա զգուշութեամբ եւ  
սրբութեամբ քալեմ , ինչպէս որ քու  
եկեղեցւոյդ անդամներուն կը վայե-  
լէ : Չըլլայ որ ես եղբայրներուն մէջ  
զայթակղութեան պատճառ ըլլամ ,  
հապա շնորհէ որ ջերմեռանդ ու  
քաղցր հոգի մը ունենալով՝ ամբ-  
նուն հետ սիրով վարուիմ մինչեւ  
վերջը , եւ ամենուն բարի օրինակ  
ըլլամ : Ո՛վ Տէր , ես ինձմէ բնաւ

գօրութիւնն չունիմ իմ պարտաւորութիւններս կատարելու . եւ միայն քեզի ապաւինելով, ինքզինքս բոլորովին քեզի յանձնելով, կը համարձակիմ իմ անունս հաւատացեալներուն մէջ գրել տալու, եւ ուխտ ընելու թէ ասկէ ետքը քու կըզ պիտի ըլլամ եւ քու վասքիզ համար պիտի ապրիմ: Իմ հաւատքս ու սէրս աւելցուր, եւ քու Սուրբ Հոգիզ առատապէս պարգեւէ ինծի որ այսուհետեւ քու հեազ քալեմ մինչեւ որ մահը գայ, եւ այն ատենը քու ջնորհքովք սուրբերուն եւ հրեշտակներուն կարգը, քու երկնային թագաւորութեանդ մէջ, ընդունուիմ:

Միայն Քրիստոսի անունովը եւ արժանաւորութեամբը կը խնդրեմ: Ամէն:

Մի թողուր զիս, ո՛վ Աստուածըս,  
Թող քեզմէ չը մոլորիմ:

Ուժովցուր, Տէր, իմ քայուածքըս,  
Եթէ ոչ ես կ'ընկըզմիմ:

Պահպանէ զիս,

Պաշտպանէ զիս,

Որ երբէք չը կորսուիմ:

Աշխարհիս անթիւ հոգերը

կը վաւրնտեն զիս, Տէր, քեզմէ .

Սատանան իր հրապոյրները

իմ առջեւ կը դնէ .

Վարմերովը,

Նենդերովը

Թող զիս չը մոլորցընէ:

Ով Յիսուս, ցրուէ վախերըս,

Քու խոստամունքդ են հաստատուն:

Դուն կրնաս ներել մեղքերըս,

Ինձ լսել աուր ձայնդ սիրուն:

Դուն ես լոյսըս,

Դուն ես յոյսըս,

Մի միայն Փրկիչըս դուն:



Ո՛հ թէ ես սիրոյդ ուժովը,  
 Տէր Յիսուս, քեզի ձգուիմ.  
 Ինձ օգնէ Հոգւոյդ շնորհքովը,  
 Աշխարհէս հըրաժարիմ.  
 Տէ՛ր, կանչէ զիս,  
 Ու քաշէ զիս,  
 Ես ալ պիտի հետեւիմ:

Իմ ըշտեմարանիս ներսը  
 Դուռը ետեւէս դոցեմ,  
 Ու սրտիս անկեղծ աղերսը  
 Աստուծոյս մատուցանեմ.  
 Արարիչքս  
 Եւ Փրկիչքս  
 Գազանի տեղը թող դանեմ:

ԻՒՐ ՄԵՂՔԵՐԸ ԶԳԱՑՈՂ ՄԵՂԱԽՈՐԻ  
 ԱՂՕԹՔ

Դուն, ո՛վ Տէր, որ բոլոր մար-  
 դոց սրտերը կը քննես ու անոնց  
 բոլոր ծածուկ խորհուրդները զի-  
 տես, քննէ հիմա իմ սիրտս եւ զիտ-

ցիր իմ խորհուրդներս: Նայէ, Տէր,  
 քանզի կը զգամ որ չար ճամբու մէջ  
 եմ: Զիս ղէպ ի յաւիտենական ճամ-  
 բան առաջնորդէ: Այս իմ մեղքերս  
 մինչեւ երկինքը հասան ու անօրէ-  
 նութիւններս մինչեւ ամպերը բարձ-  
 րացան:

Գիտեմ որ զքեզ բարկացուցած եմ,  
 եւ արդարապէս արժանի եմ յաւի-  
 տենական դատապարտութեան: ար-  
 ժանի եմ որ քու ողորմութեանդ  
 դռներն այսօր դոցես եւ զիս քու  
 առջեւէդ յաւիտեանս վռնտես: Պի-  
 տի չհամարձակէի այս անթիւ մեղ-  
 քերովս քու առջեւդ գալու, սակայն  
 կու գամ քեզի անառակ որդւոյն պէս:  
 Հայր, մեղանչեցի քեզի դէմ, եւ ալ  
 արժանի չեմ քու որդիդ ըսուելու:  
 Չեմ համարձակիր վեր քեզի նայե-  
 լու, սակայն քեզի համար լսեցի, ո՛վ  
 զթած Յիսուս, թէ դուն մեղաւորնե-  
 րը փրկելու համար մեռար: լսեցի  
 թէ կ'ըսէիր, Եկէք խնձի բոլոր յոգ-

նած ու բեռնաւորածներ, եւ ես ձեզ պիտի հանգչեցընեմ: Ահա քու հըրաւէրիդ համեմատ քեզի կու դամ իմ բոլոր մեղքերովս եւ անօրէնութիւններովս բեռնաւորուած, եւ զանոնք քու ոտքերուդ առջեւ կը դնեմ:

Կը բերեմ քեզի իմ դատապարտեալ հողիս եւ քու խաչիդ առջեւ երեսանկեալ կ'աղաչեմ, զթա անոր վրայ որ մարելու վրայ է:

Ո՛վ Փրկիչ, դուն քու կեանքդ տուիր, որպէս զի ես կեանք ունենամ. մի թողուր որ իմ անհոգութեամբս կորսնցունեմ զայն, զոր դուն շատ չարչարանքով ձեռք ձգեցիր: Կ'աղաչեմ, յիշէ քու բոլոր նեղութիւններդ եւ չարչարանքներդ, յիշէ քու խաչդ եւ մահդ: Չէ՞ որ ատոնք բոլորը ինծի համար կրեցիր: Միթէ պիտի կորսնցունեմ քու շնորհացդ ապաւինած անօգնական մեղաւոր մը: Տէր, զիս քու խաչիդ առջեւէն մի վտընտեր, երբ կը համարձակիմ ըսե-

լու թէ Քու հանդերձէդ բռնած եմ եւ չեմ ուզեր զքեզ թողուլ մինչեւ որ զիս չօրհնես:

Քու խաչիդ առջեւ ինկած եմ. եթէ վերջապէս զիս պիտի դատապարտես, հոս քու խաչիդ տակ, հոս պիտի կորսուիմ: Այո, սեղանին եղջիւրներէն բռնած պիտի լսեմ իմ դատապարտութեանս վճիռը. սակայն, ո՛վ զթառատ Փրկիչ, քու անառակ ծառայիդ բարութեանը համար երաշխաւոր եղիր: Շատեր հոս շնորհք գտան, ինչ՞ու ես պիտի չգտնեմ: Միթէ ձեռքդ փրկելէն կարճըցա՞ւ: Չէ՞ որ դուն նոյն Փրկիչն ես, կարող եւ կամեցող քեզի եկած մեղաւորներն ընդունելու: Ահա ես ալ անոնցմէ մէկն եմ որ փրկութեան համար քեզի ապաւինած եմ. Երկնցուր քու ոսկի դաւաղանդ եւ պիտի ապրիմ, թէեւ արժանի չեմ. քու սեղանէդ ինկած փշրանքով կերակրէ զիս, եւ ինծի ալ տուր այն քաղցր

պատասխանը զոր ատենօք տուիր,  
 Բու հաւատքդ քեզ փրկեց, գնա խա-  
 ղազու թեամբ. եւ բոլոր յաւիտենա-  
 կանութեան մէջ պիտի դովեմ քու  
 օրհնեալ անունդ: Ամէն:

Տէ՛ր, այցելութեամբդ երկիրը  
 Շուտ կ'ընես խիստ պողաբեր.  
 Հիմա օրհնութեանդ անձրեւը  
 Թող կաթի իմ վրաս ալ, Տէ՛ր.  
 Վրաս ալ, Տէ՛ր,  
 Վրաս ալ, Տէ՛ր,  
 Թող կաթի իմ վրաս ալ, Տէ՛ր:

Մի անցնիր ինձմէ, ո՛վ Հայրըս,  
 Կորսուածըս դուն վնտուէ.  
 Զրիապէս ներէ մեղքերըս,  
 Գթութիւնդ ինձ պարգեւէ.  
 Ինձ ալ, Տէ՛ր,  
 Ինձ ալ, Տէ՛ր,  
 Գթութիւնդ ինձ պարգեւէ:

Մի անցնիր ինձմէ, Փրկիչըս,  
 Բեզ սիրեմ, քեզի յարիմ.  
 Բաղցըր ձայնդ լսէ ականջըս,  
 Զիս կանչէ, քեզ հետեւիմ.  
 Զիս ալ, Տէ՛ր,  
 Զիս ալ, Տէ՛ր,  
 Զիս կանչէ, քեզ հետեւիմ:

Ուրիշներ քու ձայնդ լսեր են,  
 Եւ գըտեր են փրկութիւն,  
 Բու շքնորհքդ ընդուներ են.  
 Տուր ինձի ալ օրհնութիւն.  
 Ինձ ալ, Տէ՛ր,  
 Ինձ ալ, Տէ՛ր,  
 Տուր ինձի ալ օրհնութիւն:

Թէեւ քեզ շատ հեղ մուցած եմ,  
 Սուրբ Հոգի, մ'անցնիր ինձմէ.  
 Բեզ մեղքովս վշտացուցած եմ,  
 Ո՛հ, ներէ եւ զիս փրկէ.  
 Զիս ալ, Տէ՛ր,  
 Զիս ալ, Տէ՛ր,  
 Ո՛հ, ներէ եւ զիս փրկէ:

ԻՒՐ ՄԵՂՔԵՐԸ ԶԳԱՅՈՂԻ ԱՂՕԹՔ

Ողորմէ ինծի, ոյ Աստուած, քու ուղորմութեանդ համեմատ, Գու առատ դթութեանդ համեմատ ջնջէ իմ յանցանքներս:

Իմ անօրէնութենէս քոլորովին իս լուա,

Ու իմ մեղքէս իս սրբէ:

Վասն զի ես կը ճանչնամ իմ յանցանքներս,

Ու իմ մեղքս միշտ իմ առջիս է:

Գեղի՛ միայն քեզի դէմ մեղանչեցի, Եւ քու աչքերուդ առջեւը չարութիւն ըրի:

Որ արդար ըլլաս խօսքերուդ մէջ, Ու անարատ ըլլաս դատաստանիդ մէջ:

Ահա ես անօրէնութիւնով ծնայ,

Ու իմ մայրս մեղքով յղացաւ զիս:

Ահա դուն ճշմարտութիւն կ'ուզես երիկամունքներու մէջ,

Ու ծածուկ տեղը իմաստութիւն պիտի գիտցընես ինծի:

Չոպայի մշտիկով մաքրէ զիս, ու մաքուր ըլլամ:

Չիս լուա, ու ճիւնէն աւելի ճերմակ ըլլամ:

Յնծութիւն եւ ուրախութիւն լսել տուր ինծի:

Թող ցնծան ան ոսկորները որ կոտրեցիր:

Իմ մեղքերէս երեսդ ծածկէ,

Ու քոլոր անօրէնութիւններս ջնջէ:

Ո՛վ Աստուած, իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ:

Եւ իմ ներսի զիս ուղիղ հոգի նորոգէ:

Իս երեսէդ մի՛ ձգեր,

Ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի հաներ:

Գու փրկութեանդ ցնծութիւնը ինծի ետ դարձուր,

Ու կամաւոր հոգի՛ մը թող հաստատէ զիս:

Ամբարիշտներուն պիտի սօրվեցընեմ քու ճամբաներդ,

Ու մեղաւորները քեզի պիտի դառնան:

Ով Աստուած՝ իմ փրկութեանս Աստուածը,  
 Փրկէ զիս արիւնհեղութենէն .  
 Լեզուս ցնծութեամբ պիտի խօսի  
 քու արդարութեանդ վրայով :  
 Ով Տէր, իմ շրթունքներս բաց,  
 Ու բերանս պիտի պատմէ քու գովութիւնդ :  
 Վասն զի զոհի չես հաճիր որ անիկա  
 մատուցանէի .  
 Դուն ողջակէզի ալ չես հաւնիր :  
 Աստուծոյ զոհը կոտրած հողին է .  
 Կոտրած ու խոնարհ սիրտը, ով Աստուած,  
 դուն չես անարգեր :  
 Քու բարեսիրութեամբդ Սիօնին բարիք ըրէ,  
 Երուսաղեմին պարիսպները շինէ :  
 Անատենը պիտի հաւնիս արդարութեան  
 զոհերուն՝  
 Ողջակէզներուն ու բոլորովին այրուած  
 զոհերուն .  
 Անատենը քու սեղանիդ վրայ զուարակներ  
 պիտի մատուցանեն :

Աստուած ողորմած, ինծի ողորմէ,  
 Անհուն զթութեամբդ իմ մեղքս քաւէ .  
 Ամէն յանցանքէս լուս, զիս մաքրէ,  
 Իմին մեղքերէս, ո՛վ Տէր, զիս սրբէ :  
 Քանզի յանցանքներս յայտնի են ինծի,  
 Մեղքս ալ միշտ աչքիս առջին կը կայնի,  
 Մինակ քեզի դէմ ես մեղանչեցի .  
 Ու մեծ չարութիւն առջեւդ դործեցի :  
 Թէ սր զիս պատժես՝ դուն կ'արդարանաս,  
 Ու դատաստանովդ ամբիժ կը մընաս .  
 Քանզի յանցանքով մօրմէս յղացայ,  
 Ծնած ատենս ալ մեղքի մէջ ծընայ :  
 Մաքրէ մշտիկով որ ես սրբանամ,  
 Զիւնէն աւելի ճերմակ ես ըլլամ .  
 Ամէն մեղքերէս դուն զիս ազատէ,  
 Մխիթարութեամբդ ուրախ զիս ըրէ :  
 Ո՛վ Տէր, ներսի դիս սուրբ սիրտ ստեղծէ,  
 Ինծի նորոգուած հոգի մը շնորհէ .  
 Զիս քու երեսէդ ընաւ մի ձգեր,  
 Ու քու Սուրբ Հոգիդ ինձմէ մի հաներ :

Քանզի, ով Տէր, դուն զո՛հեր չես կամիր,  
Եւ ողջակէզներ բընաւ չես հաւնիր.  
Տէրոջ հաւնած զո՛հն կոտորած հոգին է,  
Խոնարհ սրտին սէրն անոր հաճոյ է:

ՓԱՐԻՍԵՑԻՈՅՆ ՈՒ ՄԱՔՍԱՒՈՐԻՆ  
ԱՂՕԹՔԸ

Երկու մարդ ելան տաճարը աղօթք  
ընելու, մէկը փարիսեցի ու միւսը  
մաքսաւոր: Փարիսեցին կայներ էր,  
ու առանձին այսպէս աղօթք կ'ընէր.  
Ով Աստուած, շնորհակալ եմ քեզմէ,  
որ ուրիշ մարդոց պէս չեմ՝ յափշտա-  
կող, անիրաւ, չնացող, եւ կամ աս  
մաքսաւորին պէս. հասցա շաքաթը  
երկու անգամ ծոմ կը պահեմ, ու  
բոլոր ստացուածքիս տասանորդը  
կու տամ: Եւ մաքսաւորը հետուն  
կայներ էր, ու չէր ուզեր աչքն ալ  
երկինքը վերցընել, հասցա իր կուրծ-  
քը ձեռելով կ'ըսէր, Աստուած, ու  
զորմէ ինձի մեղաւորիս: Չեզի կ'ը-  
սեմ թէ ասիկա ան միւսէն աւելի  
արդարացած իր տունը իջաւ:

Եզուկ եմ ես, ո՛վ Տէր, աղքատ,  
Մերկ եմ, ու կոյր եւ յուսահատ.  
Քեզմէ ի դատ որո՞ւ երթամ,  
Գառն Աստուծոյ, քեզի կու դամ:

Իմ մէջս չկայ արդարութիւն,  
Յոյս, փրկութիւն կամ քաւութիւն.  
Ինչպէս որ եմ քու ոտքդ կ'իյնամ,  
Գառն Աստուծոյ, քեզի կու դամ:

Դուն քու արիւնըդ թափեցիր,  
Եւ խեղճ մեղաւորիս ըսիր,  
«Քու փրկութիւնըդ ես կ'ըլլամ.»  
Գառն Աստուծոյ, քեզի կու դամ:

Դուն ալ սիրով զիս ընդունէ,  
Բոլոր մեղքերըս, Տէր, ներէ.  
Լուա զիս որ մաքուր ըլլամ.  
Գառն Աստուծոյ, քեզի կու դամ:

ԴԱՐՁԻ ԵԿԱՇ ՄԵՂԱՒՈՐԻ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Աստուած իմ, կը գոհա-

նամ քեզմէ այն բոլոր բարիքներուն համար որ ինձի տուած ես: Կը գուհանամ քեզմէ որ ինձի Յիսուս Քրիստոսով փրկութեան յոյս տուած ես: Ծնորհակալ եմ որ դուն իմ Հայրս ես, եւ կրնամ քու աթոռիդ առջեւ գալ ո՛չ իբրեւ օտար մը, այլ իբրեւ քու որդիդ:

Հայր իմ, տուր որ քու որդիդ ըլլալուս վայելուչ, սուրբ ու մաքուր ընթացք մը բռնեմ: Տուր որ իմ ճամբաս օրէ օր լուսաւորուի մինչեւ որ կատարելութեան հասնիմ: Օրհնէ զիս որ օրէ օր աւելի քեզի մօտենամ, իմ մեղքերս անսնելով եւ տկարութիւնս զգալով խոնարհ սիրտ մը ունենամ, եւ իմ յոյսս բոլորովին իմ վրայէս կտրելով քու վրագ դընեմ: Տուր որ այնպիսի հոգի մը ունենամ որ իմ Փրկչիս, Յիսուս Քրիստոսի մէջ կար: Տուր որ մեղքին խաբէական հաճոյքը մերժեմ ու անոր մեռնիմ: Թող իմ հաճոյքս քեզ-

մէ ըլլայ եւ իմ բոլոր խորհուրդներս եւ ջանքս ըլլան զքեզ, իմ սիրելի Հայրս, հաճեցունել:

Թող քու կամքդ կատարուի իմ վրաս: Զիս քու ձեռքդ գործիքի մը պէս գործածէ քու անուանդ փառքին համար: Զըլլայ որ մեղաւորները իմ շար գործերս տեսնելով քեզմէ հեռու մնան, այլ տուր որ շատերուն դարձի գալուն միջոց մը ըլլամ: Գու Սուրբ Հոգիդ առատօրէն թափէ իմ վրաս որ ես Սնով առաջնորդուիմ: Ո՛վ Տէր, դուն որ սիրոյ աղբիւրն ես՝ տուր որ ես սիրով լեցուիմ, զքեզ սիրեմ ամէն բանէ աւելի, եւ իմ ընկերներս իմ անձիս պէս: Ինձի աղօթքի հոգի մը տուր որ ես կարող ըլլամ իմ բոլոր կարօտութիւններս քեզի յայտնելու: Իմ տկարութեամբս թող քու զօրութիւնդ յայտնուի: Ամէն ատեն եւ ամէն բանի մէջ դուն փառաւորուէ, եւ ես քու փառքովդ ուրախանամ:

Իմ սիրելի Փրկչիս անունովը կը խնդրեմ: Ամէն:

Ո՛վ Տէր, մեզի պատուիրեցիր  
Որ սուրբ ըլլանք սրտով.  
Սրբոց միայն երեսէկ սուրի  
Որ քեզ տեսնեն աչքով:

Ո՛վ Սուրբ Աստուած, դուն զիս սրբէ  
Ամէն տեսակ մեղքէն.  
Անմահ հոգիս դուն ազատէ  
Մեղաց պատճառներէն:

Դուն իմ սրտիս նոր սէր ազդէ  
Որ սուրբ ըլլալ ջանամ.  
Եւ իմ հոգիս լուսաւորէ  
Որ սուրբ օրէնքդ ճանչնամ:

Իմ սիրաբա, Տէր, քեզի դարձուր  
Որ միշտ մեղքէն փախչիմ.  
Դուն Սուրբ Հոգւովդ ինձի շնորհք  
սուր  
Որ քեզ միայն փակչիմ:

Ես կը բաղձամ սուրբ ըլլալու,  
Որպէս զի քեզ տեսնեմ.  
Ես կը ցանկամ սուրբ ըլլալու,  
Որպէս զի դրախտդ մտնեմ:

ԻՆՔՁԻՆՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՆՁՆՈՂ  
ՄԵՂԱԽՈՐԻ ԱՂՕԹՔ

Ո՛վ Հայր իմ, ես թշուառ, կորսուած մեղաւոր եմ: Քեզի, քեզի դէմ մեղք գործած եմ իմ բոլոր օրերս. եւ դուն արդար պիտի ըլլաս եթէ զիս քու երեսէդ վարնտես, ինչու որ դժոխքի արժանի եմ. բայց երկայնմըտութեամբ Սուրբ Հոգւովդ զիս կանչած ես, եւ Քրիստոսի անունովը կը համարձակիմ քեզի մօտենալ եւ քեզմէ ներում խնդրել: Շատ ջանացած եմ ինքզինքս մաքրել եւ պատրաստել քու սուրբ ներկայութեանդ, բայց չեմ կրցած:

Քեզմէ ետ կենալովս իմ մեղքերս կը շատնան, եւ իմ սիրտս կը խըս-



տանայ: Գառն Աստուծոյ, քեզի կու  
զամ. ինչպէս որ եմ՝ այնպէս կու  
զամ, եւ քու ոտքդ կ'իջնամ: Իմ յոյ-  
սըս քեզմէ է. իմ անձս քեզի կը  
յանձնեմ. կը խնդրեմ որ զիս ըն-  
դունիս:

Ո՛վ Տէր, թէեւ իմ մեղքերս կըրկ-  
նակի կարմիրի պէս են, քու պատ-  
ուական արիւնովդ ձիւնի պէս ճեր-  
մակ կրնան ըլլալ: Ո՛վ Տէր, զիս  
դուրս մի հաներ, ինչու որ քեզմէ  
ի դատ ուրիշ Փրկիչ մը չկայ: Դուն  
իմ մեղքերուս համար վիրաւորուե-  
ցար, եւ իմ անօրէնութիւններուս  
համար ծեծուեցար. ես միայն քու  
վէրքերովդ պիտի բժշկուիմ: Կը հա-  
ւատամ, Տէր, օգնէ իմ անհաւատու-  
թեանս: Զքեզ կը սիրեմ, իմ սէրս  
աւելցուր եւ զիս բոլորովին քուկը  
ըրէ:

Զիս լուա ու մաքրէ այն արիւ-  
նով զոր խաչափայտին վրայ թա-  
փեցիր, որ քու շնորհքովդ քու երկ-

նային թաղաւորութեանդ համար  
պատրաստուիմ, եւ վերջապէս հոն  
հասնելով զքեզ յաւիտեանս փառա-  
ւորեմ: Ամէն:

Ո՛վ խաչեալ Փրկիչ Քրիստոս,  
Որ սիրող ես իմ հոգւոյս,  
Քեզ միայն կը պաղատիմ,  
Ողորմէ ինձ, եղկելոյս.  
Թող այն ջուրըն եւ արիւնն  
Որ կողէդ, Տէր, կը վաղէ,  
Հոգիիս ամէն մեղքերն  
Մաքրելով զիս բժշկէ:

Արցունքներս թէեւ վազեն  
Իմ աչքէս առատապէս,  
Նախանձով թէեւ իմ սիրտս  
Միշտ վառի յոյժ սաստկապէս,  
Ո՛հ, կարող չեն զիս սրբել  
Իմ մեղքէս եւ զիս մաքրել.  
Այլ, Փրկիչ իմ, դուն միայն,  
Դուն կրնաս մեղքերս քաւել:

Երբ հասնի իմ շունչըս, Տէր,  
 Երբ մահուամբ աչքերս գոցեմ,  
 Անձանօթ երկիրն հասնիմ,  
 Աթոռիդ վրայ քեզ տեսնեմ,  
 Ո՛վ խաչեալ Փրկիչ Քրիստոս,  
 Երբ ես քու առջիդ կախիմ,  
 Տուր ինձի, Տէր, կ'աղաչեմ,  
 Որ զրկիդ մէջ ես հանգչիմ:

Ինչպէս որ եմ մեղքով լեցուած,  
 Խեղճ մեղաւոր ու կորսուած,  
 Աչքերս դէպ ի Փրկիչդ ուղղած,  
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:

Ինչպէս որ եմ, չսպասելով  
 Հոգիս սրբել պարապ յոյսով,  
 Քու արիւնիդ լոկ նայելով,  
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:

Ինչպէս որ եմ շատ տանջուած,  
 Ու բաղմաթիւ մեղքով պատած,  
 Ասդիս անդին միշտ տատանած,  
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:

Ինչպէս որ եմ, դուն, Տէր, գիտես.  
 Իմ մեծ մեղքերըս կը ջնջես,  
 Աղտոտ հոգիս զուտ կը սրբես.  
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:

Ինչպէս որ եմ, այնպէս կու գամ,  
 Շնորհէ որ միշտ քու քովդ ըլլամ,  
 Որ յաւիտեան երեսդ տեսնամ,  
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:

ԻՆՔՁԻՆՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՒԻՐՈՂԻ  
 ԱՂՕԹՔ

Ո՛վ օրհնեալ Յիսուս, քանի որ  
 քեզի կը մօտենամ քու սէրդ յիշելու  
 եւ ինքզինքս քեզի նուիրելու, շնոր-  
 հէ որ քու ներկայութիւնդ զգամ եւ  
 քու հետդ խօսիմ, ինչպէս որ բա-  
 րեկամ մը իր բարեկամին հետ կը  
 խօսի: Ո՛հ, ի՛նչ մեծ արտօնութիւն  
 մըն է այս զոր դուն քու զաւակնե-  
 րուդ կու տաս, որ քեզի գան եւ ի-  
 րենց մեղքերը խոստովանին, ողոր-

մութիւն գտնեն եւ պէտք եղած շը-  
նորհքն ընդունին քեզմէ :

Շնորհակալ եմ որ միայն քու ար-  
եանդ արժանաւորութեամբն է որ  
կրնամ քեզի մօտենալ : Կը գոհանամ  
քեզմէ որ ինձի ցուցուցիր կենաց  
ճամբան եւ բնական խաւարէն քու  
սքանչելի լոյսիդ կանչեցիր, ու իմ  
սիրտս նորոգեցիր քու անդին ար-  
եամբդ, եւ հիմա քու պատուական  
խոստումներդ յիշելով կու գամ իմ  
երախտազիտութիւնս յայտնելու եւ  
իմ անձս քեզի նուիրելու :

Ո՛վ օրհնեալ Յիսուս, գիտեմ որ  
իմ սիրտս մեղքով լեցուած է, բայց  
քու առատ ողորմութիւնդ յիշելով  
կու գամ ու կը խնդրեմ որ զիս սըր-  
բես եւ պատրաստես քեզի ծառայե-  
լու հոս, եւ վերջը քու հետդ թա-  
ղաւորելու :

Ո՛վ Տէր, կ'ուզեմ իմ անձս ընծա-  
յել կենդանի զո՞հ մը, բոլորովին քու-  
կըդ ըլլալու . իմ կամքս քուկիդ հա-

մաճայն թող ըլլայ : Տուր որ միշտ  
քու կամքիդ համեմատ ապրիմ եւ  
պտուղ բերեմ, ինչպէս որ որթին  
վրայ հաստատուած ճիւղը պտուղ  
կը բերէ :

Ո՛վ Տէր, շնորհէ որ իմ անձս ու-  
րանամ, ու քու փառքդ փնտռեմ եւ  
ուրիշներուն բարիք ընեմ եւ զանոնք  
դարձի բերելու աշխատիմ : Եւ վեր-  
ջապէս քու հետդ ըլլամ, քու փառ-  
քդ տեսնեմ եւ զքեզ փառաւորեմ  
յաւիտեանս յաւիտենից : Ամէն :

Ես յաւիտեան հանգիստ կ'ըլլամ .

Միայն քու քովդ, Յիսուս .

Բու վէրքերէդ կեանք կը ստանամ,  
Փրկիչ, դուն ես ինձ յոյս :

Կը հաւատամ, կը հաւատամ,

Որ Յիսուսի մահուամբ,

Եւ իւր արեամբ, անդին արեամբ,

Մեզքէն ազատ կ'ըլլամ :

Խաչեալ Փրկիչս եւ իմ Աստուածս,  
Մեղքի բացուած ազրիւր,  
Քու արիւննդ սրսկէ վըրաս,  
Պահէ զիս միշտ մաքուր:

Լուա զիս, Տէր, եւ քուկդ ըրէ,  
Լուա, եզիր դուն իմս.  
Չէ թէ միայն ոտքերս մաքրէ,  
Ձեռքերըս, զլուխս եւ սիրտս:

Քու արիւնովդ իմ սիրտս սրբէ,  
Մինչ քեզ տեսնեմ աչքով.  
Փառաց յոյսով աչքերս դոցէ,  
Հոգիս լեցուի սիրով:

## ՄՕՐ ՄԸ Ա.Ղ.ՕԹՔ

Ո՛վ Տէր, դուն ինծի պարգեւած  
ես մայր ըլլալու ամենամեծ արտօ-  
նութիւնը. իմ ձեռքս տուած ես  
անմահ էակ մը որ վարժեմ զանի այս  
եւ յաւիտենական կենաց համար: Կը  
գոհանամ քեզմէ քու սիրոյդ այս նոր

նշանին համար. բայց, ո՛հ, երկնաւոր  
հայրս, օգնէ ինծի որ այս պարգե-  
ւին հետ եկած պատասխանատու-  
թիւններս հասկնամ: Օգնէ ինծի որ  
Աննային հաւատքովը այս զաւակը  
քեզի նուիրեմ: Որչափ որ ապրի  
թող քուկդ ըլլայ: Եւ ո՛հ, սիրելի  
Փրկիչ, դուն որ պզտիկները քեզի  
կանչեցիր, զայս ալ կանչէ, եւ քու  
ձեռքդ անոր զլխուն վրայ զիր եւ  
անոր սիրտը կնքէ որ բոլորովին քու-  
կրդ ըլլայ: Թող Սուրբ Հոգիդ զին-  
քը մեղքէ սրբէ եւ անոր սրտին մէջ  
սկսի այն օրհնեալ գործը որ զանի  
պիտի պատրաստէ երկնից ժառանգ  
ըլլալու եւ երկրիս վրայ օգտակար  
կեանք մը անցունելու: Շնորհէ, Տէր,  
որ երկար ապրի այս կորսուած աշ-  
խարհիս օրհնութիւն մը ըլլալու, ու-  
րիշները Քրիստոսի բերելով: Բայց,  
ո՛հ, եթէ քեզի աղէկ երեւնայ որ  
չուտ փոխադրես զանի այս աշխար-  
հէս, կը խնդրեմ որ քու զաւակդ

ըլլալուն ապացոյցը յայտնես : Մինչեւ անգամ քանի որ երախայ է, թող անոր անունը գրուի Կենաց զբքին մէջ :

Օգնէ որ ինքզինքս կառավարեմ, որպէս զի կարող ըլլամ զանի կառավարել . քանզի, ո՛վ Տէր, ես անյարմար եմ մօր մը բոլոր պարտաւորութիւնները կատարելու : Ես պիտի իյնամ, եթէ դուն չօգնես ինծի : Գիտեմ որ բոլոր իմաստութիւնը քու քովդ կը գտնուի, եւ ինծի պատուիրած ես որ ամէն պարագայի տակ քեզի դամ : Դուն ինծմէ աւելի կը սիրես այս զաւակը, եւ զիս պարագ պիտի խրկես : Ո՛չ, սիրելի Փրկիչ . կը հաւատամ բոլոր ըսածներուդ . օգնէ որ օրէ օր ու ժամէ ժամ քեզի դամ պէտք եղած զօրութեան եւ իմաստութեան համար : Շնորհէ որ երբ այս կեանքը վերջանայ, ես ալ այս զաւակիս հետ քու աջ կողմդ գտնուիմ շատ ուրիշներու

հետ, որոնք մեր ջանքովը պիտի գան փրկութեան, եւ հոն քու սիրոյդ համար օրհնենք զքեզ յաւիտեանս : Ամէն :

ԵԿԵՂԵՑԻԷՆ ԿԱՆ ԶԳՈՒԱԾԻ ԱՂՕԹՔ

Ո՛վ Եհովայ Աստուած, չեմ համարձակիր այսպիսի պարագայի մը տակ քու առջեւդ երեւնալ եւ զքեզ իմ Հայրս կոչել, քանզի քու շաւիղներէդ մոլորեցայ եւ քու անուանդ նախատինք բերի : Բայց, ո՛հ, որչափ քիչ կը զգամ իմ անօրէնութիւններս . որչափ շատ անգամ ինքզինքս մարդոց առջեւ արգարացունելու աշխատեցայ . քու եկեղեցւոյդ հասցուցած վնասներս որչափ պրզտիկ երեւցած են աչքիս, եւ քանիք քանի անգամ երբ քու ծառաներդ զիս կը խրատէին եւ կը յանդիմանէին, զանոնք իրբեւ թշնամի համարեցի եւ անարգեցի : Բայց, ո՛վ Տէր, թէ-

եւ մարդոց առջեւ ինքզինքս արդարացունեմ, սակայն քու առջեւդ չեմ կրնար: Դուն սրտերը եւ երիկամունքը կը քննես եւ ծածուկ պահուածները ի լոյս կը հանես. բաց իմ հոգւոյս տէքերը որ ես ալ տեսնեմ իմ սրտիս բուն վիճակը. մի թողուր որ մահուան քունը քնանամ: Տէ՛ր, թէ եւ քու եկեղեցիէդ ձգուեցայ, սակայն շնորհէ որ քու երեսէդ ալ չձգուիմ:

Ո՛րչափ ուխտեր եւ որոշումներ ըրած եմ քու ծառաներուդ հետ քալելու եւ քեզի ծառայելու, բայց աւոնց վրայ հաստատ չկեցայ: Եւ հիմա քանի որ քու առջեւդ կը խօսիմ, կը սքանչանամ որ տակաւին ողջ եմ եւ գետինը չբացուիր ու զիս կլլեր, կամ երկինքէն կրակ չիջներ ու զիս սպառեր քու ներկայութենէդ, մեղաւորաց ահ ու դող եւ ինծի յաւիտենական կորուստ պատճառելով: Ո՛վ Տէ՛ր, ես ուրիշներէն

լ՛նչ տարբերութիւն ունիմ որ մինչեւ հիմա ինծի համբերած ես. ո՛հ, թող այս քու համբերութիւնդ զիս ապաշխարութեան առաջնորդէ: Քու Սուրբ Հոգիդ նորէն պարգեւէ ինծի, որ նա ուղղէ իմ ընթացքս, որպէս զի ինչպէս որ ուրիշներուն գայթակղութիւն եղայ իմ մուրերելովս, ասկէ ետեւ Անոր շնորհքովը կարող ըլլամ շատերու դարձին միջոց ըլլալու:

Ո՛վ Աստուած, կը սոսկամ երբ կը խորհիմ թէ ոմանք քու եկեղեցիէդ ձգուելով՝ աւելի սրտերնին քարացած եւ քեզմէ հեռացած են. ո՛հ, չըլլայ թէ իմ ալ վիճակս այս ըլլայ. այլ՝ շնորհէ որ միշտ իմ մեղքերս տեսնելով դատապարտեմ ինքզինքս, եւ ամէն անգամ շունչ առնելու զգամ այդչափին ալ արժանի չըլլալս: Տուր որ իմ վրաս դրուած պատիժը համբերութեամբ եւ խոնարհութեամբ կրեմ, զիտնալով թէ արժանի եմ աւելի մեծ պատիժներու:

Ո՛վ Տէր, իմ սիրտս խռովեալ է, եւ չեմ գիտեր թէ ինչ խնդրելու եմ ըստ արժանւոյն, բայց դուն ինձմէ անհունապէս աւելի աղէկ գիտես ինչ որ պէտք է իմ փրկութեանս եւ քու փառքիդ համար, կը խնդրեմ որ ինձի պէտք եղածը շնորհես: Այս բոլոր բաները խնդրելու կը համարձակիմ մի միայն ինձի պէս մեղաւորներուն համար մեռնող եւ յարութիւն առնող Տէր Յիսուս Քրիստոսի անունովը եւ արժանաւորութեամբը: Ամէն:

### ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՌՆՈՂԻ ԱՂՕԹՔ

Քեզի ինչ հատուցանեմ, ո՛վ Տէր, քու ինձի բոլոր ըրած բարութեանցը փոխարէն. եւ մանաւանդ ինչ փոխարէն մատուցանեմ քու անքննելի եւ անհուն սիրոյդ համար զոր Քրիստոսով յայտնեցիր, մեր փրկութեանը համար քու սիրելի միածին

Որդիդ խաչին մահուանը մատնելով: Այս բանիս մէջ է սէրը՝ որ ոչ թէ մենք զքեզ սիրեցինք, հապա որ դուն զմեզ սիրեցիր, եւ քու Որդիդ խրկեցիր մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու: Գոհութիւն քու սուրբ անուանդ, ո՛վ Տէր, որ այս քու սիրոյդ մի միայն փոխարէն սա կը պահանջես՝ որ մենք մեր սիրտերը քեզի նուիրենք, Քրիստոսի նման ըլլանք, եւ օրէ օր քեզի ծառայութիւն ընենք:

Ո՛րչափ պատուական է Քրիստոսի մեզի տուած սա արտօնութիւնը որ զինքը սիրողներուն հետ իւր սեղանը շարուինք, եւ հացը ու զինին առնելով իւր խօսքին համեմատ իւր մահը յիշատակենք:

Ո՛վ Տէր, քու Սուրբ Հոգիդ ինձի պարգեւէ որ իմ անձս փորձեմ, եւ յետոյ այս հացէն ուտեմ եւ այս դաւածէն խմեմ, զիտնալով թէ ով որ անարժանաբար կ'ուտէ ու կը խմէ, իւր անձին դատապարտութիւնը

կ'ուտէ ու կը խմէ :

Կը խոստովանիմ թէ շատ անգամ անհոգութեամբ այս սուրբ սեղանին մօտեցած եմ, չխորհելով թէ ես խեղճ մեղաւոր մըն եմ, եւ թէ միայն Քրիստոսի անգին արիւնովը կրնամ փրկուիլ : Ո՛վ Տէր Աստուած, իմ մեղքերս ինձի տեսնել տուր, եւ անոնց համար զղջացող եւ ապաշխարող հոգի մը չնորհէ, որ ասկէ ետքը քու օգնութեամբ մեղքէ ետ կենամ եւ հաւատարմութեամբ քեզի ծառայութիւն ընեմ : Քրիստոսի սէրը թող զիս ստիպէ որ բոլոր սրտովս անձս անոր ընծայեմ, զիտնալով թէ նա ամենուն համար մեռաւ, որ կենդանի եղողները՝ ալ իրենց անձերուն կենդանի չըլլան, հապա Անոր՝ որ իրենց համար մեռաւ ու յարութիւն առաւ : Դուն որ ըսած ես թէ, թէ որ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած մըն է, հիները անցան եւ ահա ամէն բան նոր եղաւ,

ինձի նոր սիրտ մը տուր որ ասկէ ետքը բոլորովին նոր մարդ մը ըլլամ, եւ իմ բարի օրինակովս շատերը Քրիստոսի բերեմ :


Այսօր եզիր բոլոր անոնց հետ ուրոնք Քրիստոսի սեղանը պիտի չըրջապատեն, եւ անոր մահը պիտի յիշատակեն :

Եւ, ով Տէր Յիսուս, դուն որ ըսած ես, թէ Ուր որ երկու կամ երեք հոգի ժողոված ըլլան իմ անունովս՝ հոն եմ ես անոնց մէջը, այսօր քու սիրելի ներկայութիւնդ մեզ ամենուս չնորհէ. եւ ամենուն սրտերը քու սիրովդ ուրախացուր, որ մենք քու սեղանէդ զատուած ատեննիս՝ մեր բարի վարմունքովն ամէն մարդոց յայտնենք թէ զքեզ տեսած եւ քեզմէ չնորհք առած ենք : Ամէն :

Հաւատքս քեզ կը նայի,  
Ո՛վ Գառն Գողգոթայի :









0025754

2001 2013

« Ազգային գրադարան



NL0015154

*Handwritten signature*

